

ԱԶԱՏ ՕՐ

ԲԱՑԱՌԻԿ 2026 - ՀԱՅ ԴԱՏԻ 60-ԱՄԵԱԿ

ԵՐԵՒԱՆ 1965

ΥΠΟΣΤΗΡΙΞΑΤΕ
ΤΟ
ΑΡΜΕΝΙΚΟ ΖΗΤΗΜΑ
ΕΝΑ ΕΘΝΟΣ ΖΗΤΑ ΔΙΚΑΙΟΣΗ

ԱԹԷՆԷ 1975



ԱԶԱՏ ՕՐ

ԲԱՑԱՌԻԿ 2026
ՀԱՅ ԴԱՏԻ 60-ԱՄԵԱԿ



«ԱԶԱՏ ՕՐ» օրաթերթ

Խմբագրատուն՝ Արիստոթելու 8 – Քալիթեա 17671

Չեռ. 210 9575011 եւ 210 9521359

Տնօրէն՝ Մայր Չիլիկիրեան

Կայքէջ՝ www.azator.gr - e-mail: azatordaily@gmail.com

FB: AZAD OR Armenian Daily Newspaper of Greece

Դրամատան հաշիվ՝ ALPHA BANK - IBAN GR 4901 401 160 116 00 200 200 9080

Տարեկան բաժանորդագրութիւն՝ pdf եւ տպագիր 160 էւրօ, pdf կամ տպագիր 120 էւրօ

Թերթի էլեկտրոնային տարբերակը լոյս կը տեսնէ ամէն օր, Ուրբաթ օրերը կը տպուի:

«AZAT OR» (ΕΛΕΥΘΕΡΗ ΗΜΕΡΑ) Ημερήσια Αρμενική Εφημερίδα

Ιδιοκτησία: ΕλληνοΑρμενικό Φόρουμ- Μορφωτικό & Πολιτιστικό Σωματείο

Αριστοτέλους 8 – 17671 Καλλιθέα

Έκδοση - Διεύθυνση: Μάικ Τσιλιγκιριάν

Ιστοσελίδα: www.azator.gr - e-mail: azatordaily@gmail.com -

FB: AZAD OR Armenian Daily Newspaper of Greece

ALPHA BANK - IBAN GR 4901 401 160 116 00 200 200 9080

«AZAD OR» - Armenian daily newspaper of Greece - 8 Aristotelous 17671, Kallithea – GREECE

Tel. 210 9575011 & 210 9521359 e-mail: azatordaily@gmail.com, web site: www.azator.gr

FB: AZAD OR Armenian Daily Newspaper of Greece

ALPHA BANK - IBAN GR 4901 401 160 116 00 200 200 9080

ԲՈՎԱՆԱԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական	Էջ 4
30-ամեակ՝ Հելլեն Խորհրդարանին կողմէ Հայոց Տեղասպանութեան ճանաչման բանաձեւի ՀՈՒՓՍԻՄԷ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	Էջ 6
Հայ Դատ եւ Յունաստանի հայօճախը Անդրադարձ-ակնարկ, Հայ Դատի հոլովոյթին եւ Յունաստանի հայազաղութի գործունէութեան վրայ ՄԻՀՐԱՆ ՔԻՒՐՏՕՂԼԵԱՆ	Էջ 8
Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գործունէութիւնը Յունաստանի մէջ «1890-Էն մինչեւ 1924 թուականը» ԽԱԶԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ	Էջ 38
Դեպի Լորդոս ազգային տեսլական ՍԵՒԱԿ ՊԷԼԵԱՆ	Էջ 47
Հայոց Տեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման գործընթացի նշանակութիւնն այդ յանցագործութեան հետեւանքների յաղթահարման գործում ԱՐՄԷՆ ՄԱՐՈՒԹԵԱՆ	Էջ 50
Հ.Յ.Դ. Հայ Դատի Յանձնախումբի կազմութեան առաջին տարիները եւ հիմնական աշխատանքներ - (Հարցազրոյց) ԳԵՂԱՄ ԵԱՂՃԵԱՆ - ԹԱԳԻՈՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ	Էջ 56
Գաբրիէլ Լազեան Չինուորականն ու ազատամարտիկը, մտաւորականն ու քաղաքական միտքը, հայոց բանակի կազմաւորման, Հայ Դատի հետապնդման եւ պատմագիտութեան իսկական ռահվիրան ԱՆԻ ԱԲԻԿԵԱՆ	Էջ 60
Գործուի հայազաղութը Հայկական եւ օտար աղբիւրներու համաձայն ՅԱԿՈԲ ԾԷԼԱԼԵԱՆ	Էջ 68
Հայ երիտասարդութեան պահանջատիրական ուղին. լուսանկարչական վաւերագրութիւն	Էջ 75
Որմագիւնները՝ քարոզչական գրաւիչ «անցեալի» գործիք մը	Էջ 82
Η αρμενική παρουσία στην Αθήνα και στον Πειραιά στα τέλη του 19 ^{ου} αιώνα ΜΑΙΚ ΤΣΙΛΙΓΚΙΡΙΑΝ	Էջ 88
Η παρουσία των Αρμενίων στον Ελλαδικό χώρο από τον 5 ^ο μ.Χ. αιώνα έως το τέλος του Α΄ Παγκοσμίου Πολέμου ΑΣΜΠԵՏ ΜΑΝΤΖΙΚΙΑΝ (Μετάφραση και επιμέλεια ΑΡΑΞΗ ΑΠΕΛΙΑΝ-ΚΟΛΑΝΙΑΝ)	Էջ 94

Հայ դատի քաղաքական իրագործումներու ճանապարհին վրայ

Յունաստանի մէջ, Հայ դատի հետապնդման 60-ամեակը կը ներկայանայ որպէս պատմական հանգրուան մը, որ իր մէջ կը խտացնէ յունահայ գաղութի քաղաքական հասունացման ամբողջ ընթացքը: Վեց տասնամեակները եղան պայքարի, կազմակերպման եւ գաղափարական աշխատանքի տարիներ, որոնց ընթացքին յունահայութիւնը իր հասարակական ներկայութիւնը հարստացուց քաղաքական բովանդակութեամբ եւ ազգային իրաւունքներու պահանջատիրութեամբ:

Հայ դատի աշխատանքներու զարգացումը երկու հիմնական ուղղութիւններով ձեւաւորեց գաղութային կեանքը:

Առաջինը՝ քաղաքական մտածողութեան եւ ազգային պահանջատիրութեան զարգացումը ժողովրդային լայն շրջանակներուն մէջ:

Երկրորդը՝ քաղաքական գիտակցութեան վերածումը անհերքելի ձեռքբերումներու, որոնք իրենց դրոշմը դրին թէ՛ համայնական կեանքին, թէ՛ յունական քաղաքական ու պետական շրջանակներուն հետ մեր ունեցած յարաբերութիւններուն վրայ:

Առաջին ուղղութիւնը կը վերաբերի հայապահպանումի հասկացութեան վերաիմաստաւորման: Երկար ժամանակ, սփիւռքեան կեանքին մէջ հայապահպանութիւնը կը մեկնաբանուէր հիմնականօրէն մշակութային արժէքներու շրջագիծին մէջ՝ լեզու, դպրոց, եկեղեցի եւ մշակութային կեանք: Այս հիմնարար գործօնները անշուշտ մնացին անփոխարինելի, սակայն Հայ դատի հետապնդման կազմակերպուած աշխատանքը նոր հորիզոններ բացաւ գաղութի քաղաքական մտածողութեան առջեւ:

Հայապահպանութեան գաղափարը աստիճանաբար կապուեցաւ քաղաքական գիտակցութեան հետ:

Սերունդներու դաստիարակութիւնը սկսաւ առնչուիլ ազգային իրաւունքներու պաշտպանութեան, պատմական արդարութեան պահանջին եւ համահայկական քաղաքական մտածողութեան ձեւաւորումին հետ:

Այս գործընթացը յատկապէս կարեւոր դարձաւ յունահայ կազմակերպ երիտասարդութեան համար:

Իրերայաջորդ գաղափարական սերունդները

Հայ դատի աշխատանքներուն մէջ գտան ազգային ծառայութեան այն դաշտը, ուր կարելի եղաւ համադրել ու մէկ յայտարարի տակ առնել ազգային նուիրումն ու քաղաքական միտքի յառաջիադացքը, գաղութային կեանքին մէջ ձեւաւորելով մտաւոր եւ հասարակական նոր միջավայր մը:

Այսպէս, Հայ դատի հետապնդման տեսանկիւնէն, հայապահպանումը ստացաւ ամբողջական բովանդակութիւն: Ան կապուեցաւ հայութեան իրաւագրկուած վիճակին վերաբերող հարցերուն հետ՝ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման պայքարին, Թուրքիոյ կողմէ բռնագրաւուած հայապատկան հողերու պահանջին, Հայ դատի ուժական պայքարի նոր շղթայագերծումին, ինչպէս նաեւ Արցախի գոյապայքարի ստեղծած ազգային վերագարթումին: Այս հիմնախնդիրները դարձան յունահայութեան քաղաքական մտածողութեան անբաժան մասը եւ գաղութային կեանքի գաղափարական առանցքը:

Երկրորդ հիմնական ուղղութիւնը կը վերաբերի գաղափարական մեր շարժումին բերած քաղաքական արդիւնքներուն: Յունաստանի մէջ, Հ.Յ.Դաշնակցութեան Հայ դատի յանձնախումբի հետեւողական գործունեութիւնը տարիներու ընթացքին ստեղծեց այն ենթահողը, որուն շնորհիւ հայութեան պահանջատիրութիւնը աստիճանաբար տեղ գտաւ երկրի քաղաքական օրակարգէն ներս: Այս հողվոյթի ընթացքին, առանձնայատուկ նշանակութիւն ունեցաւ 1979-ին ՆԵԱ Չմիոնիի մէջ Հայոց ցեղասպանութեան յուշարձանի կանգնումը: Ան կը խորհրդանշէր յունահայութեան քաղաքական ներկայութեան հաստատումը եւ պատմական յիշողութեան հանրային ճանաչումը Յունաստանի հասարակական տարածքին մէջ, որուն արժէքը մինչեւ այսօր կը մնայ գերազանցապէս անփոխարինելի:

Նոյն գործընթացի երկրորդ եւ անելի հիմնական հանգրուանը եղաւ 1996-ի իրագործումը, երբ Հ.Յ.Դ. Հայ դատի յանձնախումբի հետեւողական քաղաքական գործունեութեան շնորհիւ, Յունաստանի խորհրդարանը պաշտօնապէս ճանչցաւ Հայոց ցեղասպանութեան իրաւացիութիւնը ու պատմական որոշումը վերածեց պետական օրէնքի: Այս քայլը կը հանդիսանայ յունահայութեան երկարատեւ քաղաքական աշխատանքի կարեւորագոյն



նուաճումներն մեկը: Միեւնոյն ժամանակ, վկայութիւն մըն է աջակցութեան ու բարեկամութեան մասին, որ յունական քաղաքական աշխարհին ու հասարակութիւնը կը ցուցաբերեն հայ ժողովուրդի արդար պահանջներուն նկատմամբ:

Այս եւ տակաւին չյիշատակուած բազմատեսակ իրագործումները ծնունդ առին կազմակերպուած աշխատանքի, քաղաքական հետեւողական ջանքերու, յարաբերական կապերու ամրացման եւ գաղութային համախմբումին շնորհիւ: Յունաստանի Հայ դատի յանձնախումբը տարիներ շարունակ գործեց որպէս այն կառոյցը, որուն շուրջ համախմբուեցաւ գաղութը՝ միաւորելով մեր քաղաքական կարողութիւնները մէկ ընդհանուր նպատակի ծառայութեան մէջ:

Այսօր, երբ յունահայութիւնը կը նշէ Հայ դատի հետապնդման վաթսունամեակը Յունաստանի մէջ, անհրաժեշտ է դիտել այդ ճանապարհը սերունդներու շարունակականութեան տեսանկիւնէն: Ժամանակները հիմնովին փոխուած են, քաղաքական պայմանները՝ եւս: Սակայն, Հայ դատի եւ մեր անժամանցելի իրաւունքներու հետապնդման նշանակութիւնը կը մնայ կենսական:

Յունաստանը հայ ժողովուրդին համար կը շարունակէ մնալ դաշնակից եւ եղբայրակից երկիր մը: Երկու ժողովուրդները իրենց պատմութեան յաջորդական ժամանակներուն կրած են նոյն բնոյթի աղետներ եւ դիմագրուած են նոյնպի-

սի վտանգներ: Այս պատմական փորձառութիւնը ստեղծած է փոխադարձ ըմբռնումի այն հիմքը, որուն վրայ կարելի է զարգացնել ու խորացնել քաղաքական գործակցութիւնը երկկողմանի պետական մակարդակի վրայ, բայց մանաւանդ գաղութային ներուժը ի սպաս դնելով քաղաքական յարաբերութիւններու արդիւնաւորման մէջ:

Իրաւագրուած ժողովուրդներու դատը կը շարունակէ մնալ միջազգային իրաւունքի ամենէն հրատապ ու կենսական հարցերէն մեկը:

Այս իրողութիւնը անելի կը խորացնէ Հայ դատի հետապնդման անհրաժեշտութիւնը: Արդարութեան համար մղուած պայքարը կը պահանջէ կազմակերպուած աշխատանք, քաղաքական համակարգուած քայլեր եւ գաղութային համախմբուածութիւն:

Այս համոզումով, յունահայութիւնը կը շարունակէ իր ճանապարհը՝ հաւատարիմ մնալով այն սկզբունքին, թէ պատմական արդարութիւնը կը պահանջէ մշտական պայքար եւ ազգային գիտակցութեան հետեւողական զարգացում:

Նշանակալից յուշապատումը վառ պահելու նախանձախնդրութեամբ, «Ազատ Օր»-ին կողմէ յունահայ հասարակութեան կը հրամցուի ներկայ բացառիկ հատորը՝ որպէս պատմական յիշողութիւն եւ Հայ դատի ձեռքբերումներու ապագայ ուղիները ձեւաւորելու քաղաքական միտքի շտեմարան:



1996 - 2026


30ամեակ՝ Հելլեն խորհրդարանին կողմէ Հայոց Տեղասպանութեան ճանաչման բանաձեւի

ՀՈՒՓՍԻՄԷ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

1996-ի Յունաստանի խորհրդարանին կողմէ Հայոց Տեղասպանութեան պաշտօնական ճանաչումը, որը մեծ հպարտութիւն կը պատճառէ Յունահայութեան, ոչ միայն կարեւոր հանգրուան մըն էր հայ-յունական յարաբերութիւններուն եւ անոնց ապագային համար, այլ նաեւ կարեւոր ազդակ մը՝ արդարութեան միջազգային հետապնդման գործին մէջ:

30 տարիներ առաջ ձեռքբերուած պատմական այս որոշումը, արդիւնք էր երկարատեւ ու հետեւողական աշխատանքի, որ իրագործուեցաւ Հ.Յ.Դ. Յունաստանի Հայ Դատի Յանձնախումբին կողմէ: Յոյն խորհրդարանականներու հետ երկար ժամանակէ ի վեր գործադրուող հանդիպումները, անոնց հետեւողական իրազեկումը հայութիւնը յուզող ու տագնապեցնող բոլոր հարցերուն առնչութեամբ, նոյն պահուն՝ գաղութային մեր բոլոր կառույցներուն կողմէ ներգործութիւնը այս գիծին վրայ, իրենց յաջող աւարտը ունեցան, երբ Հելլեն խորհրդարանը միաձայնութեամբ որոշեց ընդունիլ Հայոց Տեղասպանութիւնը ճանչցող եւ Թուրքիան դատապարտող բանաձեւը: Միաձայնութեան երեւոյթը պէտք է ըսել որ բաւական հազուադէպ է Յունաստանի քաղաքական կեանքին մէջ, բայց Հայոց Տեղասպանութեան ճանաչումը եւ հայ ժողովուրդի պատմութիւնը միշտ որպէս հարազատ հարց դիտուած է յոյն հասարակութեան կողմէ: Հայ եւ յոյն երկու ժողովուրդներու բախտակից զուգորդութիւնը, Թուրքիան որպէս ծաւալապաշտ եւ ցեղասպան երկիր ըլլալու իրողութիւնը, նոյն թեման է, որ ժամանակին կը տագնապեցնէր եւ հիմա ալ կը շարունակէ մտահոգել Յունաստանի պետութիւնն ու յոյն ժողովուրդը: Այս՝ «բախտակից» ժողովուրդ ըլլալու հանգամանքը եւ իրարու ցարը հասկնալու իրողութիւնը՝ այն ազդակներէն է, որ միշտ քով քովի պահած է հայ եւ յոյն ժողովուրդը: Նուազ չէ նշանակութիւնը հազարամեայ մշակոյթի եւ քաղաքակրթութեան պահած ըլլալու իրողութեան, որ միշտ յարգանք եւ սեր ներբերած է երկու ժողովուրդներու կեանքին մէջ:

Հելլեն խորհրդարանի ճանաչման բանաձեւերէն, քայլ մը անդին երթալով, եւ Յունաստանի պետութեան օրէնք ճշդելով Ապրիլ 24-ին իւրաքանչիւր տարի Տեղասպանութեան նշումի պարտադրանքը: Ատիկէի, Թեսաղոնիկէի եւ Թրակիոյ մարզպե-



տութիւններու գործակցութեամբ 30 տարի շարունակաբար հելլեն պետութիւնը կը գործակցի եւ համակազմակերպող կը դառնայ Հ.Յ.Դ. Հայ Դատի Յանձնախումբին հետ, այս երեք շրջաններէն ներս:

N.2397/1996 օրէնքի թիւը կրող 1996-ի Ապրիլ 25-ին ընդունուած որոշումը հազիւ երկու յօդուած կը պարբակէ:

Առաջին յօդուածը կը ճշդէ թէ 24 Ապրիլը կը ճշդուի որպէս յիշատակումի օր, ապա երկրորդ յօդուածով կը յստականայ թէ Հայոց Տեղասպանութեան զոհերու յիշատակին յարգանքի տուրքը պէտք է որպէս յիշեցում գործէ մարդկութեան համար, 20-րդ դարու ընթացքին կատարուած ամէնէն դաժան ոճիւրհիւն դէմ: Որպէս հիմք գործեց Աստուծոյ Սամարասի կողմէ ներկայացուած նախագիծը, որը որդեգրուեցաւ իր ամբողջութեան մէջ:

Բանաձեւը քաղաքական լուրջ կշիռ ունեցաւ: Առաջին հերթին կարեւոր էր անոր միջազգային ազդեցութիւնը, ուր Յունաստանը՝ որպէս Եւրոպական Միութեան եւ ՆԱՅՕ-ի անդամ երկիր, այս քայլով ազդանշանը կուտար միջազգային ընտանիքին, թէ պատմական ճշմարտութիւնը կարելի չէ զոհել քաղաքական շահերուն առջեւ: Միաժամանակ, պատգամ մըն էր Թուրքիոյ հանդէպ, որու հետ Յունաստանի յարաբերութիւնները ծայր աստիճան լարուած եւ բարդ դարձած էին նոյն տարուայ Յունուարին՝ Իմիայի կղզեխում-



ΕΦΗΜΕΡΙΣ ΤΗΣ ΚΥΒΕΡΝΗΣΕΩΣ

ΤΗΣ ΕΛΛΗΝΙΚΗΣ ΔΗΜΟΚΡΑΤΙΑΣ

ΤΕΥΧΟΣ ΠΡΩΤΟ

Αρ. Φύλλου 144

7 Ιουλίου 1997

ΠΕΡΙΕΧΟΜΕΝΑ

ΠΡΟΕΔΡΙΚΑ ΔΙΑΤΑΓΜΑΤΑ

- 162 Οργάνωση εκδηλώσεων της ημέρας μνήμης της γενοκτονίας των Αρμενίων από την Τουρκία 1
- 163 Για την «οργάνωση, διάρθρωση και λειτουργία της Διεύθυνσης Πολιτικής Σχεδίασης Έκτακτης Ανάγκης (ΠΣΕΑ) του Υπουργείου Τύπου και Μέσων Μαζικής Ενημέρωσης, τη στελέχυσή της και τα ειδικά προσόντα του προσωπικού της» 2

ΔΙΟΡΘΩΣΕΙΣ ΣΦΑΛΜΑΤΩΝ

- Διορθώσεις σφαλμάτων στο Π.Δ. 91/1997 αρμοδιότητας Υπουργείου Εθν. Παιδείας και Θρησκευμάτων Διορθώσεις σφαλμάτων στο Π.Δ. 114/97 αρμοδιότητας Υπουργείου Εμπορικής Ναυτιλίας 3
- Διορθώσεις σφαλμάτων στο Π.Δ. 113/97 αρμοδιότητας Υπουργείου Εμπορικής Ναυτιλίας 4
- Διορθώσεις σφαλμάτων στο Π.Δ. 120/97 αρμοδιότητας Υπουργείου Εμπορικής Ναυτιλίας 5
- Διορθώσεις σφαλμάτων στο Π.Δ. 86/97 αρμοδιότητας Υπουργείου Εμπορικής Ναυτιλίας 6
- Διορθώσεις σφαλμάτων στο Π.Δ. 86/97 αρμοδιότητας Υπουργείου Εμπορικής Ναυτιλίας 7
- Διόρθωση σφάλματος στις διορθώσεις σφαλμάτων του αριθ. 50 Π.Δ./τος με θέμα «περί του εκπαιδευτικού προσωπικού του Κέντρου Επιμόρφωσης Στελεχών Εμπορικού Ναυτικού Ραδιοηλεκτρονικών - Ραδιοοπικοινωνιών (ΚΕΣΕΝ Ρ/Η-Ρ/Ε)» 8
- Διορθώσεις σφαλμάτων στο Π.Δ. 63/97 αρμοδιότητας Υπουργείου Εμπορικής Ναυτιλίας 9

ΠΡΟΕΔΡΙΚΑ ΔΙΑΤΑΓΜΑΤΑ

ΠΡΟΕΔΡΙΚΟ ΔΙΑΤΑΓΜΑ ΥΠ' ΑΡΙΘ. 162 (1)

Οργάνωση εκδηλώσεων της ημέρας μνήμης της γενοκτονίας των Αρμενίων από την Τουρκία.

Ο ΠΡΟΕΔΡΟΣ ΤΗΣ ΕΛΛΗΝΙΚΗΣ ΔΗΜΟΚΡΑΤΙΑΣ

Έχοντας υπόψη:

- 1. Τη διάταξη του άρθρου 2 του Ν. 2397/1996 (Α' 80) «Η 24η Απριλίου καθιερώνεται ως ημέρα μνήμης της γενοκτονίας των Αρμενίων από την Τουρκία».

- 2. Τη διάταξη του άρθρου 27 του Ν. 2081/1992 (Α' 154).
- 3. Τις από 3.7.1996 γνώμες του Εθνικού Συμβουλίου της Μητρόπολης των εν Ελλάδι Ορθόδοξων Αρμενίων και της Αρμενικής Εθνικής Επιτροπής Ελλάδος.
- 4. Το γεγονός ότι από τις διατάξεις του παρόντος διατάγματος δεν προκαλείται δαπάνη σε βάρος του Κρατικού Προϋπολογισμού.
- 5. Τις 474/1996 και 192/1997 γνωμοδοτήσεις του Συμβουλίου της Επικρατείας.
- 6. Την ΔΙΔΚ/Φ.44.1/21566/10.10.1996 Κοινή Απόφαση του Πρωθυπουργού και του Υπουργού Εσωτερικών, Δημόσιας Διοίκησης και Αποκέντρωσης (Β' 932), μετά από πρόταση του Υφυπουργού Εσωτερικών, Δημόσιας Διοίκησης και Αποκέντρωσης, αποφασίζουμε:

Άρθρο 1

Ορίζεται η 24η Απριλίου ως η μέρα μνήμης της γενοκτονίας των Αρμενίων από την Τουρκία (άρθρο 1 του Ν. 2397/1996 Α' 80).

Άρθρο 2

Οι εκδηλώσεις μνήμης περιλαμβάνουν, τέλεση μνημόσυνου στο χώρο του μνημείου της Αρμενικής Γενοκτονίας στη πλατεία Χρυσοστόμου Σιμόννης στο Δήμο Νέας Σιμόννης, στην Αρμενική Ορθόδοξη εκκλησία της ΠΑΝΑΓΙΑΣ στη Θεσσαλονίκη και στην Αρμενική Ορθόδοξη εκκλησία της ΠΑΝΑΓΙΑΣ στην Ξάνθη, ομιλίες και κατάθεση στεφάνων από το Γενικό Γραμματέα της Περιφέρειας και από εκπροσώπους της τοπικής αυτοδιοίκησης και της Αρμενικής Κοινότητας.

Άρθρο 3

Το πρόγραμμα των εκδηλώσεων μνήμης καταρτίζεται με απόφαση του οικείου νομάρχη, σε συνεργασία με το Εθνικό Συμβούλιο της Μητρόπολης των εν Ελλάδι Ορθόδοξων Αρμενίων.

Στον Υφυπουργό Εσωτερικών, Δημόσιας Διοίκησης και Αποκέντρωσης αναθέτουμε τη δημοσίευση και εκτέλεση του παρόντος διατάγματος.

Αθήνα, 10 Ιουνίου 1997

Ο ΠΡΟΕΔΡΟΣ ΤΗΣ ΔΗΜΟΚΡΑΤΙΑΣ

ΚΩΝΣΤΑΝΤΙΝΟΣ ΣΤΕΦΑΝΟΠΟΥΛΟΣ

Ο ΥΦΥΠΟΥΡΓΟΣ ΕΣΩΤΕΡΙΚΩΝ, ΔΗΜΟΣΙΑΣ ΔΙΟΙΚΗΣΗΣ ΚΑΙ ΑΠΟΚΕΝΤΡΩΣΗΣ

Λ. ΠΑΠΑΔΗΜΑΣ

բիւ վրայ թրքական յարձակման հետեւանքով:

Թրքական կողմէ արձագանգը 1996-ի բանաձեւին եղաւ խիստ բացասական եւ դիւանագիտական լարուածութիւն յառաջացուց: Յունաստան մնաց անդրդուելի, հակառակ Թուրքիոյ սպառնալիքներուն, դիւանագիտական բողոքներուն, պատմութեան խեղաթիւրման մեղադրանքներուն, Լոյսիսկ տնտեսական եւ քաղաքական հետեւանքներով սպառնալիքներու հնչումին:


Յունաստան հաստատ մնաց Թուրքիոյ ցեղասպանական քաղաքականութիւնը բացայայտելու իր որոշումին վրայ եւ երկու տարի ետք ճանչցաւ Նաեւ Փոքր Ասիոյ Քրիստոնեայ ժողովուրդներու դէմ Թուրքիոյ գործադրած ցեղասպանութեան պատմական փաստը: Ասոնց խիստորած էր Պոնտոսի յոյներու ցեղասպանութեան ճանաչումը: Յոյն քաղաքական գործիչները սկիզբէն կը հաւատային թէ Պոնտոսի յոյներու եւ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումները պաշտպանական քայլեր էին սե-

փական պատմութեան եւ յոյն ժողովուրդի արժանապատուութեան համար:

Կ'արժէ նշել Նաեւ Կիպրոսի խորհրդարանին կողմէ ցեղասպանութեան ճանաչումը, որ Նախորդած էր 1975-ին, Կիպրական խորհրդարանի թիւ 36 բանաձեւով, որը կը հանդիսանար Եւրոպայի մէջ առաջին ճանաչումը եւ երկրորդը՝ համաշխարհային առումով:

Պէտք է շեշտել, թէ պատմական այս ճանաչումները հիմք հանդիսացան Հայաստան-Յունաստան եւ Կիպրոս եռակողմ ռազմավարական գործակցութեան համար, որը հետագային զարգացաւ եւ ընդգրկեց բազմաթիւ բնագաւառներ: Յունաստանի եւ Կիպրոսի կողմէ Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւերը, ինչպէս Նաեւ Հայաստանի կողմէ Պոնտոսի յոյներու ցեղասպանութեան ճանաչումը՝ խորհրդանշական քայլեր էին, որ ցոյց տուին թէ երեք երկիրները կը գործեն միասնական ճակատով՝ ընդդէմ թրքական ծաւալապաշտութեան:

ՀԱՅ ԴԱՏ



ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅՕՃԱԽԸ

Անդրադարձ-ակնարկ, Հայ դատի հոլովոյթին եւ Յունաստանի հայագաղութի գործունեութեան վրայ

ՄԻՋՐԱՆ ՔԻՒՐՏՈՂԵԱՆ

ՆԵՐԱՃԱԿԱՆ

Ներկայ աշխատութիւնը նպատակ ունի որոշ չափով լոյս մը սփռելու Հայ դատի հոլովոյթին եւ այդ ուղղութեամբ յունաստանի օճախի ծաւալած աշխատանքին վրայ, միաժամանակ անդրադարձալով անոր նախաձեռնութիւններուն, իրագործումներուն եւ արձանագրած յաջողութիւններուն:

Մեր այս անդրադարձը պիտի կեդրոնանայ վերջին յիսնամեակի ընթացքին Յունաստանի մէջ կատարուած ընդգծելի ու յատկանշական աշխատանքներուն եւ պարզուած երեւոյթներուն վրայ՝ Հայ դատը հելլէն հասարակութեան, քաղաքական ու մտաւորական շրջանակներուն ծանօթացնելու ընդհանուր ճիգին մէջ: Մանրամասնեալ տեղեկատուութիւն կատարել չէ մեր նպատակը, այլ պարզապէս՝ յիշողութեամբ եւ ձեռքի տակ գտնուող որոշ արձանագրութեանց վրայ հիմնուած՝ կ'ուզենք ցուցահանել ու վերլուծել ուշագրաւ երեւոյթներ, որոնք, ըստ մեզի, իրենց հանգամանքով ու տարողութեամբ, յատկանշական բնոյթ կը կրեն եւ դուրս կուգան ընթացիկ աշխատանքներու շրջագծէն:

Առաջին առիթով, անտեղի չենք գտներ ընդգծելու հետեւեալները.-

Ա.- Որեւէ հայօճախի կրթական, մշակութային, բարեսիրական, մարզական, կրօնական եւ վերջապէս հասարակական կեանքի այլազան մարզերու մէջ ցուցաբերած աշխուժութիւնն ու արձանագրած գործունեութիւնը համապատասխան եղան տուեալ գաղութի ներքին կազմակերպութեան եւ ուժակաւորութեան, իսկ ձեռք բերուած արդիւնքը ընդհանրապէս կախեալ մնաց պատասխանատու պաշտօններու վրայ գտնուողներու մտահորիզոնէն, անոնց նախաձեռնելու կարողականութենէն ու ոգիէն: Հայօճախներու ներհամայնքային աշխատանքներու թափը քիչ ազդուեցաւ այլ հայագաղութներու աշխատանքներու թափէն ու ծաւալէն:

Բ.- Բոլորովին տարբեր եղաւ պարագան Հայ դատին, որու նպատակը համագային ըլլալով, անհրաժեշտաբար աշխատանքները առաջ մղուեցան ընդհանրական-համահայկական յայտագրի մը հիման վրայ, գործերը համադրուեցան կեդրոնէ մը եւ աշխատանքի բնոյթը ընդգրկելով քաղա-

քական, քարոզչական, յարաբերական եւ ցուցական մարզերը, բնականաբար անոնց արձագանքը տարածուեցաւ երկրէ-երկիր, ստացաւ համագային տարողութիւն եւ ներգործեց հայօճախներու գործունեութեան վրայ:

Գ.- Հայ դատի ճակատին վրայ տարուած բազմերես պայքարը ոչ մէկ կասկած, որ կենդանութիւն բերաւ համայնքային գործօններուն եւ թարմացնող ներարկում մը եղաւ անոնց գործունեութեան համար, գրեթէ ամէն մարզի մէջ:

Դ.- Փաստօրէն, հայօճախները իրենց նկարագիրը, իւրայատկութիւնն ու անհատականութիւնը ձեւաւորեցին եւ ներքին ուժակաւորութիւնը (*dynamism*) կռանեցին շտրիի: Հայ դատի պայքարին: Նախաձեռնուած քաղաքական ու յարաբերական աշխատանքները մղում տուին, որ անոնք սնուցեն հաշուառելի ազդակի վերածուելու ճգտում թէ՛ ներքին տեղական մակարդակի եւ թէ՛ համահայկական հետապնդումներու գծով՝ միջազգային բեմի վրայ:

Ե.- Եւ վերջապէս ու առանձնաբար ընդգծելի իրողութիւնը եղաւ այն, որ Հայ դատի նպատակին վրայ համահայկական սեւեռումը ամրացուց բազմաշերտ սփիւռքի մէկ ամբողջութիւն ըլլալու գիտակցութիւնը եւ գործնապէս ալ նպաստեց, որ հայագաղութները անշատաբար ու ապակեդրոն գործելով հանդերձ, իրենք զիրենք նկատեն մէկ օղակը ամբողջութեան մը, որ հայութիւնն է եւ որ ունի ազգային միեւնոյն դատը, որուն պահանջատէր ըլլալու համար անհրաժեշտ են քաղաքական աշխատանքները, ինչպէս նաեւ ներազգային այլ տեսակի վեճերն ու անհամաձայնութիւնները երկրորդական գծի վրայ դնելու խնդիրը:

Այս գիտակցութիւնը մղում տուաւ, որ հայագաղութները Հայ դատի հետապնդման իրենց գործունեութիւնը համադրեն՝ աշխատանքի համասփիւռքեան յայտագրի մը հիման վրայ: Որով, տուեալ հայօճախի մը մէջ որեւէ իրագործում համանման եղաւ միւսներու իրագործումներուն եւ կամ կազմեց անոնց լրացումը: Որով, հայօճախներու նախաձեռնութիւնները իրարու ընդելուզուած եւ զիրար ամբողջացնող գործունեութեան մը տարբեր տարբեր երեսները հանդիսացան:

ՍՓԻՒՌՔԻ ՄԱՍԻՆ

Սփիւռքահայութիւնը հայութեան ամբողջութիւնն է, որ կ'ապրի Հայաստանէն դուրս, աշխարհի զանազան երկիրներու մէջ:

Շատ հին ժամանակներէն եւ զանազան պատճառներով հայեր ձգած են իրենց հայրենիքը եւ գաղթած օտար երկիրներ: Գաղթի պատճառները եղած են ամէտուրը, հարստութեանց փնտռումը, ուսումը, պատերազմներէ ու գերութենէ փախուստը, բռնագաղթը եւ տեղահանութիւնը: Պատմութեան ընթացքին, տարբեր երկիրներ հաստատուած հայեր եկեղեցիի հովանիին տակ կրցած են ունենալ ազգային կազմակերպուած կեանք՝ գործող վարչութիւններով: Անոնցմէ շատեր ժամանակի մաշումին չեն դիմացած եւ աստիճանաբար ձուլուած են տեղացի ժողովուրդներուն մէջ, պարպուած ըլլալով Հայաստան վերադառնալու կամ Հայրենիքի համար պայքարելու քաղաքական իտեալէն:

Սփիւռքահայութիւնը իր ներկայ պատկերը ստացաւ համիտեան ջարդերուն եւ յատկապէս 1915-16 թուականներու Թուրքիոյ կազմակերպած ցեղասպանութեան ու Կիլիկիոյ պարպումին հետեանքով, երբ հարիւր հազարաւոր հայեր արտուեցան եւ պարտադիր գաղթականի ցուպը առած՝ շատ թշուառ ու խղճալի պայմաններու մէջ հայրենասիւն ըլլալով հաստատուեցան Ամերիկա, Ֆրանսա, Սուրիա, Լիբանան, արաբական ու պալքանեան տարբեր երկիրներ, մէկ խօսքով աշխարհի զանազան կողմերը:

Ներկայիս, հայութեան ընդհանուր թիւը կը հաշուէ շուրջ 9.000.000-10.000.000, որուն գրեթէ 2/3-ը կը կազմէ սփիւռքահայութիւնը:

Ծանօթագրութիւն. ա) Վերոգրեալ թիւը ենթադրական է, քանի որ ցարդ վիճակագրական յատուկ արձանագրութիւններով հայահամար չէ կատարուած:

բ) Հայաստանի վերանկախացումէն ու Ղարաբաղեան ազատագրական պատերազմէն ետք՝ հայութեան տեղաբաշխման քարտէսը փոփոխութեան ենթարկուեցաւ: Ատրպէյճանէն աւելի քան երեք հարիւր հազար հայեր Հայաստան



Հայկական դարմանատուն Փակրաթի-Քեսարիանի շրջանին մէջ

փախան, իսկ Հայաստանէն արտագաղթողներու թիւին շատ մեծ համեմատութիւններով սփիւռքի հայօճախներու դիմագիծը ստացաւ նոր որակ ու բովանդակութիւն:

գ) Մեծ եղեռնէն ու արքային վերջ, Թուրքիոյ տարածքին, յատկապէս Արեւմտահայաստանի մէջ մնացած հայերը, գրկուած հայակրթութենէ ու եկեղեցիէ, բռնութիւններու ենթարկուելով թրջացուած են կամ քիւրտացուած:

Անհիմն չէ ենթադրել, որ անոնց թիւը կը տարուբերի մէկուկէսէն երկու միլիոնի շուրջ:

ՍՓԻՒՐՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Սփիւռքահայութեան կազմակերպումը գլխաւորաբար կարելի է բնորոշել չորս փուլերով: Նոյն հողովոյթովն է, որ ընթացաւ նաեւ յունահայ համայնքը՝ իր ազգային-միութենական կեանքով եւ Հայ դատի ճակատին վրայ՝ քաղաքական գործունէութեամբ:

Շեւտագայ էջերուն մէջ պիտի անդրադառնանք այդ փուլերուն, շեշտը դնելով Յունաստանի հայօճախի վերջին հինգ տասնամեակներու ծաւալած գործունէութեան վրայ:

1.- ՍՓԻՒՐՔԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ (մինչեւ 1965)

Ջարդի ու տեղահանութեան հետեանքով աշխարհի զանազան երկիրներու մէջ ցրուած հայեր՝ անտուն, անգործ ու անծանօթ տեղական լեզուներու, բնական էր, որ ապրէին թշուառ պայմաններու տակ, օրուան հացի կարօտ եւ թիթեղեայ հիւղաւաններու (քէմքերու) մէջ: Այդ ահռելի վիճակին մէջ իսկ, անոնց առաջին գործը եղաւ իրենց զաւակներուն հայակրթութեան համար թիթեղեայ դպրոցներ հաստատել եւ եկեղեցիներ կանգնել ու անոնց շուրջ բոլորուելով համայնքներ դառնալ ու համայնքային կեանք կազմակեր-



Հարբութ քաղաքը լքած՝ հայ զանգուածները արքայի ճամբուն վրայ (1915)



Կաթողիկե համայնքի նախակրթական դպրոց (1930)

պել՝ այլազան մարզի աշխուժություններով:

Համախումբ կեանքը խթան դարձաւ, որ աշխուժանան կուսակցութիւններն ու միութիւնները, որոնք տարիներու երկայնքին հետզհետէ հայ մամուլի ցանց ստեղծեցին սփիւռքի տարածքին, կառուցեցին ակումբներ, մշակոյթի տուններ, առաջնորդարաններ եւ այլն:

Որքան որ տարիները կ'անցնէին, հայերը իրենց հաստատուած երկիրներու մէջ տնտեսական, գործի եւ ուսման տեսակէտէ անհատական յաջողութիւններ կ'ունենային եւ հայազաղութներու պատկերը կը փոխուէր, թիթեղեայ տունները կը փոխարինուէին արդիական կառուցումներով եւ նորահաս սերունդները շփման մէջ մտնելով տեղացիներուն հետ, իրենց ազգային դիմագիծը կորսնցնելու վտանգին կ'ենթարկուէին, յատկապէս ամերիկեան եւ եւրոպական երկիրներու մէջ: Տնտեսական բարելաւումը վերջ մը կը դնէր համախումբ կեանքին եւ վտանգ մը կը դառնար ազգային դիմագծի պահպանման համար: Անցնող այդ տարիներու ընթացքին, գաղութներու նպատակը դարձած էր իրենց դպրոցներուն եւ եկեղեցիներուն պահպանումը եւ այդ ուղղութեամբ էր միայն, որ կ'աշխատէին գործող կուսակցութիւններն ու միութիւնները: Տարին մէկ անգամ, Ապրիլ 24-ի օրը, եկեղեցիներուն մէջ կը սգային Մեծ եղեռնի նահատակներուն յիշատակը:

Այս ժամանակաշրջանին, 1956-ին, եկեղեցական վեճեր եկան խռովելու սփիւռքահայութեան կեանքը՝ բոլոր գաղութներու մէջ: Կիլիկիոյ աթոռին համար կաթողիկոս ընտրուեցաւ Չարեհ Ա. Փայասլեան: Այս ընտրութեան համաձայն չեղաւ Էջմիածնի կաթողիկոսը՝ Վազգէն Ա., որ կ'ուզէր Էջմիածնի գերակայութիւնը Կիլիկիոյ աթոռին վրայ: Կաթողիկոսական այս երկու դարաւոր աթոռները իրարու դէմ էլան եւ հայկական քաղաքական կուսակցութիւնները այս կամ այն կողմը բռնելով, տարիներ շարունակ պայքար մղեցին իրարու դէմ: Հայ ժողովուրդը եւ եկեղեցականները երկու հակադիր դիրքեր բռնելով վեճերու մէջ մտան, պայքարին տալով ազգավնաս ծաւալ:

Այդ պայքարը որոշ չափով հետեւանք էր նաեւ Արեւմուտքի եւ Խորհրդային միութեան միջեւ

գոյութիւն ունեցող հակամարտութեան, որուն տրուած էր «պաղ պատերազմ» բացատրութիւնը:

Յունահայութիւնն ալ անմասն չմնաց ներագային այդ պայքարէն: Եկեղեցական վեճերը վերածուեցան հակամարտութեան եւ գաղութը բաժնեցին իրարամերժ երկու հատուածներու՝ Էջմիածնական եւ Անթիլիասական պիտակներու տակ:

Այդ հակամարտութիւնը եղաւ այնքան բուռն, որ Նոյնիսկ Մեծ եղեռնի յիսնամեակի համահայկական ձեռնարկները չկրցան քով-քովի բերել յունահայութեան անհաշտ երկու հատուածները: Որով, յունահայութեան յիսնամեակի կազմակերպման աշխատանքներուն մաս չկազմեց Էջմիածնական թելի հատուածը:

2 – ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՅԻՆԱՄԵԱԿԸ ԵՒ ՅԱՋՈՐԴՈՂ ՏԱՐԻՆԵՐԸ (1965-1975)

1965ին, Մեծ եղեռնի յիսնամեակին, սփիւռքահայութիւնը գիտակցական զարթոնում մը ունեցաւ գրեթէ բոլոր հայազաղութներու մէջ: Առաքելական, կաթողիկե եւ անտարանական հայ երեք համայնքներու հոգեւոր պետերու գործակցութեամբ եւ առաջնորդութեամբ, սփիւռքահայութեան բոլոր հատուածները համահայկական ելոյթներ ունեցան, ցոյցեր կազմակերպեցին ցեղասպան Թուրքիոյ դէմ եւ յուշագիրներ յղելով Հայ դատի լուծումը պահանջեցին:

Հայ առաքելական, կաթողիկե եւ անտարանական համայնքներու հոգեւոր պետերը՝ Խորէն Ա. կաթողիկոս, Իգնատիոս-Պետրոս Ժ2. կաթող. պատրիարք եւ վերապատուելի Յովհաննէս Ահարոնեան 1965-ին միասնաբար կոչ մը հրապարակեցին ուղղուած հայ ժողովուրդին, ուր միջի պայրոց կը յայտնէին. «...**Յիսնամեակի այս տարուան ընթացքին որոշած ենք հայ ազգին մեկուկէս միլիոն զոհերուն անմոռանալի յիշատակը պանծացնել եւ ոգեկոչել միասնական ոգիով եւ համահայկական տարողութեամբ...**» եւ կ'անելցնէին. «**Այսու կոչ կ'ուղղենք մեր բոլոր զաւակներուն անխտիր, որ ի սփիւռս աշխարհի, առաջնորդուիլ նոյն ոգիով եւ համահայկական**

Եւ եղբայրական այս հասկացողութեամբ կազմակերպել Ապրիլեան նահատակաց յիշատակի հանդիսութիւններ եւ անգամ մը եւս ցոյց տալ աշխարհին, որ հայ ժողովուրդը միասիրտ է ու միակամ...»:

Վերոյիշեալ կոչին հետեւելով, յունահայ գաղութի յարանուանութեանց հոգեւոր պետերը՝ առաջնորդ Սահակ արք. Այվազեան, կաթողիկէ վիճակաւոր Յ. Խանցեան ծայր. վարդապետ եւ ւեփտարանական համայնքի վերապատուելի Գր. ՏԵՄիրճեան Նոյնանման բովանդակութեամբ կոչ մը հրատարակելով ծանուցին կազմութիւնը յիսամեակի յանձնախումբի մը, բաղկացած հետեւեալներէ՝ տեարք Գաբրիէլ Վարժապետեան՝ ատենապետ, Ասատուր Թոփալեան՝ փոխատենապետ, Հրանդ Ադամեան՝ ատենադպիր, Երուանդ Մալուկեան՝ փոխատենադպիր, Ժաք Չաքարեան՝ գանձապահ, խորհրդական անդամներ՝ տեարք Ներսէս Յակոբեան, տոքթ. Եղիա Արշակունի, Օսնիկ Չաքարեան, Սուրէն Ճենազեան, Ժիրայր Ծանիկեան, Չաւէն Թոքաթլեան, Յարութիւն Գոհարունի, Յարութիւն Մեքթուպեան, Տիգրան Արշակունի, Լեւոն Գայեան:

Յանձնախումբը յարակից ձեռնարկներ կազմակերպելէ ետք, լծուելով աշխատանքի՝ յիսամեակի կեդրոնական ու եզրափակիչ յուշատօնին համար յաջողած էր ապահովել հովանաւորութիւնը Աթէնքի եւ համայն Յունաստանի արքեպիսկոպոս Տ. Խրիստոսոմոսի եւ ներկայութիւնը՝ կառավարութեան ներկայացուցիչին, յանձինս կրթական ու կրօնից փոխնախարար Ե. Միլոնասի, ինչպէս նաեւ բազմաթիւ քաղաքական, կրօնական ու ակադեմական անձնաւորութեանց:

Համակրանքի հեռագիրներ յղեցին օրուան վարչապետ պրն. Ե. Փափանտրէու, ներքին գործոց նախարար Ի. Տիրիմոքոս, Աթէնքի քաղաքապետ Պ. Փիթաս եւ բարձրաստիճան այլ անձնաւորութիւններ:

Ձեռնարկը տեղի ունեցաւ 1965 Մայիս 23ին, Օրֆէու սրահին մէջ, աւելի քան չորս հազար հայորդիներու մասնակցութեամբ, որուն յաջորդեց դափնեպսակի գետեղում Անժանօթ Չինուորի յուշադամբանին:

Օրուան թղթակիցը ձեռնարկի նկարագրականին մէջ անդրադառնալով հանդիսութեան ծաւալին ու յաջորդող դափնեպսակի գետեղման արարողութեան, կը գրէր «...**նման ծովածաւալ բազմութիւն յունահայ գաղութի յետպատերազմեան տարեգրութեանց մէջ երբեք չէր տեսնուած...»:**

Նոյնպէս, եւ աւելի առաջ, 1965 Մայիս 9-ին, Թեսաղոնիկէի մէջ տեղի ունեցաւ հրապարակային յուշատօն, որուն ներկայ եղան կառավարական բարձրաստիճան պաշտօնատարներ, հելլէն մետրոպոլիտի ներկայացուցիչը, օտար կրօնապետեր, երեսփոխաններ, համալսարանի դասախօսներ, զինուորական ու ոստիկանական հրամանատարներ, օտար հիւպատոսներ, լրագրողներ, մտաւորականներ եւ քաղաքի գրեթէ ամբողջ հայութիւնը: Նոյն տարողութեամբ ձեռնարկներ կազմակերպուեցան սփիւռքի բոլոր հայազաղութներու մէջ:



Հայոց ցեղասպանութեան նիւթով հրատարակուած առաջին գրքիկներէն մին (1965)

Յիսամեակի այդ համահայկական ելոյթները եկան փաստելու, որ սփիւռքահայութիւնը բազմաշերտ ըլլալով հանդերձ՝ մէկ ամբողջութիւն է եւ ունի ազգային միեւնոյն դատը, որուն պահանջատէր ըլլալու համար անհրաժեշտ են քաղաքական աշխատանքները, ներազգային վեճերէն դուրս գալու ինդիքը եւ գաղութներու վերակառուցման հետամտութիւնը:

Սփիւռքահայութեան յիսամեակի ելոյթներուն զուգահեռ, Հայաստանի ժողովուրդն ալ ցոյցեր կատարելով Երեւանի փողոցներուն մէջ՝ հայկական հողերու ազատագրումը պահանջեց: Մէկուկէս միլիոն ծառեր տնկուեցան ի յիշատակ Եղեռնի մէկուկէս միլիոն նահատակներուն:

Այսպէս, ամբողջ աշխարհի մէջ ցրուած հայութիւնը իրարու միացաւ միեւնոյն նպատակով, որ Հայ դատն է:

Յիսամեակը սփիւռքի նորահաս սերունդին անդրադարձնել տուաւ, որ իրեն պարտադրուած է սփիւռքի կացութիւնը, որ ինք պարտականութիւններ ունի կատարելիք իր ազգային դատին համար: Այս գիտակցութիւնը մղում տուաւ, որ սփիւռքեան հայօճախները իրենց տեղական մտահոգութիւնները ունենալով հանդերձ, դուրս գան տեղայնական մտայնութիւններէ եւ համահայկական նպատակին շուրջ բոլորուին:

Յիսամեակը ազդանշանը կազմեց, որ սփիւռքի հայազաղութները լծուին ինքնակազմակերպման հսկայ ճիգի մը, դուրս գան կեթօյական կենսածնի հոգեբանութենէն, բացուին քաղաքական շրջանակներու եւ այժմեականացնեն Հայ դատի



Ապրիլեան զոհերու հոգեհանգիստ Աթէնքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ

պահանջատիրութիւնը:

Արձանագրեւք նաեւ, որ յիսամեակի վերափոխիչ շունչը դժբախտաբար չհամակեց ամբողջ յունահայութիւնը, որուն մէկ հատուածը չկարողանալով թօթափել եկեղեցական-թեմական վեճերու ստեղծած անհանդուրժողականութիւնը, ինքզինք առանձնացուց համայնքային տարողութեամբ տեղի ունեցած յիսամեակի նախածեռնութիւններէն:

Յիսամեակի յաջորդող տասնամեակին, Յունաստանի քաղաքական կացութիւնը ձեռնտու չեղաւ Հայ դատի հետապնդման աշխատանք տանելու տեսակէտէն: 1967ին, զինուորականներու կողմէ կազմակերպուած բռնահարուածը եւ իշխանութեան գրաւումը հետեւանք ունեցաւ, որ ամբողջ երկրի տարածքին մամուլը գրաքննութեան ենթարկուի, ազատ խօսքը, ցոյցերն ու հաւաքոյթները արգիլուին եւ քարոզչական միջոցառումները խափանուին:

Այդ դժուար տարիներուն, 1971ին, գաղութը յղացումը ունեցաւ Յունաստանի Անկախութեան 150-րդ տարեդարձին նուիրուած փառաշուք տօնակատարութիւն մը կազմակերպելու յունահայկական յայտագրով, Աթէնքի կեդրոնական սրահներէն REX-Քոթփոլիի մէջ, ուր ներկայ եղան եւ համակրական խօսքերով հանդէս եկան պետական ու եկեղեցական բարձրաստիճան պաշտօնատարներ: Այդ ձեռնարկին նախորդող ու յաջորդող շփումները ձեւով մը շարունակութիւնը կազմեցին՝ քաղաքական դէմքերու, մամուլյ ներկայացուցիչներու եւ մտաւորական շրջանակներու հետ յիսամեակին սկսած յարաբերութեանց:

Հելլէն շրջանակներ ներգրաւելու եւ անոնց բացուելու ցայտուն նախածեռնութիւն մը եղաւ ասպնջական Հելլադայի անկախութեան նուիրուած այդ տօնակատարութիւնը, որ ըստ ամենայնի յաջողութեամբ պսակուեցաւ՝ ամրապնդելով միաժամանակ հայ-յոյն փոխօգնութեան ու փոխհասկացողութեան մթնոլորտը:

Բռնատիրական վարչակարգի կաշկանդումի շրջանին իսկ, 1971էն մինչեւ 1978, Մայիս 28ի անկախութեան տարեդարձներուն, Հ.Յ.Դ. երիտասարդական միութեան կողմէ կազմակերպուեցաւ դափնեպսակի գետեղման համար թափօր, Միթրոփոլէոս հրապարակէն դէպի Սինտաղմա՝ Անժանօթ զինուորի դամբանը: Ամէն տարի կրկնուող այդ նախածեռնութիւնները յատկանշական եղան իբրեւ ցուցական ելոյթ ու ներքին քարոզչութիւն եւ մանաւանդ հանդիսացան աղուոր պատեհութիւններ մեր երիտասարդներուն համար, որ անոնք սնուցեն յարգանք ու խանդավառութիւն՝ ազգային արժէքներու նկատմամբ:

3. - ԵՂԵՆԻ ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿ ԵՒ ՅԱՋՈՐԴՈՂ ՏԱՐԻՆԵՐԸ (1975-1985)

1975 թուականը նոր անկիւնադարձ մը կազմեց ամբողջ սփիւռքահայութեան համար:

Յիսամեակի համահայկական շարժումը գլխաւորուած էր կրօնական պետերու կողմէ եւ ելոյթները առաւելաբար կը կրէին ոգեկոչական բնոյթ ու հոգեհանգստեան մթնոլորտ, մինչ 1975 թուականին, Մեծ եղեռնի վաթսուներեակին, հայ ժողովուրդը համայնքային-եկեղեցական մթնոլորտէն դուրս գալով՝ ուղղակի քաղաքական բնոյթ տուաւ Հայ դատի իր պահանջատիրութեան:

Սփիւռքահայութեան մէջ գործող քաղաքական երեք կուսակցութիւնները՝ Հ.Յ.Դաշնակցութիւնը, Ռամկավար Ազատական եւ Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնները գործակցեցան իրարու հետ եւ կազմելով «Ոգեկոչման Համահայկական Կեդրոնական Մարմին» մը, բոլոր հայազաղութներու մէջ զարկ տուին ցուցական-քարոզչական միջոցառումներու, սարքեցին մամուլյ ասուլիսներ, ներկայացուցին յուշագիրներ՝ ոչ միայն Մեծ եղեռնի դատապարտումը պահանջելով, այլ նաեւ յստակ դարձնելով ամբողջ աշխարհին, որ հայ ժողովուրդը աննահանջ պիտի պայքարի, մինչեւ որ Սեւրի Դաշնագիրը գործադրուի:

2 Սեպտեմբեր 1974ին, երեք կուսակցութիւնները միատեղ հրատարակեցին «Կոչ հայ ժողովուրդին», ուր ի միջի այլոց կ'ըսուէր.

«Վաթսուն տարի առաջ թրքական իշխանութիւնները կը կազմակերպէին քսաներորդ դարու առաջին ցեղասպանութիւնը՝ հայ ժողովուրդի զանգուածային ջարդն ու իր երեքհազարամեայ հայրենիքէն տեղահանութիւնը, հայութեան բնաջնջումով Հայկական հարցը վերջնականապէս թաղելու ծրագրեալ առաջադրանքով...»:

«...Մէկ կողմ դնելով այլ մարզերու մէջ զիրենք տարբերող քաղաքական եւ ընկերային ըմբռնումները, հայ ազգային երեք կուսակցութիւնները անհրաժեշտ կը գտնեն Եղեռնի վաթսուներեակի ոգեկոչումները կատարել միակամ եւ միատեղ՝ բոլոր այն գաղութներուն մէջ, ուր հայութիւնը կ'ապրի, կը յիշէ եւ արդարութիւն կը պահանջէ»:

«Վաթսունամեակը յարմարագոյն առիթն է՝ հաւաքական ոգեկոչումներով եւ միակամ ձեւով աշխարհին ներկայացնելու մեր բոլորին արդար



Բողոքի ու պահանջատիրության հաւաքներ 1970-1980ական թուականներուն

պահանջը. Արեւմտահայաստանի բռնագրաւուած հողերը վերադարձնել իրենց միակ իրաւատիրոջ՝ հայ ժողովուրդին...»:

«... Լաւագոյն ձեւով կազմակերպելու համար ոգեկոչումի եւ ազգային պահանջներու բանաձեւման աշխատանքները, երեք կուսակցութիւնները ի սփիւռս աշխարհի պիտի յառաջացնեն «Ոգեկոչումի Համազգային Կեդրոնական Մարմին» մը, որպէսզի ան կարենայ արտաքին աշխարհին առջեւ ներկայացնել համայն հայութիւնը եւ անոր անունով հրապարակ գայ՝ ուր որ անհրաժեշտ է...»:

Երեք կուսակցութեանց վերի կոչին յաջորդեց կազմութիւնը «Ոգեկոչական Համազգային Կեդրոնական Մարմին»-ին, որ իր կարգին 1975ին հանդէս եկաւ կոչով մը՝ «կոչ հայութեան», ուր ի միջի այլոց կը շեշտուէր.

«Այս Ապրիլին կը լրանայ վաթսուամեակը այն ցեղասպանութեան, որ գործադրուեցաւ հայ ժողովուրդին վրայ, թրքական կառավարութեան կողմէ, կանխաւ մտածուած ու ոճրային իր բոլոր մանրամասնութիւններով ծրագրուած ձեւով: «... Կիսադար մը ամբողջ մեր նահատակներուն ոգեկոչումը կատարուեցաւ սգաւոր մթնոլորտի մը մէջ, բայց Եղեռնի յիսնամեակին յայտնուեցաւ ոգի մը, որ դո՛ւրս կուգար այլեւս անզօր ողբի սահմանափակ իր շրջագիծէն ու մեր դատը կը վերածէր զուտ քաղաքական պահանջքի»:

Այս կոչերէն կարելի է եզրակացնել, որ առաւելաբար վաթսուամեակին ու անկէ ետքն էր, որ՝

ա.- «Զարդ» ու «Եղեռն» բառերու գործածութիւնը տեղի տուաւ միջազգայնօրէն բանաձեւուած ու դատապարտուած «ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ» տարագին, որ քաղաքական նշանակութիւն ու բովանդակութիւն ունի եւ իբրեւ պատժելի յանցանք՝ յետադարձ ուժով անժամանցելի է:

բ.- Հայ դատը մէկուկէս միլիոն նահատակները ոգեկոչելու հոգեհանգստեան արարողութիւն չէ, այլ զուտ քաղաքական հարց մըն է, Արեւմտահայաստանի բռնագրաւուած հողերը հայութեան վերադարձնելու պահանջքով:

գ.- Հայ դատի ճակատին վրայ ազգային երեք կուսակցութեանց միջեւ ստեղծուեցաւ գործակցութեան ոգի, որ մեր դատը վերածեց համազգային

յին պահանջքի:

Յայտնենք, որ մինչ այդ վերջ տրուած էր «Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութիւն»-ին, որ իբրեւ արտօրէալ կառավարութիւն կը խորհրդանշէր անկախ Հայաստանի Հանրապետութիւնը եւ որ արդէն անուանական գոյութիւն մըն էր միայն, բայց եւ այնպէս անոր պահպանումը կը կազմէր մերժումը Հայաստանի համայնավար վարչակարգին: Անոր վերացումով, կը վերանար միաժամանակ երեք կուսակցութեանց միջեւ գործակցութիւնը արգելակող ազդակ մը:

Յունաստանի մէջ ալ, 1974-ի Դեկտեմբերէն, ի չգոյէ Հնչակեան կուսակցութեան, յաջորդական հանդիպումներ կայացան Հ.Յ.Դ.ի եւ Ռ.Ա.Կ.ի ներկայացուցիչներու միջեւ եւ գործակցաբար կազմուեցաւ «Եղեռնի 60-ամեակի ոգեկոչումներու Յունաստանի համազգային մարմին», բաղկացած հետեւեալներէ.- Գևուհի Վարուժան, Եգեկիւլեան Եղիշէ, Խաչատուրեան Գրիգոր, Ղազարեան Արտաշէս, Միսիկեան Յարութիւն, Ոսկերիչեան Յովհաննէս, Փելթեան Ստեփան, Քաջիկեան Սիւսակ, Քաջիկեան Տիգրան:

60-ամեակի այս մարմինը գործելով երկու կուսակցութեանց հովանիին տակ ու ցուցմունքներով, իր կողքին յառաջացուց գեղարուեստական, խմբագրական, յարաբերական եւ տնտեսական յանձնախումբեր, ինչպէս նաեւ Աթէնքի, Գարեայի, Ֆիքսի եւ Գոքինիոյ մէջ՝ ենթամարմիններ: Յանձնախումբն ու ենթամարմինները կեդրոնական մարմինն սման բաղկացած էին երկու կուսակցութեանց անդամներէ եւ անմիջական շրջանակներէ, որով, փաստօրէն, ամբողջ համայնքը զօրաշարժի ենթարկուեցաւ 60-ամեակի ձեռնարկներու կատարման համար: Գործակցութեան այս երեւոյթը ինքնին խրախուսական էր յատկապէս յունահայութեան համար, որ եկեղեցական-թեմական հակամարտութեանց հետեւանքով վերածուած էր երկու իրերամերժ հատուածներու, անթիլիասական եւ Էջմիածնական պիտակներու տակ:

Նոյնանման ենթակառոյց ստեղծուեցաւ նաեւ Թեսաղոնիկէի մէջ, հոն եւս արժանավայել տարողութեամբ նշելու համար Եղեռնի 60-ամեակը:

Կազմակերպչական, յարաբերական թէ քարոզչական հսկայ ճիգեր ի գործ դրուեցան ներքին եւ



Հ.Մ.Ը.Մի սկսուտ-արեւունշներու խումբ (1980)

արտաքին ճակատի վրայ, բոլոր շրջաններու մէջ եւ բոլոր մակարդակներու վրայ:

Յուզումն ու խանդավառութիւնը համակած էին ամեն տարիքի հայորդիները՝ դպրոցի աշակերտներէն մինչեւ ծերունիները:

Հայ երիտասարդներ, քանի մը գիշերներու վրայ տարածուած տքնաջան աշխատանքով, անտեսելով օրինական արգելքը եւ հակառակ ոստիկանական հալածանքի ու կարգ մը պարագաներու՝ նաեւ ձերբակալութեանց, Աթէնքի ու շրջակայքի կեդրոնական ու կողմնակի փողոցները ողողեցին որմնագոյներով (*աֆիշ*), թրքական ցեղասպանութիւնը դատապարտող պաստառներով եւ 150.000 թռուցիկներ ցրուեցան պատանիներու կողմէ:

Քարոզչական մարզին մէջ, 60-ամեակին ձեռք ձգուած արդիւնքը կարելի է աննախընթաց որակել: Grand Britagne պանդոկին մէջ կազմակերպուած մամլոյ ասուլիսը ուր զեկուցաբեր Եր Կեդր. մարմնի նախագահ ու յատկապէս հրաւիրուած՝ Շաւարշ Թորիկեան (*այժմ մահացած*), հաւաքեց շուրջ 60 լրագրողներ, ներառեալ միջազգային լրատու սպասարկութիւններ եւ թրքական երկու թերթերու ներկայացուցիչներ: Շաբաթներու վրայ տարածուած յունական մամուլի եւ հեռատեսիլի արձագանգումները այժմեականացուցին Հայ դատը եւ հասարակութեան ուշադրութիւնը կեդրոնացուցին մեր պահանջատիրութեան վրայ:

Յարաբերական մարզի մէջ ծաւալուն աշխատանք տարուեցաւ, որու շնորհիւ 26 երեսփոխաններ յանձնառու դարձան Հայկական հարցը արծարծել խորհրդարանին մէջ:

20 Ապրիլ 1975-ին, «Օրֆէս» շարժանկարի ընդարձակ սրահին մէջ, քաղաքական ու ակադեմական ականաւոր անձնաւորութեանց ներկայութեան եւ բազմահազար հայորդիներու մասնակցութեամբ տեղի ունեցաւ 60-ամեակի եզրափակիչ հանդիսութիւնը, ուր Անժանօթ Չինուորի յուշադամբանին դափնեպսակ զետեղելու համար թափօրի կազմութենէն առաջ, ներկաներու համամտութեան արժանացաւ յուշագիր մը եւ ուղարկուեցաւ Յունաստանի Հանրապետութեան նախագահ պրն. Միխայիլ Սթասինփուլոսին եւ Յունաստանի խորհրդարանին:

Յուշագիրը, շուրջ երեք մեքենագիր էջերու մէջ անդրադարձ մը կատարելէ ետք հայկական հարցին ու անոր հոլովոյթին, կը դիմէր Յունաստանի խորհրդարանին, որպէսզի՝

ա).- նեցուկ կանգնի հայ ազգին, անոր դատին արդար լուծումի մը համար,

բ).- Յունաստանի կառավարութիւնը նախաձեռնարկ ըլլայ Հայ դատի արծարծման՝ միջազգային կազմակերպութիւններու մէջ:

Նոյնանման գրութիւններ յղուեցան նաեւ խորհրդարանի մէջ մեծամասնութիւն կազմող «Նոր Հանրապետութիւն» կուսակցութեան խորհրդարանական յանձնաժողովին, «Կեդրոնի միաւորում» կուսակցութեան նախագահ Ե. Մարոսի, ՓԱՍՕԶ-ի նախագահ Անտրէաս Փափանտրեուին եւ «Դեմոկրատական միաւորում»-ի նախագահ Իլիա Իլիուի:

Այդ օրերուն, հայկական դիրքը բաւականաչափ ամրացած Եր Ամերիկայի Ծերակոյտի առած որոշումով, որով Թուրքիան կը դատապարտուէր հայ ազգին դէմ կատարած ոճիրին համար եւ Ապրիլ 24-ը կը հռչակուէր իբրեւ «մարդու կողմէ մարդու դէմ գործուած անմարդկայնութեան ազգային յիշատակութեան օր»:


Թերեւս անելորդ չէ հոս փակագիծ մը բանալով յայտնել, որ կարգադրուած Եր, որ եզրափակիչ հանդիսութիւնը դրուէր պատուակալ կազմի մը նախագահութեան տակ: Կազմը պիտի բաղկանար հետեւեալ հինգ անձնաւորութիւններէն, որոնք տուած էին իրենց համամտութիւնը. Փ. Գանելովուլոս (*Նախկին վարչապետ եւ ակադեմիկոս*), Ղ. Գասիմաթիս (*Նախկին նախարար եւ ակադեմիկոս*), Գ. Գրանիտիոթիս (*Կիպրոսի դեսպան*), Ե. Զումանտոս (*համալսարանի դասախօս*) եւ Ս. Փլասքովիթիս (*բարձրագոյն դատական տեսանի անդամ*):

Հանդիսութեան նախօրեակներուն, վերոյիշեալներէն անոնք, որոնք քաղաքական հանգամանք ունէին, տեղեկացուցին իրենց հրաժարումը նախագահական կազմէն յայտնելով, որ արտաքին գործոց նախարարութեան կողմէ միջամտութիւն եղած Եր, որպէսզի այդ քայլին դիմեն: Յայտնօրէն, Թուրքիան սկսած Եր չափազանց անհանգստանալ հայկական պահանջատիրութենէն եւ այդ Եր պատճառը յունական դիւանագիտութեան զգուշաւորութեան:

Չմոռնանք, որ Թուրքիոյ Կիպրոս ներխուժումը Նոր պատահած Եր եւ յոյն-թուրք լարուածութիւնը հասած Եր գագաթնակէտին:

Յատկանշական է նաեւ կազմուելիք քայլարշաւ-թափօրի մասին Ոգեկոչական մարմնի արձանագրութիւններէն հետեւեալ քաղուածքը.

«...**Պրն. Վարուժան Գնունի լայն զեկուցում տուաւ, թէ առաւօտուն Աթէնքի կեդրոնական ոստիկանութենէն հեռաձայնով զինք հրաւիրած են ոստիկանատուն եւ խնդրած ու թելադրած, որ հակառակ իրենց փափաքին ստիպուած են արգիլել քայլարշաւը, պարզապէս անոր համար, որ արտաքին գործոց նախարարութիւնը անյարմար կը նկատէ անոր իրականացումը՝ Յունաստանի եւ Թուրքիոյ միջեւ գոյութիւն ունեցող լար-**



Ապրիլեան պահանջատիրութեան թեմայով առաջին որմագրը

լած վիճակին պատճառով: Պրն. Գևուհի Կարապետյանի տեսակցութիւն ունեցած է արտաքին գործոց նախարարութեան տնօրէնութեան հետ, ուր եւ տեղի ունեցած է հարցի մանրամասն քննութիւնը: Պրն. Գևուհի Կարապետյան, թէ իր պնդումներուն վրայ եւ անզիջող կեցուածքին շնորհիւ, տնօրէնութիւնը արտօնած է քայլարշաւի իրագործումը, սակայն միայն անոր պաշտօնական մասի մասնակցութեամբ, իսկ ժողովուրդի մասնակցութիւնը բոլորովին արգիլած ու արտօնած՝ որ անոնք «պատահաբար» Անձանօթ Չինուորի հրապարակը գտնուին եւ հոն պարզէն պատահաբար: Պրն. Գևուհի Կարապետյան, թէ ոչ մերժած եւ ոչ ալ ընդունած է առաջարկը, այլ խոստացած է այս առաջարկը փոխանցել Մարմինին, որպէսզի ան իր վերջնական որոշումը առնէ:

Հարցը քննուեցաւ իր մանրամասնութեանց մէջ եւ կարծիքներու փոխանակութիւններէ ետք որոշուեցաւ ընդունիլ արտաքին նախարարութեան առաջարկած ձեւը, սակայն միայն քանի մը հարիւր հոգի նախօրօք դրկելով Անձանօթ Չինուորի հրապարակը, իսկ մնացեալ ժողովուրդին թողուլ, որ հետեւի քայլարշաւին, ըստ սկզբնական որոշումին»:

Ինչպէս կ'երեւի վերի մէջբերումէն, պետական սպասարկութիւններու կատարած ցուցմունքներուն ու թելադրանքներուն միշտ համակերպելու «օրինապահ քաղաքացի»-ի սխալ ըմբռնումը հայու մտայնութիւնը զիջած է եւ տեղը տուած՝ քաղաքացիական իր իրաւունքներուն տէր կանգնելու գիտակից քաղաքացիի հոգեբանութեան:

Ասիկա այն տարին է, երբ արդէն Յունաստանի



Քաղաքական ձեռնարկ 1979ին, Աթէնքի մէջ: Օրուայ նախագահ ընկ. Գեղամ Եաղճեան

գինուորականներու վարչակարգը իրաժարած էր եւ երկրին մէջ հաստատուած էին ժողովրդավար կարգեր:

Հետաքրքրական է նաեւ 60-ամեակի Ոգեկոչական Մարմինի արձանագրութիւններէն հետեւեալ քաղուածքը.-

«...Մարմինիս նախնական ծախքերու մատակարարման համար որոշուեցաւ 15.000 (տասնհինգ հազար)ական տրախմիի փոխառութիւն կատարել Ռ.Ա.Կ.Էն եւ Հ.Յ.Դ.Էն եւ գումարը փոխանցել տնտեսական յանձնախումբին...»:

Յայտնենք, որ այս գումարը այդ օրերուն համարժէք էր համեստ պաշտօնեայի մը մօտաւորապէս 3-4 ամսաթոշակին: Գումարը՝ 30.000 տրախմի, որ համարժէք էր 1000 ամ. տոլարի:

Անշուշտ որ կատարուած ծախքերը չսահմանափակուեցան այդ գումարով: Սակայն մէջբերուած արձանագրութիւնը մօտաւոր գաղափար մը կուտայ ազգային կուսակցութեանց նիւթական հնարաւորութեանց եւ 60-ամեակին համար տրամադրուած գումարին մասին: Եւ որպէսզի պատկերը ամբողջանայ, յայտնենք, որ յատկապէս քարոզչական մարզի մէջ յաջողութիւնը այնքան մեծ եղաւ եւ արձագանգը այնքան ծաւալուն, որ թրքական լրատու սպասարկութիւններ գնահատեցին, թէ շուրջ 2 միլիոն տոլար ծախսած են յունահայերը իրենց ձեռնարկներուն համար...:

Պէտք է ըսել, թէ գնահատումը չափազանցուած չէր, եթէ նկատի չառնենք կամաւոր ու խանդավառ աշխատանքը, որուն լծուեցաւ ամբողջ համայնքը: Յայտնօրէն, այդ գնահատման մէջ կար նաեւ թրքական գրգռութիւն այն իմաստով, որ հայերը իրենց ետին ունին ֆիւնանսաւորող պետութիւններ, որոնց կարգին նաեւ... Յունաստանը:

60-ամեակի համահայկական գործակցութեան արձանագրած յաջողութիւնները թէ՛ ներազգային եւ թէ՛ արտաքին ճակատի վրայ անոր ունեցած նպաստաւոր ու տարածուն արձագանգները պահ մը պատրանքը տուին, որ կարելի պիտի ըլլար այդ պարագայական գործակցութիւնը ամ-

րապակող սկիզբի մը վերածել յունահայութեան համար՝ մնալուն եւ այլ,- յատկապէս կրթական,- մարզեր ընդգրկող ընդհանուր համաձայնութեան մը գալու առումով, որպէսզի համերաշխաբար բոլոր կողմերն ալ ազգային իրենց պատասխանատուութիւնները ստանձնեն հաւասար պարտաւորութիւններով: Բայց... այդ ուղղութեամբ անուցուած ակնկալութիւնները չիրականացան:

Իբրեւ աննախընթաց ու ընդգծելի նախաձեռնութիւն եւ իրագործում մեր քարոզչութիւնը գեղարուեստական պարունակութեամբ մը տարածելու մտադրութեամբ, 1976-ին անդով ջանք ի գործ դրուեցաւ եւ գործնական օժանդակութիւն ընձեռուեցաւ յոյն համբաւաւոր գրող-բեմադրիչ Նիքոս Ֆոսկոլոսի, որ թատերական արուեստի մէջ հռչակ ունեցող դերասաններու մասնակցութեամբ պատրաստեց ու ներկայացուց «Արմէնիքօ Ֆենկարի» (*հայկական լուսին*) երաժշտախառն թատերգութիւնը: Ամառնային լման եղանակի մը ընթացքին շարունակուող այդ ներկայացման, բազմահազար արուեստասէր յոյներ եւ արուեստի որակեալ ներկայացուցիչներ թատերական արուեստի եւ երաժշտութեան հաղորդականութեան ընդմէջէն ծանօթացան մեր ողբերգութեան, մեր ազգային յոյզերուն եւ երազներուն:


Թատերական այս կտորի պատրաստութեան մէջ հեղինակին հետ գործակցեցաւ եւ լուրջ ներդրում ունեցաւ պրն. Յ. ՃԷլալեան:

Յամենայնդէպս, Յիսնամեակէն վերջ ու յատկապէս վաթսունամեակէն ասդին, գրեթէ բոլոր հայազաղութներու մէջ Հ.Յ.Դաշնակցութեան կողմէ կազմուեցան Հայ դատի Յանձնախումբեր, որոնք ամէն առիթ օգտագործեցին Հայ դատի աշխատանքներ կատարելու համար: Ներկայիս, Մեծ եղեռնի տարեդարձները դադրած են ալ սուգի օրեր ըլլալէ եւ վերածուած են քաղաքական մեր պահանջատիրութիւնը զօրացնելու եւ մեր պայքարին նոր թափ ու ծաւալ տալու առիթներու:

Վաթսունամեակը երիտասարդացում բերաւ ոչ միայն կուսակցական-միութենական կեանքին, այլ նաեւ աշխատանքի ու գործելակերպի եղանակներուն մէջ: Ազգային կառոյցներու պահպանումը դադրեցաւ նպատակ ըլլալէ եւ վերածուեցաւ միջոցի, քաղաքական մեր իտեալին՝ Հայ դատի հետապնդման ճամբուն վրայ:

ՔԱՂԱՔԱԿԱՆԱՏՈՒՄ ԵՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԱՏՈՒՄ

Վաթսունամեակի համասփիւռքեան ձեռնարկներէն առաջ էր, որ միջազգային հանրային կարծիքի եւ քաղաքական ու դիւանագիտական շրջանակներու ուշադրութիւնը գրաւեցին՝ սփիւռքի մէջ ծնած ու մեծցած երիտասարդական գաղտնի խումբեր, որոնք հայութեան իրաւունքներուն նկատմամբ թուրք յաջորդական պետութիւններու անզիջող կեցուածքէն եւ ընդհանրապէս միջազգային անտարբերութենէն ընդվզած՝ Թուրքիոյ դէմ շղթայազերծեցին ուժական պայքարի ընդլայնակէտայ շարժում՝ աշխարհի զանազան մասերուն մէջ: Անոնք թուրք դիւանագետներ



1980ականներուն ուժական պայքարի տարիներուն՝ Ապրիլեան խորհրդանշական որմագը

ու հաստատութիւններ հարուածելով՝ նետուեցան զինեալ պայքարի մէջ, որպէսզի այդ ձեւով ստիպեն Թուրքիան, որ ճանչնայ հայ ժողովուրդի իրաւունքները:

Առաջին անգամ իր զինեալ շատ համարձակ գործողութիւններով հանրածանօթ դարձաւ «Հայկական Տեղասպանութեան Արդարութեան Մարտիկներ» կոչուող գաղտնի խումբը, որ 1975ին յաջորդական երկու օրերու ընթացքին օր ցերեկով յարձակում գործեց Վիեննայի ու Փարիզի թուրք դեսպաններուն վրայ եւ ահաբեկեց գաւտնք, մին դեսպանատան մէջ, իսկ երկրորդը՝ Փարիզի կեդրոնական պողոտաներէն մէկուն վրայ: Անկէ վերջ, այս գաղտնի խումբին անդամները աշխարհի զանազան մասերուն վրայ հալածեցին թուրք դիւանագետները եւ ահաբեկեցին գաւտնք: Այս խումբն էր, որ իր ցնցիչ գործողութիւններով յիշեցուց ամբողջ աշխարհին հայկական դատին գոյութիւնը:

Այս խումբին մարտակից ուրիշ կազմակերպութիւն մը, «Հայ Տեղափոխական Բանակ»-ի 5 մարտիկներ՝ 1983-ի Յուլիս 27-ին, գերագոյն ինքնագոհաբերութեան անօրինակ գործողութիւն մը կատարեցին Լիզպոնի թրքական դեսպանատունը գրաւելու փորձով՝ ցնցելով միջազգային հանրութիւնը:

Սեփական կեանքը արդարութեան ու ազատութեան գաղափարին ընծայելու ինքնագոհաբերութեան այդ գործողութիւնը ցոյց տուաւ արար աշխարհին՝ մահուան դիմաց հայ մարտիկներու չընկրկելու վճռականութիւնը:

**ԽԱԼՔԻՏԻՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐ**

Նոյնպես, «Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակ» կոչուող գաղտնի կազմակերպություն մը ստեղծուեցաւ, որ նմանապես զինեալ գործողութիւններ կատարեց Հայ դատին համար: Այս շարժումին ամենէն կարեւոր գործողութիւնը եղաւ Փարիզի թրքական դեսպանատան վրայ յարձակումը իր 4 անդամներուն կողմէ՝ 1981ին, երբ ներս մտնելով 12 ժամ գրաւուած պահեցին դեսպանատունը, աշխարհի ուշադրութիւնը կեդրոնացնելով իրենց վրայ:

Պայքարի այդ եղանակը, մերթ դրական եւ երբեմն ժխտական արձագանգներով՝ «**մոռուած**» հայութեան ծայրը լսելի դարձուց խուլ ականջներու, սատարեց սփիւռքահայ զանգուածներու մէջ հայկականութեան արծարծումին եւ հանդիսացաւ հայութեան ինքնահաստատման գրաւականը:

Գաղտնի այս խումբերու յեղափոխական մարտնչումները ընդգրկեցին շուրջ տասնամեակ մը, հայութեան ներշնչելով նորովի եռանդ ու ոգեւորութիւն: Այդ մարտնչումները շեշտեցին ազատագրական պայքարի համազգային վճռականութիւնը, ազգային իրաւունքներու մէջ հայութեան անտեղիտալի կամքը, ինչպէս նաեւ նպաստեցին ներքին ճակատի ամրացման, սերունդներու քաղաքական դաստիարակութեան ուժեղացման եւ յեղափոխական խառնուածքի կազմաւորման:

1975-1985 տարիներուն, հայկական սփիւռքի եւ յատկապէս երիտասարդութեան մէջ տիրապետեցին երկու կարգախօսներ. - քաղաքականացում եւ յեղափոխականացում:

Այս կարգախօսներու ներգործութիւնը անվիճելի ու բարերար արդիւնքը ունեցաւ ոչ միայն հայութեան դիմագրաւած ֆիզիքական ու հոգեբարոյական դժուարութիւնները յաղթահարելու տեսակէտէն, այլ նաեւ նոյնիսկ այդ դժուարութիւններուն մէջ, Հայ դատի ճակատին վրայ յառաջընթաց արձանագրելու առումով:

Այս տասնամեակին Եր, որ հայկական երկու հայաշատ ու կազմակերպ գաղութներ, - լիբանահայութիւնը՝ երկրին մէջ ծայր առած քաղաքացիական պատերազմին, եւ պարսկահայութիւնը՝ Իրաք-Իրան պատերազմին հետեւանքով, - ահաւոր ցնցումներու ենթարկուեցան: Այդ երկիրներէն հայութեան արտագաղթի հոսքը կրնար խուճապային հանգամանք ստանալ, կազմալուծել այդ հայազաղութները եւ բարոյալքել ամբողջ սփիւռքը, եթէ քաղաքականացման ու յեղափոխականացման հոլովոյթին մէջ՝ դիմանալու եւ տոկալու կամքը կռանած չըլլար սփիւռքահայութիւնը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան միջոցով:

Շնորհիւ այդ կարգախօսներու ներգործութեան Եր, որ անոնք չկորսնցուցին իրենց կազմակերպ հանգամանքը, իսկ արտագաղթողները փոխանակ ցիրուցան կորսուելու, հունաւորուեցան դէպի այլ հայազաղութներ, անոնց տալով նոր դիմագիծ ու թարմացնող ներարկում:

Որով, կարելի է եզրակացնել, որ Եղեռնի 60-ամեակէն ետք սփիւռքահայութեան քաղաքական մտքի զարթնումը նոր առողջացում մը բերաւ հայ կեանքին եւ Հայ դատի հետապնդումը դրաւ նոր ուղիի մը մէջ:

Ըսինք արդէն, որ Եղեռնի 60-ամեակին յաջորդող 10 տարիները (1975-1985) անձկալի ու մտահոգիչ եղան հայութեան համար, Լիբանանի քաղաքացիական, ինչպէս եւ Իրան-Իրաք պատերազմին պատճառով: Այդ հայազաղութներու հետզհետէ վատթարացող կացութեան հետեւանքով այդ երկիրներէն արտագաղթող հայրենակիցներու նկատառելի հոսանք մը ուղղուեցաւ Յունաստան, իբրեւ տարանցիկ (*transit*) կայան, հոնկէ մեկնելու համար Ամերիկա, Գանատա, Աւստրալիա կամ այլուր:

Այդ երկիրներէն հասնող տխուր լուրերը իրենց ճնշիչ ծանրութեամբ յաճախ անճրկումի մատնող յուսահատական պահեր ստեղծեցին, ինչպէս այլ, նաեւ յունահայ գաղութին համար, երբեմն նոյնիսկ անզօրութեան մը դէմ յանդիման դնելով ամբողջ սփիւռքը:

Պարսկաստանի մէջ հայակրթութեան վրայ դրուած ու այլ սեղմումներ, միւս կողմէ՝ սփիւռքի արիւնատար երակը հանդիսացող նոյնպէս հայահոծ Լիբանանի հայկական հաստատութեանց դէմ խափանարարական ուժահարումները, Հ.Յ.Դ.ի կարկառուն գործիչներէն՝ Աբրահամ Աշճեանի առեւանգումը եւ ի լրումն ամենայնի, Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ Սարգիս Չէյթեանի ու ընկերակցին անհետացումը, ինչպէս նաեւ Վարդգէս Տէր Կարապետեանի, Սարգիս Ազնաւուրեանի եւ ուրիշներու սպանութիւններն ու այլ միջադէպեր, ընդհանուր անորոշութեան ու անյստակ կացութեան մը նախանշանները կազմեցին՝ ներկայի մէջ ու ապագային հայութեան դիմագրաւելիք վտանգալի անակնկալներու, որոնց դէմ տոկալու եւ նոր նախաձեռնութիւններով ինքնահաստատուելու ճամբան սփիւռքին առջեւ հարթեց ազգային այն մթնոլորտը, որ հոգեփոխած էր հայութիւնը, յատկապէս անոր երիտասարդ կորիզը եւ որ կը բացատրուէր «**քաղաքականացում**» եւ «**յեղափոխականացում**» կարգախօսներով:

Այս տասնամեակի սկզբնաւորութեան, Լիբանանի քաղաքացիական պատերազմի հետեւանքով՝ Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոն ներկայացուցչութիւն մը հաստատեց Աթէնքի մէջ՝ վարել կարենալու համար համասփիւռքեան իր գործերը:

Այդ ներկայացուցչութեան շնորհիւ Աթէնքը դարձաւ հանդիպման վայր՝ քաղաքական, կուսակցական, մտաւորական եւ միութենական հայ գործիչներու համար: Այս իրողութիւնը ընդգրկեց նաեւ յաջորդ տասնամեակը, այսինքն՝ մինչեւ 1995 թուականը եւ գաղութին տուաւ առաջատար գործօնի եւ Հայ դատի ընդհանուր աշխատանքները համադրող ղեկավար կեդրոնի հանգամանք:

Իր տեսակին մէջ թերեւս առաջին եւ յունահայ համայնքին համար եզական եղաւ՝ 1976 թուականին, համասփիւռքեան տարողութեամբ մեր երիտասարդականին նախաձեռնած Խալքիտիքի երիտասարդական համագումարը, ուր սփիւռքի բոլոր կողմերէն հայ երիտասարդութեանց ներ-

կայացուցիչներ քանի մը օրեր ապրեցան միասին, խորհրդակցելով ու վիճելով բացառաբար՝ Հայ դատի եւ հայութեան վերաբերեալ խնդիրներու վրայ:

Աւելի ուշ, համասփիւղքեան երիտասարդական բանակում մըն ալ կայացաւ Քալամոսի մէջ, 1983 թուականին:

Խալքիտիքիի համագումարին յաջորդող տարիները յատկանշուեցան մեր երիտասարդութեան քաղաքական հետաքրքրութեանց զարթումով, ինչպէս նաեւ Հայ դատի նկատմամբ անոր ցուցաբերած խանդավառ կեցուածքով: Որեւէ տեսակի աշխատանքի համար՝ երիտասարդներու ցոյց տուած պատրաստակամ տրամադրութիւնները խթանող ազդակ հանդիսացան՝ նոր հունաւորում եւ հետեւողականութիւն տալու տեսակէտէն Հայ դատի հետապնդման գործին:

Ապրիլ 24ի տարեդարձներուն կազմակերպուած քայլարշաւները՝ երիտասարդներու հոծ մասնակցութեամբ եւ առաջնորդութեամբ, թուրքիկներու ցրումը, որմազդներու տարածումը՝ գրեթէ ամբողջ Յունաստանի տարածքին, հիւանդներու ի նպաստ արիւնի հաւաքական նուիրաբերումը, այլ առիթներով՝ հայկական եղեռնի եւ կիպրական ողբերգութեան նուիրուած նկարչական ցուցահանդէսները, անկախ Հայ դատ ծանօթացնելու իրենց բնոյթէն, խորքին մէջ, հայ ժողովուրդի ճակատագրին հանդէպ պատասխանատու յանձնառութիւններ ստանձնելու խոստումներ եղան՝ մեր երիտասարդներուն կողմէ...

ՅՈՒՇԱՐՁԱՆ

1978ին, շնորհիւ Ֆիքսի Կոմիտէի երիտասարդ կազմին ու Հայ դատի Յանձնախումբի խթանին եւ յետ յարաբերական երկարատեւ աշխատանքի, Նէա Չմիռնի քաղաքի Խրիստոսթոմու Չմիռնիս կոչուող հրապարակին վրայ կարելի եղաւ կանգնել Չանգակ-յուշարձանը, իբրեւ խորհրդանիշ՝ Ցեղասպանութենէն ետք հայութեան վերականգնումին:

Այս իրագործումը արգասիքը եղաւ այդ օրւան քաղաքապետ՝ պրն. Պապիս Փեհլիվանիտիսի հայութեան հանդէպ ունեցած սիրոյն: Իր ու քաղաքապետական խորհրդի որոշումը բաւարար չէր յուշարձանի կանգնեցման համար: Անհրաժեշտ էր նաեւ ստանալ արտաքին գործոց նախարարութեան համամտութիւնը, քանի որ ատիկա ժխտական անդրադարձ կրնար ունենալ յոյն-թուրք արդէն իսկ լարուած յարաբերութեանց վրայ: Հայ դատի Յանձնախումբին զուգահեռ, քաղաքապետը ինք եւս յուշարձանի իրագործումը մտասուեռո՞ւմ դարձուցած՝ հետեւողականօրէն հետապնդեց խնդիրը արտաքին գործոց նախարարութեան մօտ եւ ի վերջոյ արտօնութիւնը ստացաւ:

Չանգակ-յուշարձանի ձեւաւորումն ու շինութիւնը վստահուեցաւ արձանագործ Վասիլիս Գաբատայիսի, որ գործակցելով Հայ դատի Յանձնախումբին հետ յաջողեցաւ գործը աւարտել այն ձեւով, որ մտապատկերած էր յանձնախումբը:

Յուշարձանի կանգնեցման եւ յաջորդող ժամանակաշրջանին ծաւալած ցուցական-քարոզչական արշաւին դիմաց՝ թրքական հակազդեցութիւնը չուշացաւ: Դիւանագիտական տագնապը սաստկացաւ յոյն-թուրք կառավարական մակարդակով: Այդ առիթով, օրուան վարչապետ Եորդիոս Ռալիս քաջ դիրքորոշումով մը յայտարարեց. «... **Ժողովրդավար Յունաստանի հայ քաղաքացիները քաղաքացիական իրաւունքը ունին իրենց նահատակները յիշելու, յարգելու եւ ազգային արդար պահանջներուն տէր կանգնելու...**»:

Միջանկեալ, այս վարչապետ անձին պարկեշտութիւնը վեր հանելու համար, կ'արժէ հոս մէջբերել հետեւեալը.

1981 Հոկտեմբեր 18-ի երեսփոխանական ընտրութիւններու նախորդող օրերուն, Յունաստանը կը գտնուէր քաղաքական իմաստով ճակատագրական անկիւնադարձի մը սեմին, ընտրութիւններէն ետք իր ստանալիք նոր պատկերով: Ընտրապայքարը բուռն էր եւ մրցակից երկու մեծ կուսակցութիւնները խոստումներու տարափով կը փորձէին սիրաշահիլ ընտրագանգուածը:

Հայ երիտասարդութիւնն ալ, քաղաքականացման իր հոլովոյթին մէջ, դարձած էր աւելի յանդուզն եւ կը պահանջէր իր ղեկավարութենէն, որ վերջ տայ շրջահայեաց կեցուածքներու եւ ընտրութեանց մէջ յստակօրէն կողմնորոշուի ի նպաստ յառաջդիմական-ընկերվարական կուսակցութեան, այսինքն ՓԱՍՕԹի:

Ահա այդ պայմաններու տակ, շ. 3. Դաշնակցութիւնը որոշեց ուղղակի շփման մէջ գալ մրցորդ երկու կուսակցութեանց՝ «**Նոր Հանրապետութիւն**»ի եւ «**ՓԱՍՕԹ**»ի ղեկավարներուն հետ, փորձելով համոզել անոնցմէ մէկը կամ միւսը, որ ընտրութեանց նախասեմին, ի նպաստ Հայ դատին քաղաքական «**Յայտարարութիւն**» մը կատարէ կամ ստորագրէ, խոստանալով, որ նոր կազմուելիք խորհրդարանին մէջ օրակարգի հարց պիտի դարձնէ Հայոց Ցեղասպանութիւնը ճանչնալու-դատապարտելու եւ Հայ դատի արդարութիւնը ընդգծող բանաձեւի մը որդեգրումը: Այդ «**Յայտարարութիւն-խոստում**»ին դիմաց, շ.3.Դ.ը պիտի խոստանար ապահովել հայ քաղաքացիներուն քուէները...:

Այս նպատակով կարելի եղաւ տեսակցիլ «Նոր Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ եւ վարչապետ Եորդիոս Ռալիսի հետ, որ բացարձակապէս մերժեց նման յայտարարութիւն կատարել ոչ թէ քանի մը հազար, այլ նոյնիսկ քանի մը հարիւր հազար քուէի համար, քանի որ անկախ չէր համընկներ իր հայրենիքի շահերուն: Աւելցուց, որ Յունաստանի կղզիները թրքական սպառնալիքի տակ կը գտնուին եւ իր կողմէ նման յայտարարութիւն մը աւելի պիտի սրէ կացութիւնը, մինչեւ իսկ պատերազմական վիճակի մը յառաջացման դուռ կրնայ բանալ...: Իսկ ՓԱՍՕԹի ղեկավարին կամ գործադիր մարմնին հետ տեսակցելու բազմակողմանի դիմումները մնացին ապարդիւն, հակառակ ժամադրութիւն մը ճշդելու մասին տրուած խոստումներու:

Չմոռնանք, որ տակաւին կը գտնուէինք Հայ դա-



Նեա Չմիռնիի մէջ Հայոց Ցեղասպանութեան նուիրուած առաջին յուշարձանի բացում (1978)

տի ուժական, ընդհատակեայ պայքարի տասնամեակին մէջ, որով, Հայ դատին նեցուկ կանգնելու հրապարակային յայտարարութիւն մը կրնար դուր բանալ տարբեր մեկնաբանութեանց՝ Թուրքիոյ կողմէ...:

Ամէն պարագայի, պէտք է ըսել, որ նախընտրական շրջանին կուսակցապետներուն հետ տեսնուելու Կեդրոնական կոմիտէի այդ նախաձեռնութիւնը սկիզբ մը եղաւ, որ հետագայ տարիներուն ալ շարունակուեցաւ: Ամէն ընտրութեանց նախօրերուն տեսակցութիւններ տեղի կ'ունենան հելլեն կուսակցութիւններու եւ անոնց ընտրացանկին ներառնուած թեկնածուներուն հետ եւ փոխադարձ պայմանաւորուածութիւններով յարաբերութիւնները կը սերտանան, որոնցմէ կ'օգտուին Հայ դատն ու յունահայ համայնքը:

Աւելի ուշ, 1988-ին, ընտրապայքարի օրերուն, «Նոր Հանրապետութիւն» կուսակցութիւնը արդէն երկու ղեկավար փոխած էր ու կը գտնուէր ընդդիմադիր դիրքի վրայ: Նոր ղեկավարը՝ Գոնսթանտինոս Միցոթաքիս (*հետագային վարչապետ*), ընդառաջելով կատարուած դիմումին՝ բարեացակամ տրամադրութեամբ մը, առանց յստակ ու որոշ յանձնառութեան, թուղթի մը վրայ իր ստորագրութեամբ պարզապէս արձանագրեց. «**միշտ նեցուկ եղած եմ հայկական հարցին, միշտ նեցուկ պիտի ըլլամ անոր**»:

Հոս, աւելորդ չէ մատնանշել իրողութիւն մը, որ գանազան հարցերու եւ անոնց կարգին նաեւ Հայ դատի վերաբերող աշխատանքներու կապակցութեամբ, կուսակցութեանց կեցուածքին եւ պետական հասկացողութեան միջեւ գոյութիւն ունի բացայայտ տարբերութիւն մը, անկախ անոնց քաղաքական, ընկերային թե՛ գաղափարական համոզումներէն: Կուսակցական եւ պետական շահերը յաճախ չեն զուգորդուիր իրարու եւ միշտ կուսակցականն է, որ տեղի կուտայ երկրորդին՝ պետականին դիմաց: Գործնական գետնի վրայ այս հաստատումը ապացուցուեցաւ քանիցս: Հետագային, ձախողեցան նաեւ Ն. Յ. Դ. Բիւրոյի ներկայացուցիչ՝ Հրայր Մարուխեանի եւ վարչապետ Անտրէաս Փափանտրեուի միջեւ հանդիպում մը կայացնելու բազում դիմումները: Դիմումներ,

որոնք կատարուեցան նախարարական մակարդակներու վրայ եւ խոստումներ ապահովուեցան, բայց եւ այնպէս հանդիպումը չիրականացաւ, առանց որ որեւէ բացատրութիւն տրուի այդ մասին:

Միջանկեալ այս նշումներէն վերջ եւ վերադառնալով Հայ դատի աշխատանքներուն, կարելի է հաստատապէս արձանագրել, որ 60-ամեակի յաջորդող տարիներուն աշխատանքի նոյն թափն ու կշռոյթը պահուեցաւ՝ յատկապէս քարոզչական ու յարաբերական մարզերու մէջ:

1979-ի Ապրիլին, կազմակերպուեցաւ «**Հայկական Շաբաթ**» պիտակին տակ ձեռնարկներու շարք մը, որ նուիրուած էր հայկական ճարտարապետութեան, մշակոյթին, երաժշտութեան եւ նկարչութեան:

Հայկական ճարտարապետութեան մասին խօսելու համար յատկապէս հրաւիրուեցաւ իտալացի Ալբալո Նովելլօ, որ Աթէնքի հին խորհրդարանի սրահին մէջ ներկայացուց Արեւմտահայաստանի հայկական կիսաքանդ վանքերն ու եկեղեցիները՝ իր կողմէ լուսանկարուած:

Հայկական երաժշտութեան համար Գերմանիայէն հրաւիրուեցաւ երաժիշտ-յօրինող Լուիվիկ Պազիլ եւ Անիթա Թերզեան, որոնք սքանչելի նուագահանդէս մը տուին Փիրէայի քաղաքապետարանի կեդրոնական թատերասրահին մէջ:

«**Հայկական Շաբաթ**» վերնագրով իրագործուած ձեռնակներու աւարտին, հանդիսաւոր բացումը կատարուեցաւ Նեա Չմիռնիի գանազակ-յուշարձանին: Այդ ձեռնակներուն, բացի հայ հասարակութենէ, ներկայ եղան յոյն մեծաթիւ անձնաւորութիւններ, նաեւ արտաքին գործոց փոխ նախարարը:

Եւ այսպէս, Աթէնքն ալ ունեցաւ հայութեան ցաւն ու վերականգնումի կամքը խորհրդանշող լուռ դօղանշը...:

Երիտասարդականի նախաձեռնութիւններ

Միեւնոյն տարին, առաջին անգամն ըլլալով եւ յախումն նախաձեռնութեամբ մը Ն. Յ. Դ. Երիտասարդական միութեան կեդրոնական վարչութիւնը ընթացիկէն դուրս գալով՝ շփում հաստատեց յոյն կուսակցութեանց երիտասարդականներուն հետ եւ մասնակցեցաւ անոնց փառատօններուն՝ հայ երգով ու պարով, հայկական ջարդերու եւ մեր դատը խորհրդանշող նկարներու ցուցադրութեամբ: Այդ եւ յաջորդող տարիներու երիտասարդականի մասնակցութիւնը յունական փառատօններուն՝ առիթներ եղան, որպէսզի չափազանցութեան չհասնելու համար, 25-30 հազար յոյներ, մեծաւ մասամբ երիտասարդ, տողանցեն հայկական տաղաւարին առջեւէն եւ գէթ գաղափար մը կազմեն պահանջատեր հայութեան տենչերուն մասին:

Այդ տարին էր նաեւ, որ երիտասարդականը հրապարակ հանեց հայ յեղափոխական երգերու յունարէնի թարգմանուած ձայնապնակ մը: Թարգմանչական աշխատանքը կատարուեցաւ հանրաժանօթ բանաստեղծ-լրագրող Լէֆթէրիս Փափատոփուլոսի կողմէ, իսկ երգերը մեկնաբանեց Վասիլիս Փափագոնսթանտինոս:



ՆԷա Չմինիի քաղաքապետ Պապիս Պեխիվանիտիսի ձեռամբ բացումը կը կատարուի Հայոց Տեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած «Չանգակ» յուշարձանին

Աւելի վերջ, 1982ի Մարտին, երիտասարդակա-
նը նոր ուսումով մը յանդգնութիւնը ունեցաւ իր
փառատօնը կազմակերպելու Միլոնայի պասքե-
թի դաշտին մէջ, ուր հաւաքեց 3.000-ի հասնող
բազմութիւն՝ կէսէն աւելիի երիտասարդ յոյներու
մասնակցութեամբ: Հոն, ի նպաստ Հայ դատին
խօսքեր արտասանեցին յունական բոլոր կուսակ-
ցութեանց երիտասարդականները, ինչպէս նաեւ
կիպրական միութեան ու պաղեստինցի ներկա-
յացուցիչներ: Սիրայօժար մասնակցութիւն բերին
յոյն նշանաւոր երգիչ-երգչուհիներ:

Յաջորդական քանի մը տարիներուն կրկնուե-
ցան Միլոնայի փառատօնները, ապա անոնք
փոխարինուեցան զուտ հայկական փառատօն-
ներով՝ Ֆիքսի ակումբի գոյգ բակերուն մէջ՝ «Հայ-
կեան նետ» նշանաբանով:

Նոյն թուականին, 1982ին, առաջին անգամն ըլ-
լալով եւ անկէ ետք շարունակաբար ամէն տարի՝
կազմակերպուեցաւ պայքարունակ ցոյց՝ թրքա-
կան դեսպանատան առջեւ, իսկ ամառնային
եղանակներուն՝ 10-օրեայ բանակումներ պատա-
նեկանի եւ երիտասարդականի համար, որոնց
կը ջամբուէր ազգային դաստիարակութիւն եւ կը
բացատրուէր Հայ դատի էութիւնը:

Երիտասարդականի բանակումներուն երբեմն
իրենց մասնակցութիւնը բերին Ֆրանսայէն, Անգլիա-
յէն եւ Կիպրոսէն պատանի-երիտասարդներ:

*(Այդ տարիներուն Էր Նաեւ, որ 1980ական
թուականներուն, Խալքիտիքիի ծովափնեայ շրջա-
նէն գնուեցաւ 10 արտավար հողամաս, որ յատկա-
ցուի բանակումներու կազմակերպման: Հողը ար-
ժեց մօտ 23.000 տոլար):*

Ուժական պայքարի ժամանակաշրջանին,
Եղեռնի 60-ամեակին յաջորդող տարիներուն
(1975-85) Հայ Դատի Յանձնախումբին նեցուկով

ու քաջալերանքով, յունահայ երիտասարդութիւ-
նը ամէն առիթ օգտագործեց՝ թիկունք կանգնելու
համար այդ պայքարին: Ի նպաստ Հրայր Գըլըն-
ճեանի եւ Համբիկ Սասունեանի (*առաջինը՝ բան-
տարկուած Մարսիլիոյ մէջ, ապա ազատ արձա-
կուած*), իսկ երկրորդը՝ Ամերիկայի մէջ, տակաւին
արգելափակուած) ցոյցեր կազմակերպեց Ֆրան-
սայի եւ ամերիկեան դեսպանատուներուն առջեւ:

Նոյն իմաստով, 1983ին, յատկապէս երիտա-
սարդներուն քաղաքական նկարագիր ու յեղա-
փոխական շունչ փոխանցելու տեսակետէն, կա-
րեւոր դեր կատարեցին Պելկրատի մէջ բանտար-
կուած երկու հայորդիներու պաշտպանութեան ի
խնդիր գաղութին մէջ կազմութիւնը «Պաշտպան
Կոմիտէ»ի, եւ այդ ուղղութեամբ ձեռնարկուած աշ-
խատանքներն ու ցոյցերը: Բանտարկուած տղոց
հետ հանդիպելու եւ անոնց դատավարութեան
հետեւելու համար Պելկրատ ուղարկուեցան ներ-
կայացուցիչներ եւ Ազատ Օրի խմբագիրը, որոնց
փոխանցած տեղեկութիւնները մանրամասն եւ
օրը օրին արձագանգ գտան Ազատ Օրի մէջ, ինչ
որ մեր համայնքին ուշադրութիւնը կեդրոնա-
ցուց յեղափոխական երկու հայորդիներու ճակա-
տագրին ու այդ ճամբով՝ Հայ դատին վրայ:

Պաշտպան Կոմիտէն եւ Թաղային ենթակո-
միտէները յունահայ գաղութէն հանգանակեցին
շուրջ 3 միլիոն տրախմիի պատկառելի գումար
եւ գործակցելով Ֆրանսայի պաշտպան Կոմի-
տէի հետ, այդ գումարը ամբողջութեամբ յատ-
կացուցին տղոց դատական ծախսերուն: Այդ
առիթով, բազմաթիւ գործուղումներ եղան դէպի
Պելկրատ:

Դատավարութեան ամբողջ տեւողութեան,
երիտասարդականը ամէն ամսուն 9ին, այսինքն
«դէպքին» ամսեդարձին, հանդես եկաւ պայքա-

րունակ ցոյցով Եուկոսլաւիոյ դեսպանատան առջեւ, երկու ազատամարտիկներու ազատ արձակումը պահանջելով: *(Հետագային երկուքն ալ ազատ արձակուեցան):*

Իսկ 1983ի Լիզպոնի ինքնագոհաբերութեան գործողութիւնը մեծ յուզում ու ոգեկանութիւն յառաջացուց ամբողջ հայութեան եւ յատկապէս երիտասարդութեան մէջ, որ ամէն տարի, հինգ հերոս նահատակներու յիշատակին ձեռնարկ-հոգեհանգիստի նախաձեռնարկ եղաւ, ինչ որ կը շարունակուի մինչեւ այսօր:

Արձանագրեց նաեւ, որ Թեսաղոնիկէի մէջ եւս առաջին երիտասարդական ցոյցը տեղի ունեցաւ 1984ին, ապրիլեան ելոյթներու շրջագծին մէջ, թրքական հիւպատոսարանին առջեւ:

Իսկ Գավալայի եւ Քսանթիի մէջ առաջին անգամն ըլլալով 1980ին Էր, որ հրապարակաւ նշուեցաւ Եղեռնի տարեդարձը, որուն ներկայ եղան քաղաքական ու զինուորական անձնաւորութիւններ:

Մ.Ա.Կ.-Ի ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱԻԱՆՑ ԵՆԹԱՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Հայ դատի յանձնախումբը աշխատանքի իր Հըրջագիծը ընդլայնեց եւ յարաբերական մարզի մէջ արդիւնաւոր կապեր հաստատեց պետական-քաղաքական շրջանակներու հետ: Բազմամակարդակ տեսակցութիւնները հասան մինչեւ արտաքին գործոց նախարարութիւն, որպէսզի յունական պատուիրակութիւնը դրական կեցուածք որդեգրէ Մ.Ա.Կ.-ի Մարդկային իրաւանց ենթայանձնախումբին մէջ քննարկուող 30-րդ պարբերութեան նկատմամբ, ուր իբրեւ դատապարտելի արարք կը տարագուէր «ցեղասպանութիւն» եզրը, պատմութենէն օրինակներ բերելով, որոնց կարգին կը դասուէր նաեւ Հայոց ցեղասպանութիւնը: *(Թրքական միջամտութեանց պատճառով երկար քաշքշուկներու ենթարկուելէ ետք, պարբերութիւնը վաւերացուեցաւ 1985ին: Ասիկա առաջին, բայց եւ այնպէս հաշուառելի յաղթանակ մըն էր՝ Հայոց ցեղասպանութիւնը միջազգային ճանաչման արժանացնելու Հայ Դատի Յանձնախումբերու հետապնդումներուն մէջ):*

ՃԱՇԿԵՐՈՅԹ՝ Ի ՊԱՏԻԻ ԵՒՐՈՆԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՍԷԱԼՄԱՔ

Յարաբերական աշխատանքի շրջագծին մէջ, յանդուզն նախաձեռնութիւն մը եղաւ 1983ին, ի պատիւ յոյն եւրոներեսպոնսաններուն սարքուած ճաշասեղանը, որուն ընդառաջեցին ութ եւրոներեսպոնսաններ, ներառեալ ներքին համայնավար եւ ԶՕՏԻՍՕ կուսակցութեանց գլխաւոր պատասխանատուները, նաեւ Ս. Փլասքովիթիս, որոնք կը նկատուէին ամէնէն կարկառուն դէմքերը եւրոխորհրդարանի Յունաստանի ներկայացուցչութեան:

Ճաշկերոյթի նախաձեռնութիւնը եզակի էր ու

աննախընթաց՝ հայկական սփիւռքի մէջ: Անոր ու շարունակուող շփումներու պտուղը կարելի եղաւ քաղել հետագային, 1987ին, Եւրոխորհրդարանի ծանօթ բանաձեւին որդեգրումով:

Եղեռնի 60-ամեակին յաջորդող հինգ-վեց տարիներու երկայնքին, Հայ դատի յանձնախումբը յարաբերական սպառնիչ շփումներ հաստատեց ՍԷԱԼՄԱՔ կոչուող յունական կոմիտէի մը հետ, յուսալով որ անոր հետ գործակցաբար պիտի կարենար Հայ դատի քարոզչութեան տալ նոր որակ ու մակարդակ: ՍԷԱԼՄԱՔ ինքզինք կը ներկայացներ իբրեւ պաշտպան ու համադրող կոմիտէ՝ Փոքր Ասիոյ աղէտեալ ու հայրենիք կորսնցուցած ժողովուրդներու: Այս կոմիտէն թէեւ կազմակերպական կառոյց ու յենարան չունէր, բայց բոլոր տուեալները ցոյց կուտային, որ անիկա կը վայելէր լուռ քաջալերանքը Յունաստանի արտաքին գործոց նախարարութեան:

ՍԷԱԼՄԱՔի հետ գործակցաբար ծրագրուեցաւ Փարիզի մէջ կազմակերպել միջազգային գիտաժողով՝ Թուրքիոյ կողմէ աղէտեալ ու հայրենագուրկ ժողովուրդներու մասին, բայց եւ այնպէս այդ ծրագիրը չիրականացաւ ինչ-ինչ պատճառներով:

ՍԷԱԼՄԱՔի հետ գործակցութեան շօշափելի արդիւնքը կազմեց նկարչական ցուցահանդէս մը եւ մեծածաւալ ալպոմի մը հրատարակութիւնը, ուր ամփոփուած էին Փոքր Ասիոյ ճնշուած ու հայրենահան ժողովուրդներու աղէտը ներկայացնող պատկերներ՝ անգլերէն, ֆրանսերէն եւ գերմաներէն բացատրութիւններով: Այդ ալպոմին մէջ ներկայացուած էր հայոց Եղեռնի ամփոփ պատմութիւնը՝ մօտ 35 նկարներով:


ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակչական մարզի մէջ, 1975-1985 տասնամեակին, անհատական նախաձեռնութեամբ եւ Հայ դատի յանձնախումբի քաջալերանքով՝ հայոց պատմութեան, Հայ դատին ու ազատագրական մեր շարժումներուն նուիրուած յունարէն հրատարակութիւնները աչքառու որակ ունեցան:

Պրն. Յ. Ծելալեանի թարգմանութեամբ ու խմբագրական ջանքով եւ Համազգայինի ծախսով հայկական բանաստեղծութիւններու «Անթոլոյիա» (*Ծաղկաքաղ*) պատկառելի ծաւալով եզակի հատորի հրատարակութիւնը 1982ին, 1983էն Հայ դատի յանձնախումբի ջանքերով «Արմենիքա թեմաթա» (*հայկական նիւթեր*) յունարէն պարբերաթերթի 2.000 տպաքանակով լոյս ընծայումը, որ աւելի ուշ ինքզինք կանոնաւորելով հրատարակուեցաւ «Արմենիքա Խրոնիքա» վերակոչուելով:

Հայ դատի վերաբերեալ զանազան գրքոյկներու յունարէնի թարգմանութիւններն ու անոնց տարածումը, ինչպէս օրինակ՝ «Ի Արմենիի», որոնք խթան դարձան, որ յունահայ ազգայիններու մտածողութիւնը սեւեռի Հայ դատին վրայ եւ գաղութային աշխուժութիւնները հունաւորուին այդ ուղղութեամբ:

Նոյնպէս, այս տարիներուն, Հայ դատի յանձ-



Հ.Յ.Դ. Հայ Ղատի Յանձնախումբի հրատարակությունները՝ «Արմենիքա Թեմաթա» պարբերաթերթը

Նախումբին նեցուկով, քաջալերանքով ու գործնական աջակցությամբ, Նեա Չմիռնիի հայազգի փոխքաղաքապետ՝ Վանկելի Խաչատուրեանը՝ Նախաձեռնեց գեղատիպ ու ծաւալուն երկու ալպոմ-հրատարակութիւններու, մին՝ յունարէն լեզուով, Հայաստանի, հայոց պատմութեան, հայկական մշակոյթին ու արուեստներուն նուիրուած՝ «Քար եւ քաղաքակրթութիւն» անուանումով, իսկ երկրորդը՝ յունարէն, հայերէն եւ անգլերէն լեզուներով՝ Ղարաբաղին նուիրուած, «Նակոնո Ղարաբաղ» խորագրով:

Այս երկու հրատարակութիւններուն ալպոմի բաժնին լուսանկարներու հեղինակը նախաձեռնողն է՝ Վանկելի Խաչատուրեանը, իսկ բովանդակութիւնը հեղինակեց Միհրան Քիւրտօղլեան: Երկուքին համար ալ կազմակերպուեցաւ շնորհահանդէս՝ նախարարական ու խորհրդարանական մակարդակով՝ քաղաքական եւ ակադեմական բարձրաստիճան անձնաւորութիւններու ներկայութեան:

60-ամեակի խանդավառ տարիներուն էր, որ յունահայ ազգայիններէն՝ Յարութիւն Սարաճեան (*հետագային Հ. Կ. Խաչի բարերար*), ջերմեռանդ հաւատացող Հայ դատին, Փանկրաթիի իր երկու վաճառատուները նուիրեց Հայ Ղատի Յանձնախումբին:

Քանի մը տարիներ ետք, Հայ դատի յանձնախումբին ուղեկից միութիւններ իրենց պատգամաւորական ժողովներու մէջ որոշում անցուցին, որ գործող վարչութիւնները հասութաբեր ձեռ-

նարկներու եկամուտներէն որոշ տոկոս մը փոխանցեն յանձնախումբին՝ որպէս օժանդակութիւն անոր ծախսերուն:

Եղեռնի 60-ամեակին յաջորդող (1975-1985) տասնամեակը բնութագիծը կազմեց մեր երիտասարդները հայկական պահանջատիրութեամբ տողորելու եւ զանոնք Հայ դատի աշխատանքներուն ներգրաւելու առումով: Այդ տարիներուն որոշուեցաւ, որ Երիտասարդականի կեդրոնական վարչութեան մէկ ներկայացուցիչը մնայուն կերպով մաս կազմէ Հայ դատի Յանձնախումբին, ինչ որ կը կիրարկուի մինչեւ այսօր:

Այս տասնամեակի ընդգծելի իրողութիւններէն մին հանդիսացաւ նաեւ յարաբերական ճիգերու անվիճելի արդիւնաւորութիւնը թէ՛ քաղաքական, թէ՛ ակադեմական եւ թէ՛ միտիայի մարգերու մէջ:

Այս հաստատումին պերճախօս ապացոյցն է այն, որ այդ տասնամեակէն մինչեւ այսօր, յունական պետական-քաղաքական եւ այլ շրջանակներու համար Հայ դատի յանձնախումբը իրողապէս կը ճանչցուի իբրեւ գաղութը ներկայացնող պաշտօնական մարմին:

4.- 1985-1995 ՏԱՆԱՄԵԱԿԸ

Համաշխարհային առումով այս տասնամեակը յատկանշուեցաւ քաղաքական, ընկերային, տնտեսական ու ռազմագիտական յեղաշրջումներով, իսկ հայ ժողովուրդին ու Հայաստանին համար՝ անկիւնադարձային իրադարձութիւններով: 1985 թուականէն Խորհրդային Միութեան մէջ ծայր առաւ վերափոխութեան ընդհանուր շարժում մը, երբ իշխանութեան գլուխ եկաւ Միխայիլ Կորպաչով: Վերափոխութեան այդ շարժումը ի վերջոյ յանգեցաւ համայնավար վարչակարգի փլուզման, Խորհրդային Միութեան տարանջատման, որով եւ Հայաստանի վերանկախացումին՝ 1991 Սեպտեմբեր 21ին:

Վերափոխութեան այդ շարժումի սկզբնական փուլին մէջն իսկ, քաղաքակրթական ու մշակութային հարուստ ժառանգութեան տէր հայ ժողովուրդը առաջինը եղաւ, որ համաժողովրդային պոռթկումով, մարտունակ ցոյցերով ու գործադուլներով պահանջեց ազգային իր արդար իրաւունքը՝ Ղարաբաղի վերակցումը Հայաստանին՝ 1988էն: Որով, տասնամեակի Հայ դատի ընդհանուր գործունեութիւնը ունեցաւ պայքարի բազմաբնոյթ նկարագիր ու տարողութիւն:

55 ԱՆՁՆԱԻՐՈՒԹԵԱՆՑ ՄԱՆԻՖԵՍՏ-ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

1985 թուականի սկզբին, Յունաստանի Հ. Յ. Դաշնակցութիւնն ու Ռամկավար Ազատական կուսակցութիւնը հաղորդագրութեամբ մը հանդէս եկան, ուր ի միջի այլոց կ'ըսուէր.

«Յունաստանի Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնն ու Ռամկավար Ազատական կուսակցութիւնը այսու կը յայտարարեն Մեծ

եղեռնի 70-ամեակի առիթով իրենց միջեւ համաձայնուած գործակցութիւնը եւ կոչ կ'ուղղեն ուղեկից միութեանց, կազմակերպութեանց, հաստատութեանց ու իրաւատէր համայն հայ ժողովուրդի զաւակներուն, որ բոլորուին երկու կուսակցութեանց կողմէ յառաջացուած «ԵՂԵՌՆԻ 70-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԼԵՐՈՒ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԻԱՅԵԱԼ ՄԱՐՄԻՆ»-ին շուրջ, որպէսզի միաճակատ ու միասնական պայքարի կարգախօսով ներկայանան արար աշխարհին՝ ցեղասպան Թուրքիոյ ցեղապաշտական քաղաքականութեան դէմ ծառանալու, մեր մէկուկէս միլիոն նահատակներու արեան բաց հաշիւը պահանջելու եւ բռնագրաւուած հայկական հողերու ազատագրութեան համար անտեղիտալի ու վճռական մեր կամքը դրսեւորելու նպատակով...»:

Այսպէս, յունահայութեան մէջ գործող բոլոր կազմակերպութիւններն ու միութիւնները բոլորուեցան «Եղեռնի 70-ամեակի միացեալ մարմին»-ին շուրջ եւ արժանավայել ձեւով իրագործեցին ծրագրուած յայտագիրը, որ կը ներառներ մամլոյ ասուլիս (ներկայ եղան 60 լրագրողներ, որոնց մէջ հեռատեսիլի եւ ձայնասփիւռի երկու կայաններ, Associated, United press, Agence France Presse, Tanyung, Deutsche Welle, ինչպէս նաեւ արաբական, իտալական եւ թրքական թերթերու թղթակիցներ), որմնագններու եւ թռուցիկներու տարածում, յուշարձանի շուրջ հոգեհանգստեան արարողութիւն եւ խօսք, թրքական դեսպանատան առջեւ ցոյց եւ Օրֆէու ընդարձակ սրահին մէջ եզրափակիչ հանդիսութիւն, ապա նաեւ ժողովուրդային թափօրի կազմութիւն դէպի Անժա-նիս Զինուորի դամբանը՝ դափնեպսակի գետեման համար: Նոյնանման ելոյթներ տեղի ունեցան նաեւ Թեսաղոնիկէի մէջ: Արձանագրենք, որ 60-ամեակին ու յաջորդող տարիներու բոլոր եզրափակիչ հանդիսութեանց, Յունաստանի խորհրդարանական բոլոր կուսակցութիւններն ալ ներկայացուցիչներ ուղարկեցին եւ ողջոյնի խօսքերով իրենց նեցուկը յայտնեցին հայ ժողովուրդին ու Հայ դատի պայքարին: 1987Էն կառավարութիւնն ալ ողջոյնի խօսքով ուղարկեց իր ներկայացուցիչը (*առաջինը՝ կենսոլորտի նախարար Էվանկելոս Գուլումպիս, որուն համար Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը եւ Նոյնինքն նախարարը՝ Մետուտ Երլմազ, օրին իր բողոքն ու դժգոհութիւնը յայտնեց Յունաստանի կառավարութեան*): Աշխատանք տարուեցաւ փոսթ-հեռագրի նախարարութեան մօտ, որպէսզի 70-ամեակին նուիրուած դրոշմաթուղթեր հրատարակէ, բայց այդ ճիգերը չարդիւնաւորուեցան:

Այսպէս, Եղեռնի 60-ամեակով սկսած Հ.Յ.Դ. - Ռ.Ա.Կ. պարագայական գործակցութիւնը շարունակուեցաւ յաջորդող տարիներուն եւս եւ սահմանափակուած մնաց միայն ապրիլեան ելոյթներու շրջագծին մէջ: Եղան նաեւ տարիներ, երբ պարագայական այդ գործակցութիւնն ալ չկայացաւ եւ անջատ միջոցառումներ կատարուեցան, երբեմն Նոյնիսկ անհամ խաչածեւումներ պատահեցան, հակառակ այն իրողութեան, որ Հ.Յ.Դ.

միշտ նախաձեռնեց ու առաջարկեց Ռ.Ա.Կ.ին, որ գործակցութիւն ստեղծուի եւ գէթ Ապրիլ ամսուն միասնաբար ներկայանան հանրութեան: Եղան այնպիսի ամօթալի պահեր, երբ յոյն քաղաքական անձնաւորութիւններ եզրափակիչ հանդիսութեանց բեմէն յորդորներ տուին, որպէսզի համազգային մեր դատը համազգային միասնութեամբ հետապնդուի...

Անցա՛ծ ժամանակներ, որոնց վրայ կանգ առնելը չ'արժեր:

Եղեռնի 70-ամեակի առիթով, Հայ դատի յանձնախումբը նախաձեռնեց ստորագրութիւններու ապահովման՝ քաղաքական, ակադեմական, մտաւորական եւ արուեստի մարզերու մէջ հոչակ վաստակած անձնաւորութիւններէ, որոնք «յայտարարութեամբ մը», ի լուր աշխարհի կը դատապարտէին Հայոց ցեղասպանութիւնը՝ Հայ դատին նեցուկ կանգնելու յանձնառութեան խոստումով:

«Յայտարարութիւնը» ներածական բաժինով մը անդրադառնալէ ետք Երիտասարդ Թուրքերու կողմէ հայոց վրայ գործադրուած ցեղասպանութեան, կ'եզրակացներ.

«... Այս յայտարարութեամբ կ'ուզենք.

Ա.- Հայերուն հետ պատուել՝ 1915ի Տեղասպանութեան զոհերու յիշատակը.

Բ.- Ընդգծել մեր զօրակցութիւնը հայոց հանդէպ, դատապարտել ցեղասպանութիւնը եւ միջազգային իրաւանց սկզբունքներու բռնաբարումը, որով եւ՝ վերականգնումը պատմական ճշմարտութեան,

Գ.-Արտայայտել մեր զօրակցութիւնը հայ ժողովուրդի մղած պայքարին, Հայկական Հարցի խաղաղ լուծման համար եւ վերականգնումը այս ժողովուրդին, իր պապենական հողերուն վրայ»:

Վերոյիշեալ յայտարարութեան տակ իրենց ստորագրութիւնը դրին 55 անձնաւորութիւններ, որոնց մէջ կը գտնուէին, միայն քանի մը անուններ յիշատակելու համար.

Եանիս Վարվիցիոթիս - երեսփոխան, ապա՝ պաշտպանութեան նախարար,

Փարասքեաս Աւդերինոս - եւրոերեսփոխան, ՓԱՍՕՔի գաղափարախօսներէն,

Սիլվա Աքրիթա-երեսփոխան,

Լէոնիտաս Քիրքոս - ներքին համայնավար կուսակցութեան նախագահ,

Մարիա Տամանաքի - երեսփոխան, ապա՝ Սիւնասփիզմոյի նախագահ,

Մանուիս Դլէզոս - երեսփոխան, ԷՏԱի նախագահ,

Վասիլիս Էֆրէմիտիս - եւրոերեսփոխան,

Միքիս Թէոտորաքիս - Աշխարհահոչակ երածիշտ, յօրինող, երեսփոխան, նախարար,

Թիթիքա Փանտազի - եւրոերեսփոխան,

Սթելիոս Փափաթեմէլիս - երեսփոխան, ապա՝ հանրային ապահովութեան նախարար,

Եորդոս Ռոմէոս - եւրոերեսփոխան, ապա՝ նախարար,

Անտոնիս Թրիցիս - երեսփոխան, նախարարական պաշտօններու կոչուած,

Վիրդինիա Ցուտերու - երեսփոխան, արտաքին գործոց փոխ նախարար,

Տիմիթրիս Պէիս - Աթէնքի քաղաքապետ, երեսփոխան,

Պապիս Փեհլիվանիտիս - Նէա Չմիռնիի քաղաքապետ,

Եանիս Ռիցոս - բանաստեղծ,

Մարիոս Փլորիթիս - գրագէտ, լրագրող,

Խրիսթոտուլոս Եալուրիտիս - համալսարանի դասախօս,

Եանիս Խասիոթիս - Թեսաղոնիկէի համալսարանի դասախօս,

Ռէնա Լամաս - կնոջական իրաւունքներու միութեան փոխ նախագահ,

Նիքոս Քունտուրոս - բեմադրիչ,

Եորդոս Լազանիս - բեմադրիչ, դերասան,

Սերաֆիմ Ֆինտանիտիս - Էլէֆթերոթիփիա օրաթերթի խմբագրապետ,

Եանիս Քարթալիս - լրագրող,

Սթամոս Չուլաս - լրագրող:

Այս մանիֆէստ - յայտարարութիւնը արժանավայել արձագանգումի արժանացնելու մտածումով սարքուեցաւ ճաշկերոյթ՝ հեռատեսիլի, ծայնասփիւռի եւ մամլոյ լրագրողներու համար: Արձագանգը եղաւ ակնկալուածէն աւելին:

Եղեռնի 70-ամեակը կը զուգահիւսէր Սեւրի դաշնագրի 65-ամեակին: Այդ առիթով, Նոյեմբեր 27ին, Հայ Դատի Յանձնախումբը կազմակերպեց կլոր սեղանի գրոյց, Royal Olympic պանդոկի սրահին մէջ, մասնակցութեամբ համալսարանի չորս դասախօսներու, Կիպրոսէն՝ Մաքարիոսի անուան արխիւներու հաստատութեան տնօրէն՝ Փափատոփոլոսի, Թեսաղոնիկէի համալսարանէն՝ Ե. Խասիոթիսի, Փանտիօ համալսարանի դասախօսներէն՝ Ղ. Տալտասի եւ Տ. Գոնսթասի:

Անկէ ետք, քանի մը առիթներով եւս կազմակերպուեցան կլոր սեղանի շահեկան գրոյցներ՝ Աթէնք եւ Թեսաղոնիկէ, Հայոց Տեղասպանութեան, Եւրոխորհրդարանի բանաձեւին, Ղարաբաղեան խնդրին եւ այլոց մասին:

Երիտասարդական մակարդակի վրայ ալ հարցազրոյցներ կազմակերպուեցան, յունական կուսակցութեանց երիտասարդականներու մասնակցութեամբ:

Այդ տարիներուն, 1987ին կամ 1988ին, Աթէնքի քաղաքապետին՝ Միլթիատիս Էվերթի հրաւերով մայրաքաղաք եկած էր Կոսթանտնուպոլսոյ քաղաքապետ Ա. Տալան, որու կեցութեան օրերուն Հայ դատի յանձնախումբի նախաձեռնութեամբ գործակցութիւն ստեղծուեցաւ Յունաստանի մէջ գործող Փոքր Ասիոյ յոյներու, կիպրացիներու, քիւրտերու եւ մեր երիտասարդականի միջեւ եւ միասնաբար ձեռնարկուած յաջորդական երեք օրերու ընթացքին կատարուած բուն ցոյցերով կարելի եղաւ գրեթէ խանգարել նախատեսուած միջոցառումներու յայտագիրը: Յատկապէս Սինտաղմայի հրապարակին վրայ, երբ Պոլսոյ թուրք քաղաքապետը կը պատրաստուէր դափնեպսակ զետեղել Անձանօթ Չինուորի յուշադամբանին, միասնական ցոյցը այնքան անսպասելի եղաւ ու

խանգարիչ, որ Միլթիատիս Էվերթ (հետագային Նոր Հանրապետութիւն կուսակցութեան նախագահ եւ վարչապետութեան թեկնածու) յայտարարեց. «Յոյն-թուրք յարաբերութիւններուն ընթացքը փողոցը չէ որ պիտի որոշէ...»:

Նոյնանման բողոքի ցոյցեր կատարուեցան, երբ Թուրքիոյ վարչապետ Թ. Էօզալ պաշտօնական այց տուաւ Աթէնք՝ ապահովութեան խիստ պայմաններու տակ:

Այս ժամանակաշրջանին Էր, որ Հայ Դատի Յանձնախումբը նկատի ունենալով իր բազմամակարդակ յարաբերութիւններու եւ բազմաբնոյթ գործունեութեան դաշտը, որոշեց եւ իրագործեց Հայ դատի գրասենեակի հիմնումը՝ մասնաժամ պաշտօնակատար գործիչով: Այդ պաշտօնը յաջորդաբար վարեցին Անի Ճիզմէճեան (*կարճ ժամանակով*), Մարլէն Քիրտօղլեան, Ազնիւ Էրջէնեան եւ Մարի-Ռոզ Պետոյեան, այժմ Յովիկ Պապօղլեան:

Սեփական գրասենեակի իրագործումը խթան մը եղաւ, որ մտքերու մէջ հասուննայ յոյն-հայ բարեկամութեան լիկայի մը ստեղծումը եւ այդ ուղղութեամբ գործնական քայլեր առնուեցան, մինչեւ որ պաշտօնապէս իրականացաւ այդ ծրագիրը 1992 թուականին, երբ Հայաստանի վերանկախացումը արդէն հռչակուած էր, Ղարաբաղի պատերազմը ամենէն տազնապալի շրջանին մէջ կը գտնուէր եւ իրական հողի վրայ՝ օտար բարեկամներու աջակցութեան կարիքը այնքան սուր կերպով կը զգացուէր:

Յունահայկական բարեկամութեան լիկայի հիմնադիր կազմը բաղկացաւ 27 անձերէ, որոնց 22-ը Յունաստանի քաղաքական ու մտաւորական շրջանակէ: Կարելոր անուններ Էին. Թէոտորոս Քացանեւաս (*երեսփոխան*), Եորդոս Գացիֆարաս (*նաւային առեւտուրի նախարար*), Սթելիոս Փափաթեմելիս (*ներքին-հանրային կարգապահութեան նախարար*), Եանիս Քափսիս (*արտաքին գործոց փոխ նախարար*), Նիքիթաս Գաքլամանիս (*երեսփոխան*), Ալէքս. Ալավանոս (*երոտերեսփոխան*), տիկին Վիրդինիա Ցուտերու (*արտաքին գործոց փոխ նախարար*), Նիքոլաոս Ուզունօղլու (*համալսարանի դասախօս*), Լէֆթերիս Փափատոփոլոս (*գրագէտ-լրագրող*), Մանոս Էլէֆթերիու (*երածիշտ*), Անտրէաս Լէնտաքիս (*երեսփոխան*) եւ ուրիշներ: Հիմնադիր այս կազմը, նախադատ ատեանի որոշումով պաշտօնական ճանաչում ստանալէ ետք, յառաջացուց եօթնանդամ գործադիր մարմին՝ նախագահութեամբ Թէոտորոս Քացանեւասի:

Յունահայկական լիկան գործօն ներկայութիւն մը եղաւ սկզբնական օրերուն եւ իր ներդրումը ունեցաւ՝ Հայաստան-Յունաստան կապերու սերտացման, դէպի Հայաստան ու Ղարաբաղ մարդասիրական օժանդակութիւններու ապահովման եւ համայնքային մակարդակով՝ հայակրթական մարզի մէջ մեր դիմագրաւած դժուարութիւնները հարթելու խնդրին մէջ, ինչ կը վերաբերի հայ ուսուցիչները եւս կրթական նախարարութեան պիտոճէն հատուցուելու հարցին:

Տարիներու երկայնքին, Հայ դատի ուղղու-

թեամբ մեր ծաւայած բազմաճակատ ու արդիւնաւոր աշխատանքը ոչ միայն ապահովեց Յունաստանի քաղաքական բեմի վրայ դերակատար գործիչներու համակրանքը, այլ նաեւ յունահայ կազմակերպ օճախը վերածեց հաշուառելի ազդակի եւ աւելցուց անոր քաղաքական կշիռը:

Շնորհիւ մեր վաստկած քաղաքական կշիռին, նաեւ շնորհիւ երկու ազգայիններու՝ պրն.ներ Պետրոս Կիրիւնլեանի եւ Սարգիս Աղապատեանի ի գործ դրած երկա՛ր ջանքերուն, այս տասնամեակի սկզբին Եր մօտաւորապէս, երբ կարելի դարձաւ յաջողցնել, որ Հայ Կապոյտ Խաչի երկու վարժարաններու նախ յոյն, ապա 6-7 տարի վերջ նաեւ հայ ուսուցիչներու վճարումները ստանձնել կրթական նախարարութիւնը:

ԵՒՐՈՒՆՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱԶԵԻ

Ե տ դարձ մը կատարելք դէպի 1985 թուականը: Նոյն տարուան Դեկտեմբերէն, Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոն կեդրոնական իր գրասենեակն ու Դրօշակի խմբագրութիւնը պաշտօնապէս փոխադրեց Աթէնք եւ Հայ դատի համակուսակցական գործունեութիւնը ծրագրելու, համադրելու եւ վարելու համար կեանքի կոչեց «Հայ դատի կեդրոնական մարմին», բաղկացած հետեւեալներէն՝ Միհրան Զիրտօղլեան՝ ատենապետ, Ժիրայր Պետճեկեան՝ քարտուղար, խորհրդականներ՝ Շահան Ֆարանճեան, Յովսէփ Պարազեան եւ Արաքսի Աբելեան: Եւ այսպէս, որոշ ժամանակ մը, Աթէնք դարձաւ Հայ դատի ընդհանուր գործունեութեան առաջատար կեդրոնը: Հինգ-վեց տարիներու ընթացքին, առնուազն երեք առիթներով Աթէնքի մէջ գումարուեցան Հայ դատի վերաբերեալ խորհրդաժողովներ՝ Սփիւռքի տարբեր շրջաններու Հայ դատի յանձնախումբերու ներկայացուցիչներով: (Երրորդին՝ նաեւ Հայաստանէն):

Ըսինք արդէն, որ նոյն տարին, 1985ին, ՄԱԿի Մարդկային իրաւանց ենթայանձնախումբը որդեգրած էր 30-րդ ծանօթ պարբերութիւնը, ինչ որ Հայ դատի յանձնախումբերուն առջեւ ասպարեզ կը բանար, որ նուիրուին մեծ ճիգի, որպէսզի միջազգային ֆորումներու եւ տարբեր երկիրներու խորհրդարաններու կողմէ եւս ճանաչումի արժանանայ Հայոց Տեղասպանութիւնը:

Առաջին հերթին, գլխաւոր թիրախ դարձաւ Եւրոմիութեան խորհրդարանը:

Հայկական ընդհատակեայ խումբերուն նախորդ տարիներու շղթայազերծած ուժական պայքարին արձագանգները տակաւին թարմ էին՝ յատկապէս Եւրոպական միջավայրին մէջ: 1984ին, Փարիզի մէջ «Ժողովուրդներու Մնայուն Ատեան»ը արդէն իսկ դատապարտած էր Հայոց Տեղասպանութիւնը: Նոյն տարին, ի լուր աշխարհի, Ֆրանսայի նախագահը՝ մեծ մարդասէր Ֆրանսուա Միթերան նոյնպէս դատապարտած էր Հայոց ցեղասպանութիւնը եւ արդարութիւն պահանջած հայ ժողովուրդին համար: Ասոնց վրայ աւելցնելով Հայ դատի յանձնախումբերու տարած քաղաքական, քարոզչական, ցուցական եւ յարաբերական ծա-

ւալուն ու հետեւողական աշխատանքները, կարելի էր անվարան հաստատել, որ պատրաստ էր ենթահողը այդ մեծ արշաւին, այսինքն, Եւրոմիութեան խորհրդարանէն ցեղասպանութեան ճանաչման ձեռնարկելու համար:

Իրեն լծակից ունենալով Ֆրանսայի եւ Յունաստանի Հայ դատի յանձնախումբերը, Կեդրոնական մարմինը զօրաշարժի ենթարկեց սփիւռքի ազգային-միութենական կառոյցները այդ նպատակին համար: Նախ, բողոքի միահամուռ ալիք մը բարձրացաւ համապատասխան գրասենեակներու եւ Եւրոպական Միութեան անդամակցող երկիրներու դեսպանատուներուն մօտ, սկզբնական այն մերժումին դէմ, զոր յայտնած էր Եւրոխորհրդարանի Քաղաքական յանձնախումբը, իբրեւ օրակարգ ունենալու Վանտերմէօլպրօքի ներկայացուցած հայանպաստ բանաձեւումը: Ապա, բազմակողմանի յարաբերութեանց ձեռնարկուեցաւ յատկապէս Ֆրանսայի քաղաքական շրջանակներու հետ, որոնք իրենց կշիռով ազդեցիկ ներկայութիւն էին Եւրոխորհրդարանին մէջ: Իսկ Յունաստանի եւրոներեսփոխանները տրամադիր էին արդէն անվերապահօրէն զօրավիգ կանգնելու ցեղասպանութեան ճանաչման ու դատապարտման: Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոս (ապա Ամենայն հայոց կաթողիկոս) իր կարգին առիթ մը ստեղծելով տեսակցեցաւ Ս. Օծութիւն Պապին հետ (Վատիկան) խնդրելով կաթողիկէ քահանայապետէն, որ բարեխօսէ հոն, ուր որ պատշաճ կը նկատէ, որպէսզի եւրոներեսփոխաններ ի նպաստ դիրքորոշուին, երբ պահը ներկայանայ:

Հայ դատի կեդրոնական մարմինը Աթէնքի մէջ համդիպում մը ունեցաւ ֆրանսացի եւրոներեսփոխան՝ պրն. Հանրի Սապիին հետ, որ նուիրուած էր մեր նպատակին եւ որ ֆրանսացի եւրոներեսփոխաններուն եւ ընդհանրապէս Եւրոխորհրդարանին մէջ տիրական ներկայութիւն Եր եւ կարկառուն դէմք:

Եւ այսպէս, համակողմանի յարաբերութիւններու հետեւողականութիւնը, մանաւանդ Ֆրանսայի Հայ դատի յանձնախումբին բազմամակարդակ, բեղուն ու վճռորոշիչ գործունեութիւնը, ինչպէս նաեւ Յունաստանի Հայ դատի յանձնախումբին ոչ նուազ դերակատարութիւնը յաջողեցան, որ պետական կշիռով եւ դիւանագիտական խոհանոցներու մէջ իր համբաւեալ վարպետութեամբ Թուրքիան չկարենայ խափանել Հայոց Տեղասպանութեան ճանաչման ու դատապարտման գործընթացը՝ Եւրոխորհրդարանին մէջ:

ԲԱՆԱԶԵԻ ԵՒՐՈՒՆՈՐՀՐԴԱՐԱՆԻ (18 Յունիս 1987)

Եւրոխորհրդարանը՝

- Նկատի ունենալով յանուն ընկերվարական խմբակցութեան ֆրանսացի եւրոներեսփոխան ու հայութեան մեծ բարեկամ Հանրի Սապիի Հայկական հարցի քաղաքական լուծումի մը համար ներկայացուցած առաջարկը,



Սթրասպուրկի մէջ հաւաքուած հայ ցուցարարներ անձկութեամբ կը սպասեն Եւրոպական հորհրդարանի կողմէ Հայոց Տեղասպանութեան ճանաչման բանաձեւի ընդունման: Քիչ ետք՝ անձկութիւնը կը վերածուէր ծայրայեղ խանդավառութեան ու գոհունակութեան

- Նկատի ունենալով յոյն եւրոբրեսսիոյի Գոլթրթրոնիի Հայկական Հարցի վերաբերեալ եւ Ապրիլ 24ը Հայոց Տեղասպանութեան օր հռչակելու ներկայացուցած առաջարկը,

- Նկատի ունենալով Քաղաքական Յանձնախումբի (A2-33/87 թուակիր) ներկայացուցած տեղեկագիրը (յանձնախումբը սկզբնական մերժումէն ետք, ընդունած էր օրակարգի հարց դարձնելու առաջարկը), նկատի առնելով նաեւ այլ պարագաներ,

Եւրոպական հորհրդարանը քուէարկեց բանաձեւ, որու բովանդակութիւնը կը բաղկանար 15 յօդուածներէ:

Թիւ 2 յօդուածով ընդունելէ ետք, թէ Օսմանեան կայսրութեան մէջ 1915-1917ին հայոց կրած ողբերգական դէպքերը ցեղասպանութիւն են այն եզրով, որ ՄԱԿի ընդհանուր ժողովը որդեգրած է 9 Դեկտեմբեր 1948ին, ցեղասպանութեան ոճիրի կանխարգիլման համար, թիւ 3 յօդուածը բառացի կ'ըսէ.

«Կը պահանջէ իր հորհուրդէն (Եւրոխորհրդարանը), որ հետամուտ ըլլայ այսօրուան թրքական կառավարութեան մօտ, որպէսզի ան ճանչնայ 1915-1917 ժամանակաշրջանին հայոց վրայ գործադրուած ցեղասպանութիւնը եւ ջանք թափէ՝ քաղաքական երկխօսութիւն հաստատելու համար Թուրքիոյ եւ Հայոց ներկայացուցիչներու միջեւ»:

Վերջին յօդուածով (թիւ 15) Եւրոխորհրդարանը կը յանձնարարէ նախագահութեան, որ քուէարկուած բանաձեւը փոխանցէ Յանձնաժողովին, Եւրոպական հորհուրդին, արտաքին գործոց նախարարներուն, Եւրոպական Միութիւն-Թուրքիա կապի հորհուրդին, ինչպէս նաեւ Թուրքիոյ, Պարսկաստանի, Սովետական Միութեան կառավարութիւններուն եւ ՄԱԿի ընդհանուր քարտուղարին:

Անվիճելի էր շահուած յաղթանակը, խանդավառութիւնը՝ աննախընթաց եւ Հայ Դատի յանձնախումբերու հպարտութիւնը՝ արդար:

Նոյն եւ յաջորդ օրերուն, պարզ գուգադիպութեամբ թէ քաղաքական իմաստ տալու դիտաւորութեամբ, Թուրքիոյ զինուորական նախագահը Զ. Էվրէն շրջապտոյտի ելած էր Արեւմտահա-

յաստան՝ Թուրքիոյ բռնագրաւած նահանգները: Հոն, ակնարկելով Եւրոխորհրդարանի քուէարկած բանաձեւին, պետական մարդու չվայելող շղագրգռութեամբ յայտարարեց, թէ՛ «Թուրքիոյ գլխուն խաղ կը խաղցուի», թէ՛ «այս հողերը Թուրքիոյ չեն պատկանիր եղեր» եւ ցուցամատը սպառնազին բարձրացուցած՝ յիսորտաց. «Եթէ կրնան, թող գան եւ առնեն»...:

Հոս, պատմական ճշմարտութիւն մը արձանագրելու համար փակագիծ մը բանանք եւ ըսենք հետեւեալը.

Յունաստանի համայնավար Եւրոբրեսսիոյի Վասիլիս Էֆրեմիտիս, որ Հայ դատի յանձնախումբին հրապարակած մանիֆէսթը ստորագրող 55 անձնաւորութիւններէն էր, եղաւ մէկը անոնցմէ, որոնք սերտօրէն գործակցեցան Հայ դատի յանձնախումբին հետ՝ Եւրոխորհրդարան ներկայացուելիք բանաձեւի մշակման սկզբնական աշխատանքին:

Եւրոխորհրդարանի նախագահութիւնը կատարեց առաջարկ մը, որ բանաձեւին մէջ տեղ գտաւ թիւ 11 յօդուածով եւ յօդուածներուն ամբողջութիւնը միանուագ քուէարկութեան դրաւ: Պրն. Վասիլիս Էֆրեմիտիս խնդրեց նախագահութենէն, որ քուէարկութիւնը կատարուի յօդուած առ յօդուած եւ կամ, գէթ թիւ 11 յօդուածը բացառութիւն կազմէ եւ առանձնաբար քուէարկուի:

Նախագահութիւնը մերժեց: Ինչ կ'ըսէր թիւ 11 յօդուածը: Ահաւասիկ.

«Կը դատապարտէ (Եւրոխորհրդարանը) անհատական ազատութեանց բռնաբարումները, որոնք կը գործադրուին հայ ժողովուրդին վրայ՝ Սովիեթ Միութեան մէջ»:

Մարդը համոզումով համայնավար էր: Կ'ուզէր հաւատարիմ մնալ ե՛ւ արդարութեան ե՛ւ կուսակցական իր խղճին դիմաց: Նախագահութիւնը այդ առիթը չտուաւ կամ չուզեց տալ իրեն եւ իր կուսակիցներուն: Համայնավարները չքուէարկեցին: Կուսակցական խիղճը գերակշռեց. Թերեւս անոր համար, որ անոնք իրենց հանգամանքը կը պարտէին կուսակցութեան: Այնուամենայնիւ, գոհունակ վերադարձան Սթրասպուրկէն քուէարկուած բանաձեւին համար եւ յայտնեցին, թէ իրենք



Հայ դատի պահանջատիրության հաւաք Երեւանի մէջ (1990)

վատահ էին, որ իրենց կեցուածքը պիտի չխախտէր քուէարկութեան արդիւնքը:

Օդակայանին մէջն իսկ Հայ դատի յանձնախումբը հայութեան երախտագիտութիւնը յայտնեց անխտիր բոլոր յոյն եւրոներեսփոխաններուն, երբ անոնք գոհունակ ու յաղթական վերադարձան Սթրազպուրկէն:

Հետագային, 2007-ին, Եւրոխորհրդարանի բաւաճեւի ընդունման 20-ամեակին՝ դերակատար եւրոներեսփոխաններուն ի պատիւ Հայ դատի յանձնախումբը հրապարակային ճաշկերոյթ մը սարքեց, որու ընթացքին յուշանուէրներ յանձնեց անոնց: Հոն, ինքնաբուխ նուիրատուութիւններէ գոյացաւ շուրջ 45.000 եւրօ:

ՂԱՐԱՔԱՂԵԱՆ ՇԱՐԺՈՒՄ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԿԱՆԱՑՈՒՄ

1988 թուականի Փետրուարէն, նախ՝ համաժողովրդային ցոյցերով, ապա՝ ազատագրական պայքարով, հայութիւնը նետուեցաւ Ղարաքաղը Ատրպէյճանի լուծէն ազատագրելու անհաւասար մարտի մը մէջ: Նոյն տարին, Դեկտեմբեր 7ին, Հայաստանը հարուածուեցաւ մեծ երկրաշարժով: Գրեթէ քանդուեցան Սպիտակ, Գիւմրի եւ Վանաձոր քաղաքները, ինչպէս նաեւ կարգ մը գիւղեր հիմնայատակ կործանեցան: Հազարաւոր որբացած երեխաներ եւ անտուն մնացած ընտանիքներ պատսպարանի, սնունդի, հագուելիքի եւ ջերուցման անմիջական կարիքի մէջ գտնուեցան: Միաժամանակ, հայրենական ժողովուրդը քաղաքական անկախութեան վերատիրանալու անտեղիտալի կամքով՝ մտաւ համապատասխան գործընթացի մէջ:

Մէկ կողմէ Ղարաքաղեան պայքարին արդարութիւնը հաստատելու, միւս կողմէ Հայաստանի

վերանկախացման գործընթացին համար քաղաքական աշխարհին նեցուկը ապահովելու, ինչպէս նաեւ շարժահարներուն անմիջական օգնութիւն հասցնելու անհրաժեշտութիւնը ստեղծեց այնպիսի կացութիւն, զոր կարենալ դիմագրաւելու համար, Սփիւռքի բոլոր հայօճախները պետք էին գերազանցել իրենց կարողականութիւնը, համակողմանի զօրաշարժ յայտարարէին եւ լծուէին բազմաճակատ գործունէութեան:

Այն փաստը, որ աշխարհի բոլոր կողմերէն, պետական թէ բարեսիրական մակարդակներու վրայ, շարժահարներուն ծանր վիճակը մեղմելու համար անմիջական օգնութիւններ հասան Հայաստան, վկայեց, որ սփիւռքահայութիւնը անցնող տարիներու ընթացքին պետական եւ հասարակական շրջանակներու հետ իր մշակած յարաբերութեանց շնորհիւ կրցած է լայն համակրանք ստեղծել իր շուրջ եւ հաշուառելի ազդակի վերածուիլ: Աւելի ուշ, միեւնոյն վկայութիւնը կազմեց



Արցախի ժողովուրդին կողմէ արդարութեան պահանջք եւ Ղարաքաղ Կոմիտէի ստեղծում



Երեւանի մէջ ցուցարարներ հաւաքի կը մասնակցին՝ Ղարաբաղի վերամիացման պահանջքով

այն իրողութիւնը, որ Հայաստան միւսներէն առաջ ճանաչումի արժանացաւ իբրեւ անկախ պետութիւն եւ շատ արագ ունեցաւ իր դիւանագիտական ներկայացուցիչները տարբեր երկիրներու մէջ: Ի զուր չէր, որ առիթով մը, Վրաստանի նախագահը՝ Է. Շեւարտնաձէ յայտարարեց. «Ատրպէյճան քահիւղ ունի, իսկ Հայաստան՝ Սփիւռք...»:

Ծանր ու սեւ միտիթարանքի բառախաղով մը՝ ջարդի ու տեղահանութեան հետեւանք-չարիք սփիւռքը, առաջին անգամն ըլլալով, «բարիք» մը դարձաւ Հայաստանին համար:

Եւ այս յաջողութեանց մէջ, գլխաւոր դերակատարութիւնը անվիճելիօրէն պատկանեցաւ Հայ դատի յանձնախումբերուն եւ անոնց հովանի՝ Հ.Յ.Դ.ին:

Հսկայ աշխատանքի կը կարօտի տարուած գործունէութիւնն ու իրագործումները համապարփակ ներկայացնելու փորձ մը: Այդ մասին թերեւս գաղափար մը տրուի, եթէ արձանագրուի, թէ ինչպէս այլ տեղեր, նոյնպէս եւ Յունաստանի մէջ, Աթէնք ու Թեսաղոնիկէ, Հայ դատի յանձնախումբերը, Հ.Յ.Դ. մարմինները եւ հաշտան վարչութիւնները Ղարաբաղեան շարժումին յաջորդող չորս-հինգ տարիներու ընթացքին ինքզինքնին դրին «բաց Սիստ»ի մէջ, գործեր համադրելու, իրագործելու եւ անակնկալ իրադրութիւններ դիմագրաւելու համար: Աշխատանքի լծուեցան նաեւ ազգային ու միութենական ուղեկից բոլոր գործօնները: Կարգ մը պարագաներու գործակցութիւն ստեղծուեցաւ ՌԱԿի հետ, ինչպէս օրինակ՝ Երկրաշարժի հանգանակութեան եւ Ղարաբաղեան պայքարի որոշ փուլերուն՝ խորհրդային դեսպանատան առջեւ կազմակերպուած ցոյցերու մէջ, որոնց, առաջին եւ աւա՛ղ, վերջին անգամն ըլլալով, քով-քովի եկան եւ մասնակցեցան Բարեգործականի եւ Հայ Կապոյտ հաշի ազգային վարժարաններու աշակերտները, միասնաբար:

Համառօտակի նշենք այդ տարիներու ընթացքին տարուած կարգ մը աշխատանքները, որպէսզի գաղափար մը կազմուի կատարուածներու

տարողութեան մասին:

ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԶ

ՌԱԿի հետ ստեղծուեցաւ Հանգանակիչ կոմիտէ, որ եւթայանձնախումբերով տարածուն հանգանակութեան ձեռնարկեց շարժառարներուն օգնութեան հասնելու համար: Աւելի քան մէկ միլիոն տղար գոյացաւ, որուն կէսէն շատ ավելի տղկոսը՝ Հ. Կապոյտ հաշի անուան բացուած հաշիին զետեղուած ինքնաբուխ նուիրատուութիւններով յոյներու կողմէ:

- Դիմում կատարուեցաւ Olympic օղանաւային ընկերութեան եւ անվճար ապահովուած երկու օղանաւերով սննդամթերք, դեղօրայք եւ հագուստներ ուղարկուեցան Հայաստան: Ուղարկուածներուն մէջ կային շուրջ 200 մուշտակէ վերարկուներ, նուէր՝ յոյն սրտցաւ մուշտակագործներէ:

- Կազմուեցաւ «Հայրենիքի օգնութեան մարմին», որու շուրջ համախմբուած սրտցաւ ազգայիններու միջոցով, ինչպէս նաեւ Հայ Կապոյտ հաշի եւ Հայ Գթութեան հաշի նիւթական լուրջ յատկացումներու շնորհիւ, ձեռնարկուեցաւ սննդահաւաքի, դեղօրայքի հայթայթման եւ հագուստահաւաքի մեծ արշաւ մը: Ապահովուեցան նաեւ օժանդակութիւններ՝ յունական Կարմիր հաշէն եւ յունական գաղթականաց գրասենեակէն:

Ամէն անգամ որ դիմում կատարուեցաւ արտաքին գործոց եւ կամ պաշտպանութեան նախարարութեան, առանց որեւէ առարկութեան տրամադրուեցան զինուորական օղանաւեր՝ ամբարուած պաշարները Հայաստան փոխադրելու համար, Աթէնքէն եւ Թեսաղոնիկէէն: Այդ նպատակին համար, շուրջ 7-8 առիթներով ոչ միայն զինուորական օղանաւեր տրամադրուեցան, այլ նոյնիսկ կարգ մը պարագաներու, նաեւ վճարուեցան... Երեւանի օղակայանի Էջքի տուրքերը:

Կարելի չէ յուզումով չարձանագրել այն սրտցաւութիւնն ու ջերմեռանդութիւնը, զոր ցոյց տուաւ յոյն հասարակութիւնը, պարզ ու անանուն մարդիկ թէ ձեռնարկու-գործատէրեր: Ոչ միայն ընդառաջեցին դիմումներու, այլ յաճախ իրենք փնտռեցին յանձնախումբը, որպէսզի օգնութիւն կատարեն: Եղան նոյնիսկ պարագաներ, որ իրենց նուիրած հագուստ-տաբատներուն գրպանները որոշ գումար մը դրին, նպաստընկալին քանի մը օրուան ապրուստը հոգացած ըլլալու մտածումով: Այդ օրերու մթնոլորտին մէջ եղողը գիտէ, թէ ցուցաբերուածը օգնութիւն չէր, այլ՝ հոգեկցութիւն:

- 1992ին Արցախի ազատագրական պատերազմի ամէնէն տաք օրերուն, Արցախի մարտնչող ժողովուրդին հետ ըլլալու մտածումով, Յունաստանի Հ. Յ. Դաշնակցութիւնը յառաջացուց Արցախի ժողովուրդին զօրակցութեան յանձնախումբը, որ ձեռնարկեց ծաւալուն դրամահաւաքի: Շուտով հանգանակուեցաւ պատկառելի գումար, որու կարելոր մասը յատկացուեցաւ զինուորական 3.000 տարագներու լրիւ շարքի եւ 1.000 սաղաւարտներու գնումին՝ Հոնկ Գոնկէն: Դեպի Հայաստան օղային թէ ծովային ճանապարհի չգոյութեան պատճառով, տարագներն ու սաղաւարտները

Երեւան փոխադրուեցան Յունաստանի վրայով, ինչ որ դիւրին գործ չեղաւ:

Յանձնախումբը նաեւ ստանձնեց պատուագինի վճարումը հինգ բժիշկներու, որոնք յանձն առին Հայաստանէն մեկնիլ Արցախի զանազան ճակատներ, բժշկական ծառայութիւն կատարելու համար: Հանգանակուած գումարին մնացեալը փոխանցուեցաւ Արցախի իշխանութեանց:

ՔԱՐՈՉՉԱԿԱՆ

- Ազատ Օրի խմբագրատան մէջ հաստատուեցաւ «**լրատու-կեդրոն**», որ Հայաստանէն ու Արցախէն հասած լուրերը թարգմանելով փոխանցեց հաղորդակցական միջոցներու:

- Դիմուեցաւ «**Amnesty International**»-ի Յունաստանի մասնաբաժնին եւ Մամլոյ միջազգային համադաշնակցութեան, որպէսզի յայտարարութեամբ մը «**որդեգրեն**» «**խորհրդային Ղարաբաղ**» թերթի բանտարկուած անձնակազմը:

- Հաստատուեցաւ դրութիւն, որպէսզի անհատ ազգայիններ հեռաձայններով անհանգստացնեն խորհրդային (*ապա ռուսական*) դեսպանատունը՝ հետաքրքրուելու համար հայրենական ժողովուրդի վիճակով:

- 1990 Մայիս 2-ին սարքուեցաւ մամլոյ ասուլիս, նուիրուած արցախեան պայքարին: Նոյնպէս, երիտասարդականը կազմակերպեց կլոր սեղանի զրոյց, միեւնոյն նիւթով, յոյն քաղաքական կուսակցութեանց երիտասարդականներու մասնակցութեամբ: Մետիայի արձագանգը այնքան մեծ եղաւ, որ Էլէֆթերոթիփիա տարածուն օրաթերթը հարցազրոյց մը ունեցաւ Հ. Յ. Դ. ի ներկայացուցիչին հետ եւ լման էջ մը տրամադրեց: Հետագային, քանի մը առիթներով Հայ դատի յանձնախումբը Հայաստան ու Արցախ ուղարկեց կարելոր թերթերու յոյն լրագրող-թղթակիցներ, որոնք իրենց վերադարձին, յօդուածաշարքերով եւ լուսանկարներով անդրադարձան հայրենական ժողովուրդի մարտնչումներուն:

- Արցախեան ազատամարտին նուիրուած նկարչական շրջուն ցուցահանդէսներ կազմակերպուեցան երիտասարդներու կողմէ, Աթէնքի, Փիրէայի եւ այլ վայրերու բազմամարդ հրապարակներու վրայ: Բարձրախօսներէն մերթ հայկական երաժշտութիւն կը լսուէր եւ մերթ՝ յունարէն լեզուով բացատրութիւններ կը տրուէին Արցախեան պայքարի մասին:

- Չորս առիթներով ցոյցեր կազմակերպուեցան խորհրդային դեսպանատան առջեւ, որու միջոցով բողոքի հեռագիրներ փոխանցուեցան Մ. Կորպաչովիին: Այն օրերուն, երբ Ատրպէյճանի մէջ հայերու դէմ հալածանքը վերածուեցաւ փոկրոմի, Աթէնքի յունական խորհրդարանի մուտքին կազմակերպուեցաւ ցոյց մը, որմէ պատուիրակութիւն մը յուշագիր փոխանցեց նախագահին եւ խորհրդարանական երեք կուսակցութեանց, կոչ ընելով անոնց, որ դատապարտեն ազերիական բռնութիւնները: Այդ յուշագիրը խորհրդային դեսպանատան ճամբով՝ ուղարկուեցաւ նաեւ խորհրդային Միութեան կառավարութեան:



Աթէնքի մէջ ռուսական ԱԷՐՈՖԼՈԹ օդանաւային ընկերութեան գրասենեակներու գրաւում

Յոյն եւ հայ հասարակութեան ուշադրութիւնը Ղարաբաղի հարցին վրայ կեդրոնացնելու համար կազմակերպուեցան մամլոյ ասուլիս եւ գաղութահայութեան համար՝ գեկուցական երկու միջոցառումներ:

ԱԷՐՈՖԼՈԹ-INTOURIST-Ի ԳՐԱՍԵՆՏԱԿՆԵՐՈՒ ԳՐԱԻՈՒՍ ԵՒ ՆՍՏԱՅՈՅՑ

Այդ օրերուն, Յունաստանի Կեդրոնական Կոմիտէն որոշեց դիմել այնպիսի քայլի, որուն լուրը տարածուէր ամէնուր, հասներ խորհրդային իշխանութեանց ականջին եւ հայրենական ժողովուրդը զգար, որ ինք առանձին չէ իր պայքարին մէջ: Թիրախ դարձուց խորհրդային Միութեան զբօսաշրջիկութեան օդանաւային գրասենեակները (*Intourist*), որոնք կը գտնուէին Աթէնքի կեդրոնական մասին մէջ: Ընտրուեցաւ շաբթուան ամէնէն շատ եռուզեռ ունեցող օրը՝ Ուրբաթ:

Դէպքէն առաջ լուր տրուեցաւ լրատուական միջոցներուն՝ հեռատեսիլ, ձայնափիւռ, մամուլ, որ Intouristի գրասենեակներուն մէջ «**անսովոր դէպքեր կը պատահին**»: Բազմաթիւ թղթակիցներ փութացին այդ վայրը: 6 Սեպտեմբեր 1990 թուական: Երիտասարդականի անդամներ մտան գրասենեակներու մէջ եւ «**խաղաղ գրաւում**» իրագործեցին: Պատահեցաւ այն, ինչ որ նախատեսուած էր: Արձագանգը եղաւ շատ աւելի մեծ, քան արարքը: Ղարաբաղը արդէն կը տիրապետէր միջազգային ամէնօրեայ լուրերուն մէջ եւ անոր կապուած որեւէ «**դէպք**» բնական էր, որ աշխարհի շրջանը ըներ, մանաւանդ որ հազուադէպ էին սովետական հաստատութեանց դէմ նմանօրինակ արարքները: Դէպքին վայրը հասաւ ոստիկանական ջոկատ, ընկերակցութեամբ դատախազի, որու թելադրանքով եւ յաւելեալ աղմուկէ ու քարոզութենէ խուսափելու համար, խորհրդային դեսպանը դիւանագէտ մը ուղարկեց, որ տղոց հետ բանակցեցաւ եւ խոստացաւ իրեն յանձնուած յուշագիրը յղել Միխայիլ Կորպաչովիին: «**Գրաւում**



Ապրիլ 24ի ցոյց Աթենքի մէջ

մը» վերջ գտաւ:

Այդ դէպքէն ետք, խորհրդային դեսպանատան համար յանկարծ «հաշուառելի» դարձաւ Հայ դատի յանձնախումբը, որուն հետ տեսակցելու հրաւեր ուղղեց Նոյնինքն դեսպանը, ապա Նշանակեց դիւանագետ մը, որ անհրաժեշտ առիթի կապ հաստատէ յանձնախումբին հետ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ

1988-1993 երկարող ժամանակաշրջանին, Աթենքի եւ Թեսաղոնիկէի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատասխանատու մարմիններու եւ Հայ Դատի Յանձնախումբերու քաղաքական նախաձեռնութեանց համար կանոնաւոր թղթածրար մը եթէ պատրաստուած ըլլար, անպայման որ անկկա պիտի կազմէր շատ ծաւալուն հատոր մը: Քաղաքական դէմքերու, խորհրդարանի նախագահին եւ անդամներու, արտաքին գործոց նախարարին եւ յատկապէս փոխնախարար տիկին Վ. Տուտերուի, բարձրաստիճան պաշտօնատարներու, խորհրդային միութեան դեսպանին ու դիւանագետներու հետ շարունակական շփումները ընթացիկ հանգամանք ստացան: Խօսակցութեանց նիւթը գլխաւորաբար դարձաւ հետեւեալ առանցքներու շուրջ. Ղարաբաղեան խնդրին կապակցութեամբ ի նպաստ հայութեան դիրքաւորումի, Հայաստանին ու Արցախին օժանդակելու հնարաւոր բոլոր միջոցներով, Հայաստանի անկախութեան ճանաչումը արագացնել, քաղաքական փոխադարձ այցելութեանց զարկ տալ եւ հելլէն խորհրդարանէն ճանաչումի եւ դատապարտումի արժանացնել Հայոց Տեղասպանութիւնը:

Հելլէն պաշտօնատարներու հետ խօսակցութիւններու ընթացքին, միշտ ընդգծուեցաւ կարգադրութեան մը կարիքը, որ մեր վարժարաններու հայ ուսուցիչները եւս վարժարաններէն կրթական նախարարութեան պիտոճէին, ինչ որ կարելի եղած էր յաջողցնել պաշտօնավարող յոյն ուսու-

ցիչներու համար՝ տասնամեակի սկզբին:

Հանց ընելով դէպի Հայաստան տարբեր բնոյթի օժանդակութեանց արձանագրութիւնը, յայտնենք, որ հելլէն իշխանութիւններու մօտ չպակսեցաւ քաղաքական կամքը՝ գործնապէս ընդառաջելու մեր դիմումներուն: Մեծ չափերու հասաւ մարդասիրական օգնութիւնը: Հայաստանի առաջին արտաքին գործոց նախարար Ռաֆֆի Յովհաննէսեան պաշտօնապէս այցելեց Յունաստան եւ գործակցութեան փաստաթուղթեր ստորագրուեցան: Յաջորդեց Հայաստանի խորհրդարանական պատուիրակութեան մը այցը՝ Բաբգէն Արարքեցեանի գլխաւորութեամբ, փոխադարձաբար՝ Յունաստանի արտաքին գործոց նախարարութենէն բարձրաստիճան պաշտօնատար մը՝ դեսպան Մեղալօթրոնոմու այցելեց Հայաստան, ուր, բացի նախարարական մակարդակի տեսակցութիւններէն, ընդունուեցաւ նաեւ Հ.Հ. նախագահէն: Դեսպանին ընկերացաւ Հայ դատի յանձնախումբէն անդամ մը, թարգմանի պարտականութեամբ: Հայաստանի անկախութեան հռչակման առիթով, 1992ի Մարտին, Հ.Յ.Դ.ի նախաձեռնած հրապարակային միջոցառումին հովանաւորութիւնը ստանձնեց եւ կեդրոնական խօսողը եղաւ արտաքին գործոց փոխնախարար տիկին Վ. Տուտերու: Հետագային, արդիւնաւորուեցան նաեւ հայ ուսուցիչներու վարձատրութեան եւ հելլէն խորհրդարանէն ցեղասպանութեան ճանաչման կապուած հետապնդումները:

Ինչ կը վերաբերի ի նպաստ Ղարաբաղեան պայքարին բացայայտօրէն դիրքաւորուելու խնդրին, յառաջագունէ ստացուած պատասխանը եղաւ այն, որ իբրեւ մէկ անդամը Եւրոպական Միութեան, նման մեծ խնդիրներու պարագային, Յունաստանը քաղաքական իր պաշտօնական կեցուածքը պէտք է ներդաշնակէ Միութեան կեցուածքին: Եւ թէ՛ միջազգային ու Եւրոպական քաղաքական շրջանակներու մօտ կայ վերապահութիւն այն կանխահոգութեամբ, որ որքէն դիրքաւորում կրնայ խանգարել Մ. Կորպաչուքի ձեռնարկած վերափոխութեանց գործընթացը: Աւելի վերջ, ինչպէս ծանօթ է, Ղարաբաղեան խնդիրը դուրս եկաւ արդէն հայ-ազերի հակամարտութեան ու վճճի սահմաններէն եւ դրուեցաւ միջազգային ռազմատնտեսական մեծ շահերու սեղանին վրայ, ուր եւ կը գտնուի մինչեւ այսօր:

5.-Հ.Հ.Ի ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՏՈՒՑՉՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐ

Հայաստանի վերանկախացման յաջորդող շաբաթներուն, համախորհուրդ Հայ Կապոյտ հաշին, Հ.Հ.-ի արտաքին գործոց նախարարութեան տրամադրութեան տակ դրուեցաւ Աթենքի կեդրոնը գտնուող «Հայ տունը», լրիւ յարկ մը ընդգրկող բաւական ընդարձակ յարկաբաժին մը, որ կարճ ժամանակ մը ամբողջութեամբ օգտագործուեցաւ իբրեւ հիւպատոսարան եւ դիւանագետներու բնակարան:

1. Դաշնակցութեան միջոցով յունահայ գործու-
նեայ ազգայիններէն՝ պրն. Պետրոս Կիրիւնլեան
Սինկրու կեդրոնական պողոտային վրայ գտնուող
իր յարմարաւետ յարկաբաժինը տրամադրեց ՀՀ
արտաքին գործոց նախարարութեան եւ անկկա
երկար տարիներ անվճար գործածուեցաւ իբրեւ
դեսպանատուն:

2. Աւելի ուշ, 2005-ին, Դեսպան պրն. Վահրամ
Կաժոյեանի հետ համախորհուրդ, անոր մղումով
ու հովանաւորութեամբ, յունահայութիւնը ձեռ-
նարկեց հանգանակութեան, որպէսզի դեսպա-
նատունը տէր դառնայ սեփական կալուածի մը,
ինչ որ իրագործուեցաւ տարի մը ետք՝ Աթէնքի
արուարձաններէն Խալանտրիի մէջ: Հ.Յ.Դ. կեդր.
կոմիտէն հանդիսացաւ գլխաւոր դերակատարը
հանգանակութեան յաջողութեան, որմէ գոյացած
շուրջ 300-350 հազար եւրօ պատկառելի գումարը
կարելոր նպաստ մը եղաւ եւ կազմեց հիմնադրա-
մը՝ կալուածի գնման ընդհ. ծախսին:

3. Դեսպանատան հաստատման եւ անոր ծախ-
սերու մատակարարման նպաստելու նպատա-
կով, Յունաստանի Հ.Յ.Դ.ը յառաջացուց հանգա-
նակիչ յանձնախումբ եւ պատկառելի գումարնե-
րով օգտակար հանդիսացաւ:

Աւելորդ չէ արձանագրել, որ առաջին օրէն
Հ.Յ.Դ. կեդր. կոմիտէները եւ Հայ դատի յանձնա-
խումբերը սերտ կապեր հաստատած են ՀՀ դես-
պաններուն ու դիւանագիտական անձնակազմին
հետ եւ ամէն տեսակի օժանդակութիւն ընձեռած
անոնց: Պատշաճութեան սահմաններուն մէջ այդ
կապերը չդադրեցան՝ նոյնիսկ այն տարիներուն,
որ Հայաստանի առաջին նախագահը հալածանքի
ենթարկած էր Դաշնակցութիւնը...:

Հոս, դարձեալ փակագիծ մը բանաւք եւ հպան-
ցիկ արձանագրեւք, որ վերանկախացած Հայաս-
տանի առաջին իշխանաւորները, գլխաւորու-
թեամբ նախագահ Լ. Տէր Պետրոսեանի, թշնա-
մաբար դիրքաւորուեցան Հ.Յ.Դ.ի դէմ, հալածեցին
զայն, նոյնիսկ արգիլեցին անոր գործունէութիւնը
Հայաստանի մէջ. իսկ արտասահմանեան երկիր-
ներու արտագործնախարարութեանց մօտ իրենց
հալածանքը պատճառաբանելու համար, անխոս-
տովանելի պարսաւագիր ներկայացուցին Հ.Յ.Դ.ի
եւ անոր ուղեկից միութեանց դէմ: Պատճառը
պարզ էր. Հ.Յ.Դ.ը կը պայքարէր առաջին նախա-
գահի իշխանութեան դէմ սեփականաշնորհումի
անուան տակ երկրին հարստութիւնը թալանե-
լու եւ ժողովուրդը օրուան հացի կարօտ վիճակի
մատնելու դէմ, ինչպէս նաեւ Ղարաբաղեան պայ-
քարին մէջ նախագահին ցուցաբերած նահան-
ջական տրամադրութեան դէմ եւ այլն:

Հ.Յ.Դ.ի քաղաքական-գաղափարական պայքա-
րին՝ Հայաստանի իշխանաւորները պատասխա-
նեցին մոլուցքով ու բիրտ ոճով: Այս մասին շատ
խօսուած ու գրուած է, որով չ'արժեր դանդաղիլ
այդ տարիներուն վրայ:

Յունաստանի Հ.Յ.Դ. պատասխանատու մարմի-
նը, այդ շրջանին իսկ, կիրքէ չտարուեցաւ, առաջ-
նորդուեցաւ Հ.Յ.Դ. ընդհանուր ժողովի որոշում-
ներէն, սկզբունք դարձուց ազգային պետակա-
նութեան կայացման ու ամրացման սատարելու

վարքագիծը եւ պայմաններուն ներած չափով՝
իշխանաւորներու չարակամութեան պատասխա-
նեց բարի կամքի «յարձակումներով», համո-
զուած, որ իշխանաւորները գնայուն են, մինչ պե-
տականութիւնը երաշխիքն է հայութեան ներկա-
յին ու ապագային: Պայքարը փորձեց պահել քա-
ղաքական-գաղափարական մակարդակի վրայ
եւ պայքարին զուգահեռ՝ չդադրեցուց իր նախա-
ձեռնութիւնները յօգուտ պետականութեան ամ-
րակայման:

Ներքին ճակատի ամրացման եւ հաօճախին
դէպի հայրենիք ուղղուածութիւնը առաւել խո-
րացնելու համար, 1991 Օգոստոսին եւ Հոկտեմբե-
րին կազմակերպուեցան դէպի Հայաստան հաւա-
քական ուխտագնացութիւններ, առաջինը՝ երի-
տասարդականի եւ երկրորդը՝ Հայ կապոյտ խաչի
կողմէ: Անկէ վերջ, հաւաքական այդ ուղեւորու-
թիւնները սովորական երեւոյթ դարձան:

ՀԱՅ ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ ԵՒ ՄԻՋՆԱԿԱՐԳԻ ՀԻՄՆՈՒՄ

Յունահայ գաղթածախի առաջին տարիներէն
Յատկելի մէջ Հայ կապոյտ խաչի սեփակա-
նատիրութեամբ կը գործէին երկու մանկապար-
տեզներ ու նախակրթարաններ, որոնք դրուած
էին ազգային առաջնորդարանի հովանիին տակ:
Անոնք կը պահուէին տնտեսական մեծ դժուա-
րութիւններով: Երկրի քաղաքական շրջանակնե-
րու հետ մեր մշակած սերտ յարաբերութիւններու
շնորհիւ կարելի եղաւ յաջողցնել, որ մեր վարժա-
րաններու յոյն եւ հայ ուսուցիչներու վարձատրու-
թիւնը ստանձնէ կառավարութեան կրթական նա-
խարարութիւնը...:

Արդէն 1980-ական թուականներէն, Սոֆիա
Յակոբեան նախակրթարանի տնօրէնը՝ Միհ-
րան Զիրտօղլեան տարեվերջի հանդէսներէն եւ
ամէնուր հրապարակ կը նետէր հայակրթութիւնը
միջնակարգի վերածելու նպատակը յայտնելով,
թէ այն տարիքին, որ մեր աւարտականները ֆի-
զիքական նորայայտ խմորումներու կ'ունենան եւ
իրենց անհատականութիւնը կազմաւորելու փուլի
մէջ կը մտնեն, մենք զանոնք կը յանձնենք ոչհայ
միջավայրերու խնամքին: Ուստի, միջնակարգ մը
ունենալու պահանջը աւելի քան անհրաժեշտու-
թիւն է:

Այս նպատակը որքան որ ընդունելութիւն գտաւ
ազգայիններէն, յատկապէս երիտասարդներէն,
նոյնքան եւ հակազդողներ պակաս չեղան, նոյ-
նիսկ ազգային իշխանութեան շրջանակներէն...:

1990 թուականին, օրուան Հ.Յ.Դ. կեդրոնական
կոմիտէն համամտութիւնը առնելով Հայ կապոյտ
խաչի շրջանային վարչութեան, վճռականօրէն
դէմ կեցաւ բոլոր հակազդողներուն եւ յայտարա-
րեց, որ նոր տարեշրջանին, Սոֆիա Յակոբեան
վարժարանի կառոյցին մէջ պիտի կատարուի
հիմնարկեքը միջնակարգին՝ դասարանի մը յաւե-
լումով, որ պիտի շարունակուի երկու տարի եւս,
զայն դարձնելով եռամեայ:

Միջնակարգը կոչուեցաւ Հայ կապոյտ խաչի

բարերարներեն՝ Սուրեն եւ Ժիրայր Ճենազեան եղբայրներու անունով:

Չանցառութիւն մը պիտի ըլլար, եթէ հոս չարձանագրուէր անունները Աղապատեան Սերգօ եւ Կիրիւնկեան Պետրոս ազգայիններու, որոնք ոգի ի բռին չափչփեցին պետական պատկան սպասարկութեանց եւ կրթական նախարարութեան գրասենեակները, մինչեւ որ ապահովեցին յաջողութիւնը յոյն եւ հայ ուսուցիչներու վարձատրութեանց ստանձնումը կրթական նախարարութեան, ինչպէս նաեւ միջնակարգի արտօսագիրը:

(մինչեւ այս մենագրութեան վերընթերցումս՝ 2024, միջնակարգը արդէն իսկ տուած է շուրջ 600-է աւելի շրջանաւարտներ):

ՊՈՒԿԱՐԻՈՅ ՀԱՅՕԾԱՆԸ

Սերգաղութային աշխատանքներուն զուգահեռ եւ Հ.Յ.Դ. Բիւրոյի յանձնարարութեամբ, Յունաստանը եղաւ այն շրջանը, որ գործիչներով յաջողեցաւ կազմակերպական ու միութենական կառոյցներ հաստատել Պուկարահայ օճախին մէջ, երբ քաղաքական իմաստով ձեռնտու պայմաններ ստեղծուեցան երկրին մէջ: Առաջին շփումները կատարուեցան Թեսաղոնիկէէն, ապա գործը ստանձնեց Հ.Յ.Դ. Յունաստանի Կեդրոնական կոմիտէն *(այն ատեն՝ Մեկուսի Կոմիտէ)*, որ իր ներկայացուցիչը՝ Սիիրան Քիրսոզլեանը պատուիրակեց, որ գործիչային առաքելութեամբ յաճախակի ուղեւորութիւններ կատարէ այդ երկիրը: Շուտով Պուկարիոյ Սոֆիա, Բլովտիւ, Ռուսէ, Պուրկազ քաղաքներու մէջ վերընծիւղուեցան Հ.Յ.Դ.ի, Հ.Օ.Մ.ի եւ Հ.Ս.Ը.Մ.ի մասնաճիւղեր, հաստատուեցան Հայ դատի յանձնախումբ ու գրասենեակ եւ որոշ պարբերականութեամբ լոյս տեսնող թերթ: Այդ կառոյցները խանդավառելու եւ գօտեպնդելու նպատակով, Աթէնքէն ու Թեսաղոնիկէէն հաւաքական քանի շրջապտոյտներ

կազմակերպուեցան դեպի Պուկարիա, երիտասարդականի, Հ. Կ. Խաչի եւ Հ. Գթ. Խաչի նախաձեռնութեամբ: Նոյնիսկ, Պուկարիոյ գաղութային նորաստեղծ գործօնները ներշնչելու մտածումով, կարգադրուեցաւ որ 40-50 հոգինոց խումբ մը գայ Աթէնք եւ մասնակից դառնայ ապրիլեան ձեռնարկներուն ու ցոյցերուն:

Բլովտիվի մէջ վերաբացուած հայկական դպրոցին յաճախ ուղարկուեցան հայերէնի դասագրքեր, ինչպէս նաեւ դպրոցական minibus մը՝ աշակերտահաւաքի համար:

ՀԵԼԼԷՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԿԸ ՃԱՆՉՆԱՅ ՀԱՅՈՑ ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

1995-ի յաջորդող տարիներու ամենէն նշանակալից եղելութիւնը Հայոց Տեղասպանութեան ճանաչումը եղաւ՝ Յունաստանի խորհրդարանէն:

Այդ տարի, ապրիլեան ելոյթներու եզրափակիչ միջոցառումին, կառավարութեան, խորհրդարանի նախագահին եւ խորհրդարանական կուսակցութեանց ներկայացուցիչներու շարքին, անձամբ ներկայ եղաւ «Քաղաքական Գարուն» նորաստեղծ կուսակցութեան նախագահը՝ Անտոնիս Սամարաս, նախկին արտաքին գործոց նախարար, (հետագային վարչապետ) երբ կառավարութիւն Եր «Նոր Հանրապետութիւն» կուսակցութիւնը Գ. Միցոթաքիսի վարչապետութեամբ: Ա. Սամարաս վարչապետին հետ տարակարծութիւններ ունենալով հիմնած Եր «Քաղաքական Գարուն» կուսակցութիւնը եւ ընտրութիւններուն մասնակցելով, խորհրդարանին մէջ գրաւած 3-րդ դիրքը: Թէեւ փոքրաթիւ Եր երեսփոխանական իր խմբակցութիւնը, բայց եւ այնպէս, խորհրդարանական խաղի հաւասարակշռութեան մէջ՝ իրեն վիճակուած Եր բաւական որոշիչ դերակատարութիւն:

Ողջոյնի խօսք արտասանելու համար երբ բեմ բարձրացաւ Անտոնիս Սամարաս, առանց բառեր ծամծմելու ըսաւ. «Կ'ամչնամ, որ հելլէներու խորհրդարանը մինչեւ այսօր չէ ճանչցած հայերու վրայ Թուրքիոյ գործադրած Տեղասպանութիւնը, մինչ պետք է ըլլար առաջինը եւ օրինակ դառնար ուրիշներուն...»: Եւ աւելցուց. «Հոս, այս պահուս, կը խոստանամ ձեզի եւ յանձնառու կը դառնամ, որ շուտով իմ կուսակցութիւնս, «Քաղաքական Գարուն»ը, իբրեւ օրակարգ քննարկուելու համար խորհրդարանի նախագահութեան պիտի ներկայացնէ Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու օրինագիծ մը: Եւ կը յուսամ, որ աղուոր անակնկալ մը ունենաք մինչեւ յաջորդ Ապրիլ 24ը...»:

Եւ իրապէս.

«Քաղաքական Գարուն» կուսակցութեան կողմէ օրինագիծը առաջարկուեցաւ եւ հերթի մտաւ խորհրդարանի օրակարգերու թղթածրարին մէջ: Ըսինք արդէն, որ այդ օրուան խորհրդարանի ընդհանուր հաւասարակշռութեան մէջ, որոշ դեր խաղալու հնարաւորութիւնը ուներ Ա. Սամարայի կուսակցութիւնը: Մինչ այդ, յոյն-թուրք քաղաքա-



Յունահայ գաղութին կողմէ կազմակերպուած ուխտագնացութիւն Պուկարիա՝ Քրիստափոր Միքայէլեանի շիրիմին առջեւ: Խօսք կ'ուղղէ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանդ Մարգարեան



Վիրոնայի քաղաքապետության և Հ.Յ.Դ. Հայ Դատի Յանձնախումբի անդամները բաղկացած ներկայացուցչական պատուիրակության այցելություն՝ Նոյեմբերեան քաղաքը

**Եւ հայրենանուէր գործը կը շարունակուի...
ՍԻՐՈՍԻ ՄԵՃԱՀՈԳԻ ԶԱՂԱՔԱՊԵՏԻ
ՆԱԽԱՁԵՆՈՒԹԻՒՆ**

Եգեականի մէջ կղզի մըն է Սիրոս, որ իր գրկին մէջ հիւրընկալած է ցեղասպանութեան հետեւանքով որբացած աւելի քան 1.500 հայ երեխաներ: Ատենի այդ որբանոցը այժմ վերածուած է գորանոցի, ուր սենեակ մը տրամադրուած է պահելու-պահպանելու համար որբերը մասունքներ՝ ձեռային աշխատանք, նկարներ եւ այլն: Կղզիին քաղաքապետը 2002 թուականէն սկսեալ եւ շարունակաբար՝ ամէն տարի ամառնային եղանակին, կղզիի ծովափնայ բանակավայրի մը մէջ կը հիւրընկալէ Ղարաբաղեան ճակատի վրայ զոհուած ազատամարտիկներու 15 զուակներ, որոնց Աթենքէն ընկերանալով 15-օրեայ հոգածութիւնը երկար տարիներ սիրայօժար յանձն առած են տիկիներ՝ Կիւլա Գարապաճագեան, Աղաւնի Գարապաճագեան, Վիգի Խաչատուրեան եւ Խաչիկ Խաչատուրեան:

Ճշմարտութեան չմեղանչելու համար պէտք է արձանագրել նաեւ, որ Հայ դատի յանձնախումբին անունով այս գործին նախաձեռնութիւնն ու յաջողութիւնը կը պատկանին յանձնախումբի անդամ Խաչիկ Խաչատուրեանին, շնորհիւ իր սերտ կապերուն՝ Սիրոսի քաղաքապետին ու քաղաքապետարանի, լրագրական շրջանակներու եւ Արցախի պատասխանատու անձնաւորութեանց հետ:

ՀԱՅ ԴԱՏԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ

Անցնող տարիներու ընթացքին, ինչպէս այլ ճակատներու վրայ, նաեւ Հայ դատի ճակատը դիմագրաւեց մարդու ղի դժուարութիւն: Բայց եւ այնպէս, այդ դժուարութիւնները երբեք ընկրկումի չմատնեցին իրերայաջորդ յանձնախումբերը, որոնք լծակից ունենալով Հ.Յ.Դ. երիտասարդականի անդամները, գործեցին անխափան եւ նորանոր նուաճումներով՝ հայ հաւաքականու-

թեանց ազգային-քաղաքական կամքին արտայայտիչները հանդիսացան: Մոռացումի մեղքն ու վտանգը յանձն առնելու գնով, սրտի պարտք է արձանագրել կարգ մը անձերու անունները անոնց, որոնցմէ ամէն մէկը որոշ ժամանակի մը համար դարձաւ «կեդրոնական» դէմք եւ կամ սեւ աշխատանքներու անաղմուկ գործողը՝ Հայ դատի յանձնախումբին մէջ: Վարուժան Գևուհի (*վարած է ատենապետի պաշտօն*), Յովսէփ Պարագեան (*աւելի քան երկու տասնամեակ*), Գեղամ Եաղճեան (*վարած է ատենապետի պաշտօն*), Գրիգոր Էրջենեան, տոքթ. Արա Արշակեան, Աւետիս Մխիկեան (*վերջին երկուքն ալ՝ վաղամեռիկ, որոնք նախաձեռնողներէն եղան «Արմենիքա Թեմաթա» պարբերականին՝ Յովսէփ Պարագեանի հետ*), Շահան Ֆարաճեան (*վարած է ատենապետի պաշտօն*), Գրիգոր Ճանիկեան, Եսայի Թէօլէեան, Գասպար Կարապետեան, Թագուր Յովակիմեան (*վարած է ատենապետի պաշտօն*), Խաչիկ Խաչատուրեան, Մարլէն Զիրտօղլեան, Սերգօ Գույումճեան (*վարած է ատենապետի պաշտօն*), Ազնիւ Գասպարեան, Դաւիթ Պետրոսեան (*վարած է ատենապետի պաշտօն*), Մայք Չիլինկիրեան, Արաքսի Աբելեան-Գոլանեան (*վարած է՝ ատենապետի պաշտօն եւ զգալապէս օգտակար եղած՝ Երոփտորիդարանի շրջանակներու մէջ՝ յարաբերական աշխատանքներով*), Սթաւրօ (*Խաչիկ*) Ապարեան, Հռիփսիմէ Եագուպեան-Յարութիւնեան (*ատենապետի պաշտօնով*), Յարութիւն Սպարթալեան (*ներկայ ատենապետ*) եւ շատ-շատ ուրիշներ:

Սելանիկի մէջ, Հայ դատի նուիրեալներէն յիշենք հետեւեալ անունները.- Լեւոն Ծլկունի, Կարապետ Գալֆայեան, Վահագն Աբրահամեան, Կարապետ Գասպարեան, Ռուբէն Գասպարեան, Յակոբ Գասպարեան, (*ինքնաշարժի արկածով՝ վաղամեռիկ*), Գալուստ Չամասեան, Վահէ Աւետիսեան, Խաչիկ Փափագեան, Մարգրիտ Գոստիկեան, Սեպուհ Գասպարեան, Կիւլա Գասպարեան, Մարտիկ Մարտիկեան, Տիրուհի Գալֆայեան, Կարօ Նատեան, Յովիկ Գասպարեան, Տիգրան Պլեճեան, Պետրոս Հալաճեան, Սահակ Մարութեան, Քրիս Դալիլեաս: Իսկ հիւսիսային Յունաստանի սահմանամերձ քաղաքներուն մէջ՝ Կարօ Մորալեան, Օսնիկ Թէօմիրճեան, Տիգրան Գասպարեան, Թագուր Գարաօղլանեան, Յակոբ Գալայճեան, Ատրիկ Ստեփանեան, Արիս Պետրոսեան, Սարգիս եւ Մանիկ Աշըրեան, Համբօ Մարութեան, Վարդգէս Մարութեան, Մարի Գալայճեան:

Ծառայողներու ցուցակին մէջ անպայման որ տեղ ունին նաեւ այլ անուններ, նոյնիսկ եթէ անոնց ծառայութիւնը եղած ըլլայ կարճատեւ ու կողմնակի: Բայց ներածականին մէջ ըսինք արդէն, որ ամբողջական տեղեկատուութիւն չէ մեր նպատակը, ոչ ալ հնարաւորութիւնը ունինք մի առ մի թուելու բոլորը: Հայ դատի հետապնդման գործին մասնակից դարձան միութեանց եւ ազգային մարմիններուն անդամակցող բոլոր անհատները, իւրաքանչիւրը իր մարզին մէջ: Բոլորին՝ վարձքը կատար:

Հոս, չենք կրնար զանց ընել բացատրութիւն մը. Ամենուրեք Հայ դատի յանձնախումբերը կը

նշանակուին Հ.Յ.Դաշնակցութեան պատասխանատու մարմիններուն կողմէ, որոնք նուազ դերակատար չեն Հայ դատի հետապնդման գործին մէջ: Ընդհակառակն. անոնք են, որ համասփիւղքեան ընդհանուր ծրագրին հիմամբ կը ճշդեն տեղական պայմաններէն բխող առաջնահերթութիւնները եւ անոնց հետապնդումը կը վստահին յանձնախումբերուն եւ ամէն ձեւով նեցուկ ու օժանդակ կը դառնան աշխատանքներուն: Աշխատանքի բեմին վրայ յանձնախումբի անդամներն են, բեմին ետեւ՝ Հ.Յ.Դ. պատասխանատու մարմինները՝ միշտ ներկայ, գործօն եւ իբրեւ մղիչ ուժ:

Այս տեսակէտէն, պիտի աւելցնենք անունները անոնց, որոնք երկար տարիներ գործեցին իրարայաջորդ պատասխանատու մարմիններու մէջ, ոչ նուազ ծառայելով Հայ դատին.

Ժիրայր Ճանիկեան (*մահացած*), Վռամ Թերզեան (*մահացած*), Կարօ Մինասեան (*մահացած*), Օնիկ Օնիկեան (*մահացած*), Եղիշէ Եզեկիւլեան (*մահացած*), Յարութիւն Մեքթուլաճեան (*մահացած*), Վարուժան Գևուկի, Գեորգ Աւագեան, Յարութիւն Միսիկեան (*մահացած*), Գեղամ Եղճեան, Թագուր Յովակիմեան, Շահան Ֆարաճեան, Յովսէփ Պարագեան (*մահացած*), Գրիգոր Էրջենեան (*մահացած*), Սերգօ Գույումճեան, Դաւիթ Պետրոսեան, Ստեփան Շեմմաս, Գասպար Կարապետեան, Գեորգ Գոլանեան, Վահան Պզտիկեան, Արա Մանկոյեան, Նազարէթ Պերպերեան, Քերովբէ Էքիզեան եւ այս տողերը ստորագրողը:

Աւելի քան յիշուելու արժանի են այն երիտասարդները, որոնք երիտասարդական շարքերու մէջ գործեցին տեսիլքով ու խանդավառութեամբ եւ աշխատանքի նոր հորիզոններ բացին երիտասարդներուն տարեցներուն առջեւ: Եղան հաւատարիմ հին երագներու, բայց եւ դարձան ուղեւոր նոր ճամբաներու: Մոռացումի մեղքին մէջ չիյնալու համար, պիտի խուսափինք համբուրելի այդ տողոց անունները թուելէ: Առանց անոնց խանդին ու թափին, առանց անոնց յանդգնութեան, Հայ դատի յառաջխաղացքը կարելի պիտի չդառնար:

ՎԵՐՋԱԲԱՆ

Դիրին գրուեցան այս տողերը: Աւելի դիրին Դալ պիտի կարդացուին: Բայց եւ այնպէս, փուլ ամ փուլ եւ հանգրուան ամ հանգրուան Հայ դատի քաղաքական յառաջխաղացքը դիրին չեղաւ: Կ'արժէ պահ մը մտաբերել, թէ 50-60 տարի առաջ ուր կը գտնուէինք եւ ուր ենք հիմա, որպէսզի կարենանք իր իսկութեան մէջ գնահատել կտրուած ճամբան եւ տարողութիւնը տարուած աշխատանքին: Ոչ համբաւեալ դիւանագետներ կային, ոչ ալ արիեստավարժ քաղաքագետներ կամ տնտեսական լայն հնարաւորութիւններ: Սակայն կար գաղափարը: Կային նաեւ այդ գաղափարին ծառայող մարդիկ, որոնք հաւատքով գործեցին եւ գործով ներշնչեցին Յունաստանի ամբողջ հայօճախը: Տանք երկու պատկեր եւ այդ պատկերներով եզրակացնենք, թէ ուր կը գտնուէինք եւ ուր հասած ենք հիմա: Այդ եզրակացութեամբ ալ ավարտենք մեր այս մենագրութիւնը:

Պատկեր առաջին

Շուրջ 50 տարի առաջ, 1970: Մայիս 28-ի տարեդարձի հրապարակային հանդիսութիւն: Աստիճանաւոր ոստիկան մը սրահ կը մտնէ: Մուտքի հիւրընկալողը անմիջապէս ոստիկանին ժամանումին լուրը կը փոխանցէ պատասխանատուներուն: Շշուկ մը կը տարածուի եւ որոշ իրարանցում կը ստեղծուի, որպէսզի ոստիկանը արժանավայել պատիւով դիմաւորուի եւ հիւրընկալուի: Նոյնիսկ չ'ենթադրուիր, որ մարդը իր պարտականութիւնը կատարելու համար հոն է. տեսնելու եւ տեղեկագրելու իր սպասարկութեան, թէ հայերը ինչ բանի վրայ են...

Պատկերէն պահենք ոստիկանին ժամանումը, սրահին մէջ տարածուած շշուկն ու զայն հիւրընկալելու փութաշանութիւնը:

Պատկեր երկրորդ

2002 թուական, Հոկտեմբեր: Պետական Պենաքի թանգարան: Յունական մեծ դրամատան՝ Alpha Bank-ին պատկանող հաստատութեան մը եւ քաղաքակրթական նախարարութեան մեկենասութիւնը ապահովուած է եւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան գանձերը բերուած են՝ ատենուան ամէնէն ջքեղ թանգարանին մէջ ցուցադրուելու համար: Այդ առիթով ժամանած է նաեւ Արամ Ա. կաթողիկոսը: Պաշտօնական բացումին համար ժամ ճշդորոշուած է եւ հրաւերներ ուղարկուած են քաղաքագետներու, մտաւորական ու արուեստի մարդոց, մեծ ձեռնարկուներու: Ներկայ են խորհրդարանի նախագահը, համայն Յունաստանի արքեպիսկոպոսը, մշակոյթի ու քաղաքակրթութեան նախարարը, Յունաստանի երկու ամէնէն մեծ դրամատուներու ընդհանուր տնօրէնները, երեսփոխաններ, թանգարաններու տնօրէններ, մեծ ձեռնարկուներ: Ընդամենը՝ շուրջ 400-500 ներկաներ եւ անուանի մարդոցմբ բաղկացած ներկայացուցչութիւն մը: Կաթողիկոսը կ'ուշանայ: Համագումարեալ մարդիկ մեր կաթողիկոսին կը սպասեն, որ պաշտօնական բացումը կատարուի: Պատկերէն առնենք՝ «մեր կաթողիկոսին կը սպասեն»ը...:

1970-ական թուականներու առաջին պատկերէն դէպի երկրորդը, ժամանակին մէջէն 30 տարիներու ճամբորդութիւն մը կատարենք եւ հասնինք 2002 թուական, Պենաքի թանգարան, որպէսզի լիիրաւ կշռենք ու հասկնանք, թէ ուր էինք եւ ուր կը գտնուինք հիմա:

Ոստիկանի մը ժամանումը եւ... «մեր կաթողիկոսին կը սպասեն»ը...:

Յունահայութիւնը հաւաքաբար ձեռնարկեց այս մեծ ճամբորդութեան: Բայց ճշմարտութեան դէմ չմեղանչելու համար, ընդգծումով պիտի արձանագրենք, որ Հայ դատին նուիրեալ ծառայողներն էին՝ պատանի, երիտասարդ թէ հասուն տարիքի մարդեր, որոնք ճամբան հարթեցին, յանդգնութիւնը ունեցան մեծ ուսումներով յառաջանալու:

Եղան խիզախ ուղեցոյց եւ հայօճախը հասցուցին Պենաքի թանգարանի պատկերին, ուր

պետական անազանի, բարձրաստիճան պաշտոնատարներ, ակադեմիականներ ու ձեռնարկու անուանի անձնատիրություններ «մեր կաթողիկուսին կը սպասեն...»:

Եւ այդ պատկերի խորքին, տեսնելով Հայ դատի պայքարին կտրած ճամբան ու յաջողությունները, արդար Է մեծատառ գրել.

Փոքրաթիւ յունահայերու փոքր ածուին մէջ ալ կատարուած են մեծ ու պատուաբեր գործեր, որոնք արժանի են գրի ու յիշատակութեան:

(Աթէնք, Յունուար 2003, վերանայուած՝ 2020-ին)

ՅԱԻԵԼՈՒԱԾ.

Այս մենագրութիւնը գրուած էր շատոնց, ինչպէս ցոյց կու տայ վերի թուականը՝ 2003: Հիմա, որ տպագրութեան պիտի տրուի, (2026) արդէն իսկ ողբերգական զարգացումներ կատարուած են հայաշխարհի մէջ: Հայկական Ղարաբաղը՝ Արցախը վերագրուած Է Ատրպէյճանին կողմէ եւ ամբողջութեամբ հայաթափուած, իսկ մեր երկու անանդապահ ու հարազատօրէն հայաշունչ գաղթօճախները՝ Սուրիան եւ Լիբանանը գալարուած են պատերազմական արհաւիրքի եւ տնտեսական ահաւոր տագնապներու մէջ: Դժխեմ իրադարձութիւններ, որոնց հետեւանքով Հայ դատի պայքարը յետընթացի մէջ ինկած Է, ցաւալիօրէն:

Արցախի կորուստի թուականին (28 Սեպտ. 2024) լոյսին տուած եմ յօդուած մը՝ «Արցախի կորուստը եւ հայ դատի յետընթացը» խորագրով, զոր կը տեղադրեմ հոս:

ՂԱՐԱԲԱՂԻ ԿՈՐՈՒՍԸ ԵՒ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԵՏԸՆԹԱՅԸ

(Արցախի կորուստի թուական՝ 28 Սեպտ.)

Զեմ գիտեր առարկողներ պիտի գտնուի՞ն թէ ոչ, եթէ արձանագրեմ, որ յատկապէս Հայոց ցեղասպանութեան յիսնամեակէն ետք, Հայ դատի ճակատին վրայ արձանագրուող յաղթական յառաջընթացը ոչ միայն կասած Է, այլեւ յետընթացի մէջ կը գտնուի ներկայիս՝ պատճառովը Հայաստանի քաղաքական ղեկավարութեան, որ չգիտցաւ կամ չկրցաւ պատմութեան հետ ժամադրուիլ եւ ներկայացուած առիթներէն օգտուիլ: Անցնող երեսուն տարիներու թէկուզ մակերեսային վերաքաղ մը այդ ենթադրել կու տայ, որքան ալ շրջանային ուժերու ռազմագիտական թէ քաղաքական կեանքի յարափոփոխութիւնը, ծանրակշիռ դեր ունեցած ըլլայ ստեղծուած վիճակներու մէջ:

Ղարաբաղեան յաղթանակին յաջորդող շուրջ 25 տարիներուն, ինդիրը դրուած էր միջազգային դիւանագիտական քաշքշուքներու սեղանին, ուր Հայաստանի դիւանագետներն ու գործող Նախագահները անկարող եղան յաղթականի դիրքէ ի նպաստ մեզի առաջարկի մը շուրջ համախոհութիւն ստեղծելու եւ լուծում տալու հարցին, հակառակ այն իրողութեան, որ հայաբնակ Արցախի պատմական տուեալներու փաստը կար, ինչպէս նաեւ չգիտցող չկար, որ Ատրպէյճանի ստեղծու-



Արցախէն նորօրեայ գաղթականներ դէպի Հայաստան

մէն ետքն էր միայն, որ վիճելի եղաւ անոր հայաստանապատկանութիւնը...: Ի սկզբանէ ծանօթ էր նաեւ, թէ միջազգային ընտանիքին (*Միկսի եռանախահներուն*) համար անպայման ազերիին վերադարձուելու Էին ազատագրուած վեց կամ եօթ շրջանները, որպէսզի Ղարաբաղի կարգավիճակի մասին կարելի ըլլար եզրակացութեան մը յանգիլ: Չեղաւ: Ապիկարութիւն, յաղթականի գինովութիւն կամ առաւելապաշտութիւն, դժուար Է ըսել: Իրողութիւն էր նաեւ, որ գործող ղեկավարները չունէին ժողովրդային նեցուկ ու անխառն համակրանք, որպէսզի յանդգնէին որեւէ զիջում կատարել յաղթանակով ձեռք բերուածէն...: Թերեւս ալ, ով գիտէ, մերիներուն խելքն ու միտքը ուրիշ առաջնահերթութիւններով կլանուած էին...:

Սակայն փաստը այն Է, որ այդ 25 տարիներու ընթացքին Ատրպէյճան ամրացուց իր բանակը, անոր պատերազմական գինանոցը հարստացուց արդիական տարատեսակ զէնքերով: Եւ փառատոքսը այն Է, թէ քանդիչ ու յարձակողական զէնքերու գլխաւոր հայթայթիչը՝ Հայաստանի ռազմավարական գործընկեր ու գինակից Ռուսիան եղաւ, որ միլիառաւոր տոլարներ արժողութեամբ ահաւոր ռազմամթերք վաճառեց ազերիին, քաջ գիտնալով՝ որ ան զանոնք պիտի գործածէ Ռուսիոյ հաւատարիմ «դաշնակիցին»՝ Հայաստանի դէմ: Իսկ մերիները... ուրիշ առաջնահերթութիւններու տրուած էին: Մեզ չսթափեցուց այն, որ Ատրպէյճան մերժեց Քոչարեանի եւ պապա Ալիեւի միջեւ ՔԻ Ուեսթի մէջ կայացած հողային փոխանակման համաձայնութիւնը, որով Ատրպէյճան պիտի միանար Նախիջեւանին եւ այդ ճամբով Թուրքիոյ, ինչ որ մահ կրնար ըլլալ մեզի, բայց կեանքի չափ կարելոր Է ազերիին համար: Այդ մերժումը կը նշանակէր, թէ որեւէ հանգամանքներու մէջ Ատրպէյճան պիտի չընդունէր Արցախի անկախութիւնը կամ միացման տարբերակը: Եւ պիտի պատրաստուէր պատերազմի:

Հայաստանի ղեկավարութիւնը չսթափեցաւ

նոյնիսկ 2016-ի քառօրյա պատերազմն էտք, որ նախերգանքն էր 44-օրեայ չարաշուք աղետին եւ որ յստակ կը դարձներ մեր թշնամիին զինական գերակշռութիւնը, ինչպէս նաեւ միջազգային ընտանիքին անտարբերութիւնը՝ մեր պահանջքին նկատմամբ:

Հայաստանի վերանկախացման առաջին օրերէն հայրենի բնակչութիւնը կը գալարուէր անարդարութեան, չքաւորութեան, ապօրինի հարստացման, իշխանական դիրքերու շահագործման, իշխանատենչութեան արտաւոր վիճակներէ, որոնց պատճառով ժողովրդային համատարած ցասումը յանգեցաւ ըմբոստութեան եւ պարտադրուած իշխանափոխութեան, ինչ որ նոր աղետ մը դարձաւ հայութեան ու Հայ դատի ապագային համար: «Նոր» իշխանաւորները, նուագագոյնը ըսելու համար, անփորձ էին, յաւակնոտ ու ձախաւեր եւ ազգային տեսլական չունէին: Իսկ «հին»երը՝ անհանդուրժող եղան «Նոր»երուն հանդէպ: Եւ այսպէս, սկսաւ հիներու եւ նորերու անհաշտ ու անզուսպ պայքար մը, որ կը շարունակուի մինչեւ այսօր, պատճառ դառնալով ժողովուրդի պառակտումին:

Բնական էր, որ նոր իշխանաւորներու ապիկարութիւնն ու քաղաքական ձախաւերութիւնները, ժողովուրդի պառակտումութիւնը, ինչպէս նաեւ շրջանային բեմի վրայ խաղացող մեծապետական ուժերու բարեացակամութիւնը, պիտի քաջալերէին Ատրպէյճանը, որ իրեն օժանդակ ունենալով Թուրքիան ու Իսրայէլը, ինչպէս նաեւ իր բանակը վարձկան կռուողներով համալրած՝ 2020-ի Սեպտ. 27-ին լայնածաւալ ու անակնկալ յարձակում շղթայագերծէ մեր վրայ եւ վերագրաւէ առաջին պատերազմով եւ բազմահազար երիտասարդներու արեան գնով մեր ազատագրած հայրենի հողերը եւ Շուշին: Իսկ 28 Սեպտ. 2023-ին, նոր յարձակումով մը, մէկ օրուան մէջ զինաթափ ընէ Արցախի հայկական բանակը, որու բարձրագոյն հրամանատարը՝ Արցախի օրուան նախագահը ամօթալի հրամանագրով մը պիտի լուծարէր պետութիւնը, որ ձեռք բերուած էր անօրինակ հերոսութեամբ ու հերոսներու նահատակութեանց գնով: Գրաւողները ահ ու սարսափ տարածեցին՝ տեղի հայութիւնը ցեղասպանութեան ենթարկելու դիտաւորութեամբ, որմէ խուսափելու համար 120.000 հայեր խուճապի մատնուած՝ երեք օրուան մէջ լքեցին իրենց տուններն ու պապենական հողերը եւ ապաստան գտան Հայաստանի մէջ: Պատկերացուցէ՛ք, երեք օրուան մէջ 120.000 հայերու խուճապահար փախուստ՝ կեանքի փրկութեան համար:

Այսպէս էր, որ սեւ վարագոյրը իջաւ հայկական Ղարաբաղի՝ Արցախի վրան:

Հայ ժողովուրդը շատ ու շատ պարտութիւններ տեսած է իր պատմութեան մէջ: Սակայն միշտ ալ գտնուած են առաջնորդներ, որոնք յոյս ու բարոյական կորով ներշնչած են ազգայիններուն, որպէսզի ազգը ոտքի կանգնի, մէջքը ուղիղ բռնէ, տեսլական ունենայ եւ պարտութիւններուն մէջ յաղթանակ փնտռէ: Շնորհիւ այդօրինակ առաջնորդներուն է, որ վերապրած է ազգը: Օրինակներ

բազմաթիւ են, բայց անոնցմէ յիշենք գէթ երկուքը՝ հին ու նոր ժամանակներէն, որոնք հանրածանօթ են: Հինէն՝ Վարդանանց ապստամբութիւնն է, որ հազիւ մէկ օր տուեց եւ բոլոր ղեկավարները, ներառեալ Վարդան, ինկան Աւարայրի մէջ:

Օրինաչափ (*սթանտարտ*) պարտութիւն էր Աւարայրը, բայց մենք յաղթանակի վերածեցինք այդ պարտութիւնը եւ անով սերունդներ ներշնչեցինք հայրենասիրութեամբ...: Նորագոյնը՝ ցեղասպանութենէն ետք հոս-հոն տարտղնուած գաղթական հայերու խլեակներն էին, անղեկ, շուար ու անհեռանկար, որոնք տարին հեղ մը՝ Ապրիլ 24-ին, կը սզային իրենց մեռելները: Ահա այդ օրերուն եւս ունեցանք առաջնորդներ, որոնք նոյնպէս գաղթական, անոնցմէ շատեր պետութիւն ու անկախութիւն կորսնցուցած ցաւատանջ մարդիկ, իրենց մէջ գտան ուժը մէջքերին շտկելու եւ ոտքի հանելու շուարած ու անտէր հայու խլեակները, քաղաքական կողմնացոյց դարձան անոնց համար, անոնցմով համայնքներ ու սփիւռք կազմակերպեցին եւ զանոնք միաւորեցին ազգային տեսլականներով եւ Հայ դատի նպատակով: Ապրիլ 24-ի սգահանդէսները՝ ողբէն, վերածուեցան Հայ դատի պահանջատիրական պայքարի ու այդ պայքարին նոր թափ տալու եւ նոր յառաջընթաց արձանագրելու վճռական համախմբումներու:

Իսկ հիմա՞: Պարտուած իշխանութիւնը փոխանակ ճիգ ընելու, որ վերականգնէ ազգի բարոյական կորովը, ընդհակառակն, ոչ միայն համակերպած է պարտութեան, այլեւ պարտուած է նաեւ՝ հոգիով: Տակաւին աւելի ահաւորը կայ՝ հետզհետէ տոկմայի կը փորձէ վերածել ու փարիլ կարգախօսի մը, թէ՛ հայրենասիրութիւնը վտանգաւոր է ազգին ու հայրենիքին համար...: Ճահիճի մէջ ինկողը երկու ընտրանք ունի. կամ իր կերը կը փնտռէ ճահիճի մէջ, որ վերապրի կամ ճիգ կը հանդիսարդէ ճահիճէն դուրս գալու համար: ՀՀի ներկայ իշխանաւորները ընտրած են առաջին տարբերակը եւ այդ ընտրանքին համար կը ջանան հետեւորդներ բազմացնել իրենց քարոզչական լծակներով:

Ասիկա մահացու վտանգ է ազգին ու Հայ դատին համար: Ե՞լքը. ահա բուն խնդիրը եւ ներկայի մեծագոյն մարտահրաւերը՝ քաղաքական բոլոր այրերուն ու խմբաւորումներուն համար:

Իշխանաւոր ըլլալ չի նշանակեր իրաւունք ունենալ, ինչպէս նաեւ գործող կուսակցութիւններուն ու քաղաքական այրերուն իրաւունքը չէ սեփական օրակարգ հետապնդելու, երբ ազգին առջեւ ծառացած է մեծագոյն մարտահրաւերի մը անյետաձգելի օրակարգ մը: Այլապէս, համատարած հիասթափութիւնը կը կրծէ ազգի ուժականութիւնը, ինչ որ տեղի կ'ունենայ այս օրերուն: Սթափինք...:

Բազմահազար երիտասարդներու արեան գնով Արցախի առաջին պատերազմի յաղթանակը եւ հայրենի հողատարածքներու ազատագրութիւնը հսկայաքայլ ուսումնառում մը կազմեցին Հայ դատի յառաջընթացին մէջ: Իսկ հիմա, հայկական Ղարաբաղի կորուստով անփառունակ յետընթացի մը մէջ կը գտնուինք:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ (1890- ԵՆ ՄԻՆՉԵՒ 1924 ԹՈՒՄԱԿԱՆԸ)^[1]

ԽԱՉԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

1880-ական թուականներու կեսերէն հայ ժողովուրդի ազգային-ազատագրական պայքարի ասպարեզ մտան հայ քաղաքական կուսակցութիւնները եւ իրենց ձեռքը վերցուցին ազատագրական շարժման ղեկավարումը: Այսպէս, 1890ին ստեղծուեցաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութիւնը (Հ.Յ.Դ.): 1892ին ընդունուած կուսակցութեան առաջին ծրագիրը որպէս նպատակ կ'առաջադրէր ապստամբութեան միջոցով Արեւմտահայաստանի մէջ յաջողցնել քաղաքական եւ տնտեսական ազատութիւն: Դաշնակցութեան խնդիրը՝ գաղափարապէս, ռազմականապէս եւ կազմակերպօրէն զօրեղանալ էր, ինչպէս նաեւ զինուած պայքար մղել թրքական կառավարութեան եւ ամէն կարգի հարստահարիչներու դէմ, նոյն պահուն պաշտպանելով նաեւ ժողովուրդը աւազակային յարձակումներէ: Սկզբնական շրջանին Հ.Յ.Դ.ն՝ ֆիտայական-պարտիզանական պատերազմը կ'ընտրէր որպէս թրքական բռնապետութեան դէմ ուղղուած ազգային-ազատագրական պայքարի նպատակայարմար ու հիմնական ձեւ: Արեւմտեան Հայաստանի մէջ իր տարածումէն յետոյ հնարաւոր կը համարուէր նաեւ ընդհանուր ապստամբութիւնը:

1890-ականներու երկրորդ կեսէն Դաշնակցութիւնը կը դառնար հայ ազգային-ազատագրական շարժման առաջատար ու ամէնէն ազդեցիկ ուժը: Կուսակցութիւնը իր մասնաճիւղերը կը ստեղծէր ոչ միայն Արեւելեան Հայաստանի, Կովկասի, Արեւմտեան Հայաստանի եւ Օսմանեան կայսրութեան այլ հայաբնակ վայրերուն մէջ, այլեւ Պալքաններու, Արեւմտեան Եւրոպայի, Հիւսիսային Կովկասի, Եգիպտոսի, Պարսկաստանի, ԱՄՆ-ի մէջ եւ այլ տեղեր: Այս տարածումին զուգահեռ Հ.Յ.Դ.ն կը մնար հայաստանակեդրոն կուսակցութիւն, եւ թերեւս նաեւ այս իրողութեան արդիւնք է Հ.Յ.Դ. հզօրութեան ֆենոմենը:

Պալքանեան թերակղզին, իր աշխարհագրական դիրքով, Հ.Յ.Դ. գործունեութեան համար իւրատեսակ կարեւոր յենակէտ մը կը հանդիսանար: Գտնուելով Կոնսթանտնուպոլսոյ կից, Երկրին մօտիկ եւ, միաժամանակ՝ Եւրոպայի տարածքին մէջ, իր դիրքը բացառիկ էր յեղափոխական աշխատանքներու իրականացման համար: Կարեւոր էին նաեւ Պալքանեան նաւահանգիստներու (*Կոնստանցա*, *Վառնա*, *Աթէնք*) ծովային հաղորդակցութեան հնարաւորութիւնները Փոքրասիական նաւահանգիստներուն հետ: Բարենպաստ պայմանները պայմանաւորուած էին նաեւ Պալքանեան ժողովուրդներու քաղաքական իղծերով եւ թուրքե-

րու հանդէպ ունեցած հակակրանքի տրամադրութիւններով:

Այս աշխարհագրական եւ քաղաքական յարմարութիւնները պատճառ հանդիսացան, որ Հ.Յ.Դ.ն կանուխէն արմատներ նետէ Պալքաններու մէջ: Հ.Յ.Դ.ն կազմակերպականօրէն նախ հաստատուեցաւ Պուլկարիոյ[2], Ռումանիոյ մէջ, ապա՝ Յունաստանի մէջ:

Նախընթաց շրջանին, Յունաստանի մէջ թուրքերու վարած հալածական քաղաքականութիւնը փաստօրէն նպաստած էր, որ յոյները, ընդհանուր առմամբ, բարեացակամ վերաբերում ցուցաբերէին հայ յեղափոխական շարժման հանդէպ:

Պէտք է արձանագրել նաեւ, որ մինչեւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հաստատումը, 1892ի Օգոստոսէն, Հնչակեան կուսակցութեան կեդրոնատեղին ժընեւէն[3] տեղափոխուած էր Աթէնք[4]: Հոս եկած էին Հնչակեան կուսակցութեան հիմնադիրներ ու փաստացի ղեկավարներ Նազարբեկեան ամուսինները[5]: Բայց Աթէնքը նախ ընտրուած էր Երկրին մօտ գտնուելու հանգամանքի բերումով: Հնչակեանները Յունաստանի մէջ առանձնապէս գործունեութիւն չունէին:


Հ.Յ.Դ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ 19-ՐԴ ԴԱՐՈՒ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ 20-ՐԴ ԴԱՐՈՒ ՍԿԻՋԲԻՆ

19-րդ դարու վերջաւորութեան Յունաստանի սահմանները աւելի փոքր էին քան այսօր: Մասնաւորապէս երկրի հիւսիսային շրջանը, իր թեսաղոնիկէ քաղաքով, դեռ կը գտնուէր Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ: Այս վերջին հանգամանքի բերումով Հիւսիսային Յունաստանը, ըստ էութեան, նպաստաւոր չէր Հ.Յ.Դ. գործունեութեան համար:

Ինչ կը վերաբերի Հարաւային Յունաստանին, նոյնպէս այստեղ՝ Հ.Յ.Դ. տարածումը ուշ սկսաւ, ի տարբերութիւն Պուլկարիայի եւ Ռումանիայի: Արդէն նշեցինք, որ հայ ազգային կուսակցութիւններէն Հնչակեաններու կեդրոնատեղին թէեւ տեղափոխուած էր Աթէնք, բայց այդուհանդերձ 1890-ական թուականներուն Յունաստանի մէջ հայ յեղափոխականները լայնածաւալ գործողութիւններ չէին իրականացներ:

Հնչակեաններու կեդրոնը 1892ին Աթէնք տեղափոխելէ ետք, ջանքեր գործադրուեցան եւ բանակցութիւններ վարուեցան այստեղ գտնուող դաշնակցականներուն կողմէ, հնչակեաններուն հետ միութիւն մը կազմելու ուղղութեամբ[6]: Այս մասին տեղեկութիւններ կը քաղենք Աթէնքի դաշնակցականներէն ժընեւ ուղարկուած նամակներէն [7]:

Պէտք է նշել, որ Աւետիս եւ Մարո Նազարբեգեան ամուսիններու ունեցած կոշտ դիրքորոշման պատ-



Պանք Օթոմանի գրաման դեպքն եւ հայութեան դէմ սանձազերծուած յարձակումներէն ետք՝ հայ գաղթականներու ժամանում Աթէնք: (Լոնտոնի թերթի մէջ հրատարակուած լիթոկրաֆի, 1896)

ճառով այդ միութիւնը չի կայացաւ:

Ամբողջ 1890-ական թուականին Հարաւային Յունաստանի մէջ թէւ 2.3.7. կազմակերպական կառոյց չէր գործեր, այսուհանդերձ դաշնակցական տարբեր գործիչներ կը յայտնուէին Աթէնք: Օրինակ, 1897ի Յունուարին Փիրեայէն կը գրեն «**Դրօշակին**», որ այն կը բաժնուի Աթէնքի, Փիրեայի, Վոլոյի մէջ, եւ անհրաժեշտ է անելցնել Յունաստան ուղարկուող թերթերու քանակը[8]:

Նոյն ժամանակահատուածին Աթէնքի դաշնակցականները հոգատարութիւն կը ցուցաբերեն այստեղ ժամանած «**հիւանդ ընկերներու հարցերուն**», մէկ մասը փորձելով պահել տեղւոյն վրայ, իսկ միւս մասն ալ ուղարկելով Եգիպտոս՝ Աղեքսանդրիա[9]: 1897ի Օգոստոսին Աթէնք կը գտնուէին Պանք Օթոմանի գործողութեան[10] մասնակից հինգ դաշնակցականներ[11]:

Փաստօրէն, 1890ական թուականներուն Աթէնքի մէջ թէւ 2.3.7. կազմակերպութիւն չի գործեր, բայց այստեղ յայտնուած դաշնակցական անհատ գործիչները համապատասխան քարոզչութիւն կը փորձեն իրականացնել հայութեան շրջաններէն ներս: Միաժամանակ Աթէնքը նպաստաւոր, բայց ժամանակաւոր, խարխիւ ու կայան կը հանդիսանայ Օսմանեան կայսրութենէն եւ յատկապէս Արեւմտեան Հայաստանէն արտասահման գացող եւ հակառակ ուղղութեամբ մեկնող կուսակցական գործիչներուն համար:

Աթէնքը տարանցիկ կէտ հանդիսանալու, ինչպէս նաեւ տեղւոյն վրայ «**Դրօշակի**» միջոցով քարոզչութիւն իրականացնելու մասին վկայութիւնները կը վերաբերին նաեւ 1900-ական թուականներու սկիզբին[12]: Աթէնքէն, եւ դէպի Աթէնք գրուած դաշնակցականներու նամակներէն պարզ կը դառնայ, որ յատկապէս կարեւոր եղած է կապը Չմիւռ-

նիայի, Կիլիկիոյ եւ Եգիպտոսի հետ: Հաւանաբար ծովային հաղորդակցութեան ընձեռած դիւրութիւնները նպաստած են անոր:

1903 թուականին Հարաւային Յունաստանի մէջ գործած են դաշնակցական խումբեր, որոնց գործունէութեան համար կուսակցական այլ կոմիտէներէ գումար խնդրուած է[13]: Գումարուած են կանոնաւոր ժողովներ: Նամակներէն մեկուն մէջ նշուած է, որ Վոլոյի մէջ «**Արշակունեաց**» անունով նոր խումբ մը բացուած է, եւ անհրաժեշտ է այնտեղ թերթ ուղարկել[14]:

Աթէնքի մէջ գործող «**Կիլիկիա**» դաշնակցական խումբի 1903 թուականի միամեայ տեղեկագրէն յայտնի կը դառնայ, որ այդ խումբի հիմնական նպատակը կուսակցական քարոզչութիւն իրականացնելն է, ինչպէս եւ կարիքի մէջ գտնուող հայրենակիցներուն համար գումարներ հաւաքելը[15]:

Յատկանշական է նաեւ այն փաստը, որ ազգային-ազատագրական պայքարի քարոզչութեան առումով դաշնակցականները «**Դրօշակի**» տարածումէն զատ, նախկին աւանդոյթը պահելով, փորձ կատարած են նաեւ «**Ննչակ**» պարբերականը տարածել[16]:

Ինչպէս նշեցինք, Աթէնքը յարմար խարսխակայանն էր դէպի արտասահման մեկնող հայ տարագիրներուն համար: Տեղի դաշնակցականները իրենց անհանգստութիւնը կը յայտնեն հայութեան տարագրութեան սարսափելի երեւոյթին համար[17]: Բացի այս բոլորէն, Նոյնիսկ կը որոշուի Չմիւռնիայի բանտերուն մէջ գտնուողներուն համար դրամ ուղարկելու նախաձեռնութիւն[18]:

Ինչպէս կը տեսնենք, 1900ական թուականներէն արդէն, բաւական աշխուժութիւն կը նկատուի Հարաւային Յունաստանի մէջ 2.3.7. գործունէութեան մէջ:

Աթէնքի դաշնակցական կառոյցը կը զբաղի նաեւ Արեւմտեան Հայաստան եւ յատկապէս Կիլիկիա գէնք տեղափոխելու խնդրով: Տեղւոյն վրայ փորձ կը կատարուի գէնքեր ձեռք բերելու նպատակով[19]: Յունաստանի մէջ հաստատուած Սարհատ[20] կեղծանունով գործիչի՝ 2.3.7. Արեւմտեան Բիւրոյին գրած նամակին մէջ խօսք կ'ըլլայ Լեռնավայր՝ Կիլիկիա գէնք տեղափոխելու մասին[21]:

1904ի աշնան, Կիլիկիայի համար գէնք գնելու նպատակով գումար կը փոխանցուի Աթէնք՝ Սարհատին[22]: Ան մշտական կապի մէջ էր Սիմոն Չաւարեանի հետ, որը Կիլիկիայի մէջ կը գործեր: Վերջինիս հետ քննարկման նիւթ հանդիսացած է նաեւ զինավարժութիւններուն յունահայերու մասնակցութեան հարցը, որու իրականացման համար որպէս յարմար վայր ընտրուած է Պուլկարիան [23]:

Փաստօրէն Յունաստանի մէջ գործող դաշնակցական կառոյցը ոչ միայն ներգրաւուած է ազատագրական պայքարին գէնք հասցնելու գործին մէջ, այլեւ փորձած է այդ պայքարին մասնակցող մարտիկներ պատրաստել:

2.3.7. զինական գործի ասպարեզին մէջ Աթէնքի ունեցած տեղը առաւել արժեւորուած է 1904ին, 2.3.7. Սոֆիայի 3-րդ Ընդհանուր ժողովէն յետոյ:

1904ի Յուլիսէն ետք Աթէնքի մէջ կը սկսին գումար-

ΑΙ ΧΘΕΣΙΝΑΙ ΣΥΛΛΗΨΕΙΣ... ΑΡΜΕΝΙΩΝ ΕΝ ΑΘΗΝΑΙΣ



ΣΑΔΑΜΟΝ ΚΙΒΟΡΞΙΑΝ, ΑΣΥΛΙΑ ΑΒΙΑΣΙΑΝ, ΚΙΡΚΙΑΝ, ΤΙΓΡΑΝ ΑΒΡ ΔΑΥΙΔΙΑΝ, ΣΥΒΟΙ ΠΙΑΤΣΙΑΝ, ΙΩΑΝ. ΑΡΤΙΚ ΟΣΚΕΡΞΙΑΝ

Ζայ jեղափոխականներու գծանկարներ՝ հրատարակուած ԷՄՊՐՈՍ օրաթերթին մէջ (24 Օգոստոս 1905)

րուիլ 2.3.7. Յուցական Պատասխանատու Մարմնի նիստերը՝ որոշելու համար «**իւր ձեռնարկների բնույթը**»[24]: Այստեղ որոշում կ'անուի բռնի հանգանակութեան ձեռնարկ կազմակերպելու եւ ճուցական գործողութիւններ իրականացնելու մասին[25]:

Աթէնքը իւրատեսակ խարխիս կը դառնայ Յուցական Պատասխանատու Մարմնին համար:

1907ի Յունիսին 2.3.7. Արեւմտեան Բիւրոն յատուկ գործիչ կ'ուղարկէ Աթէնք զէնքի գործը համարելու համար[26]: Արեւմտեան Բիւրոյի տեղեկագրին մէջ կը խօսուի Աթէնքի մէջ զինական պահեստի գոյութեան մասին[27]:

Ըստ Էութեան, Յունաստանը 2.3.7. մարտական գործի համար կարելու յենակէտի կը վերածուի: Երկրի աշխարհագրական դիրքը եւ ընծեռած որոշակի բարենպաստ քաղաքական պայմանները հնարաւորութիւն կուտան այստեղէն զինական աջակցութիւն կազմակերպելու արեւմտահայ ազատագրական պայքարին:

Բայց միշտ չէ, որ յունական հասարակութիւնը կամ պետութիւնը ըմբռնումով կը մօտենայ Յունաստանի մէջ 2.3.7. գործունեութեան:

1905ին, յունական թերթերը թրքական կառավարութեան հրահրմամբ հակահայկական յօդուածներ կը հրատարակեն, սադրելով յոյները հայերուն դէմ, մինչ ոստիկանութիւնը եւս երբեմն թուրքերէն աւելի դաժան կը գտնուի հայերուն դէմ: Կուսակցութիւնը կը ստիպուի նաեւ այս երելոյթներուն դէմ պայքարելու[28]: Նոյնիսկ բանտարկութիւններ տեղի կ'ունենան: Իսկ յայտնի է թէ ձերբակալութիւններ կը կատարուին նոյնիսկ թերթերու տարածման համար[29]: Տեղի կուսակցական մարմինները ստիպուած կ'ըլլան նաեւ այդ հարցերով զբաղելու[30]: Միաժամանակ կը փորձեն լեզու գտնել յունական թերթերու խմբագիրներու հետ, որպէսզի անոնք հայամետ նիւթեր հրատարակեն[31]:

Մէկ կողմէ յունական իշխանութիւններու յարուցած խոչընդոտները, միւս կողմէ, աւելի ուշ՝ 1908ին վրայ հասած Երիտթուրքական յեղաշրջումը եւ անոր հետեւած Օսմանեան կայսրութեան ներքոյ ընծեռուած համեմատական ազատութիւնները, Աթէնքի դերը կը թուլացնեն 2.3.7. գործունեութեան տեսանկիւնէն:

Հարաւային Յունաստանի մէջ 2.3.7. գործունեութիւնը համեմատականօրէն աւելի աշխուժ դարձաւ Տեղասպանութեան տարիներուն, երբ Կոսթանտնուպոլսէն 2.3.7. գործիչները երբեմն Աթէնքէն կ'անցնէին[32]: Ընդհանուր առմամբ, Տեղասպանութեան տարիներուն Աթէնքի մէջ 2.3.7. կառոյցի հիմնական խնդիրը՝ տարագիր զանգուածները ընդունելու եւ դէպի Արեւմուտք կամ Եգիպտոս ճանապարհելու մէջն էր:

Հիսիսային Յունաստանի մէջ՝ Արեւմտեան Թրակիայ եւ Մակեդոնիա 2.3.7. ամենաիին կազմը կը յիշատակուի 1908ին (*Տեսնադած, ներկայիս՝ Աղէքսանտրուպոլիս*), որը ստեղծուած էր Արիս Իսրայէ-



Հայ jեղափոխականներ Լամիայի բանտին մէջ (1905)

լեանի կողմէ: Այս կազմը կը գործէ մինչեւ առաջին աշխարհամարտի աւարտը՝ ըստ Եուրօեան վերածուելով Թրակիայի եւ Մակեդոնիայի կազմակերպութեան կորիզի:

Հիւսիսային Յունաստանի Կիւմուլճիւսա (*Գոմոթիսի*) քաղաքին մէջ շ.Յ.Գ. կազմակերպութիւնը կը սկսի գործել 1915 թուականէն յետոյ, Ատրիա-նուպոլիսէն հոն տեղափոխուած Մանուէլ եւ Սկրտիչ Ինքսերճեան եղբայրներու եւ Երուանդ Պարոնեանի կողմէ[33]:

Այս տարածաշրջանի գլխաւոր քաղաք՝ Թեսաղոնիկէի մէջ շ.Յ.Գ. կառոյցը կը հիմնադրուի 1921ին, Սարգիս Սարունիի (*Պարտիզակցի*) կազմակերպումով[34]:

Այսպիսով, շ.Յ.Գ. հիմնադրումէն յետոյ, տարիներու ընթացքին, Յունաստանի մէջ կուսակցութեան կազմակերպական արմատաւորումը կը հասնի որոշ հանգրուանի: Այդ կը նպաստէ, որ յատկապէս Փոքրասիական ողբերգութենէն յետոյ յոյն եղբայրներու հետ հիւրընկալ Յունաստանի մէջ ապաստանած տասնեակ հազարաւոր հայ գաղթականներու, յատկապէս որբերու խնամքի համար կազմակերպական աշխատանք տանելու յստակ հիմքեր դրուին: Ծիշոյ Է, ինչպէս կը տեսնենք աւելի վար, թէ Յունաստանի մէջ շ.Յ.Գ. կառոյցի անհամեմատ ուժեղացման կը նպաստեն յատկապէս Պոլսէն, Չմիւռնիայէն եւ այլ վայրերէ այստեղ հանգրուանած գաղթական դաշնակցական գործիչները, բայց տեղւոյն վրայ կուսակցական կառոյցի գործունէութեան փորձառութիւնը եւս նպաստաւոր դարձած է հետագայ արդիւնաւետ աշխատանքներուն համար: Դաշնակցութիւնը իբրեւ կազմակերպուած կուսակցութիւն, գործելով Յունաստանի առաւելապէս մեծ ու բազմամարդ քաղաքներուն մէջ, հետագային նաեւ հայ որբերով բնակեցված գիւղերուն մէջ, անվիճելի կնիք կը թողէ յունահայ ազգային կեանքին վրայ:

Վ.Յ.Գ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԵՋ 1920-ԱՎԱՆ ԹՈՒՎԱԿԱՆՆԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Ինչպէս արդէն ակնարկեցինք, Յունաստանի մէջ շ.Յ.Գ. ներկայութիւնը առաւել ակնառու դարձաւ 1920-ական թուականներու սկիզբին տեղի ունեցած զանգուածային գաղթէն յետոյ:

Հայերու զանգուածային գաղթը Յունաստան տեղի ունեցաւ երեք փուլով:

Առաջին փուլը տեղի ունեցաւ 1921ին, Կիլիկիայի հայութեան տեղահանութենէն յետոյ: Կիլիկիահայութեան մէկ մասի (*շուրջ 5.000*)[35] եւ Նիքոմիտիայի (*Իզմիթ*) շուրջ 4.000 հայ գաղթականութիւնը ապաստան գտաւ Յունաստան:

Երկրորդ եւ ամենամարդաշատ փուլը անմիջապէս կապուած է 1919-1922 թուականներու յոյն-թրքական պատերազմի յունական բանակներու կրած պարտութեան եւ անոր որպէս հետեանք Փոքրասիական ողբերգութեան հետ: Չմիւռնիայէն, Կոստանդնուպոլսէն, եւ Եգէականի Փոքրասիական ծովափնեայ բնակավայրերէն յոյներու հետ հազարաւոր հայերու տեղահանութեամբ, որոնք



Հայ գաղթականներ կը ժամանեն Փիրեայի Նաւահանգիստը (1922)

հաստատուեցան Յունաստան: Միայն Չմիւռնիայէն մօտ 65.000 հայեր ապաստան գտան Յունաստան[36]:

Հայութեան դեպի Յունաստան գաղթի երրորդ փուլը Թրակիայի շրջանի պարպումէն ետք էր:

1923ի Յուլիս 24-ին, Լոզանի մէջ կնքուած հաշտութեան պայմանագրի համաձայն, ամբողջ Արեւելեան Թրակիան, որը 1920ին Սերի պայմանագրով տրուած էր Յունաստանին, սորէն վերադարձուցաւ Թուրքիոյ: Զեմալականներու պահանջով պայմանագիրը կը նախատեսէր ազգաբնակչութեան փոխանակումը Թուրքիայի եւ Յունաստանի միջեւ: Հարիւր-հազարաւոր յոյն բնակչութեան հետ միասին Արեւելեան Թրակիայէն դեպի Մակեդոնիա եւ Արեւմտեան Թրակիա փոխադրուեցան տասնեակ հազարաւոր հայ գաղթականներ[37]:

Ըստ 1928ի պաշտօնական մարդահամարի տուեալներուն՝ 1918-1923 թուականի Թուրքիոյ վարած ցեղասպանական քաղաքականութեան հետեանքով, Յունաստան հաստատուեցաւ 1.221.849 գաղթական, այս թիւի 980.000-ը յոյներ, իսկ մնացած 241.849-ը՝ այլ ազգերու ներկայացուցիչներ, որոնց կարեւոր մէկ մասը կը կազմէին հայերը[38]:

Յունաստանի արտաքին գործերու նախարարութեան ընդհանուր քարտուղար Բ. Աղիրոպոլոսը «Հելէն կառավարութիւնը եւ հայ գաղթականները» խորագրով իր յօդուածին մէջ, յենուելով Ֆ. Նանսենի կազմած տեղեկագրի տուեալներուն վրայ, հայ գաղթականներու թիւը կը հասցնէ 120.000-ի[39]:

Յիշատակուած 120.000-էն 50.000-ը կ'ապրէր Հին (հարաւային) Յունաստանի եւ կղզիներուն մէջ, իսկ մնացեալը՝ Նոր (*հիւսիսային*) Յունաստանի՝ Մակեդոնիոյ եւ Արեւմտեան Թրակիոյ մէջ[40]:

Այսպիսով, 1921-1923ին միջին հաշուով շուրջ 100.000 հայեր, փրկուելով ցեղասպանութենէն, ապաստան կը գտնէին Յունաստանի հիւրընկալ գիրկը: Հակառակ այդ տուեալին, թէ մինչ այդ Յունաստանի մէջ հայեր կային եւ անոնց մէկ մասի նախնիները հաստատուած էին հարիւրամեակներ առաջ, հայ համայնքային կեանքը կը սկսէր ձեւաւորուիլ միայն 1922-1923 թուականներէն ետք:

Չմիւռնիայի եւ Կիլիկիայի գաղթերէն յետոյ՝ 1922ի Նոյեմբերին Յունաստան կը կազմուի շ.Յ.Գ. Նոր կոմիտէ, բաղկացած՝ Գաբրիէլ Լազեան, Սկրտիչ, Տիգ-

րան, Յակոբ Տեր-Ներսիսեան, Արամ, Յովհաննէս կազմով[41]: Տեղոյն վրայ կը գործէր նաեւ ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութեան գործակաւտարը, որ կը փորձէր Աթէնք եւ Փիրեա հաւաքուած գաղթականութեան օգնել[42]: Վերջին գաղթերէն ետք Թեսաղոնիկէն կը դառնայ Յունաստանի Հ.Յ.Դ. կազմակերպութեան կեդրոնը: Սկիզբին կը գործէ Մեկուսի կոմիտէի կազմ, որ 1926էն ետք կը վերածուի Կեդրոնական Կոմիտէի[43]: Որոշ ժամանակ ետք Հ.Յ.Դ. Յունաստանի Կեդրոնական Կոմիտէի կեդրոնատեղին կը տեղափոխուի մայրաքաղաք Աթէնք:

Պէտք է արձանագրել, որ 1920-ական թուականներու սկիզբին, բաւական թիւով ակնառու եւ ներկայացուցչական հանգամանք ունեցող դաշակցականներ հաստատուեցան Յունաստան՝ Հրաչ Փափազեանը, Յակոբ Սիմոնիս, Մատթոս Էպիդարթեանը, Կարո Գեորգեանը, Գաբրիէ Լազեանը, Աստոն Կազելը, Արամ Կայծակը եւ ուրիշներ:

1923ի Յունիսի կ'ընտրուի Հ.Յ.Դ. Յունաստանի Մեկուսի կոմիտէն: Տարբեր քաղաքներու մէջ կը գործեն կոմիտէութիւններ՝ 250 կուսակցականներով:

Ծրագիր կայ 5-6 ամսու ընթացքին, այդ թիւը հասցնել 700-800ի: Շրջանի պատասխանատուն Հրաչ Փափազեանն է[44]:

1924ի Յունիսի կը գումարուի Բ. Շրջանային ժողովը որ կ'ընտրէ Նոր Մեկուսի կոմիտէ՝ Գաբրիէ Լազեան, Արամ Շիրինեան՝ Աթէնքէն, Ահարոն Թեղիբեան, Կարպիս Գազանճեան, Լեւոն Մոզեան, Միհրան Փափազեան, Տրքթ. Աբրահամեան՝ Թեսաղոնիկէն[45]:

Յունաստանի մէջ կը հաստատուի նաեւ Հ.Յ.Դ. մամուլը[46]: Մինչեւ տեղական կուսակցական մամուլի ձեւաւորումը, շրջանը կը ստանար Պոլսոյ «Ճակատամարտը» օրական 50 օրինակով[47]: 1923ի սկիզբին, թերթի հրատարակութեան համար Հ.Յ.Դ. Յունաստանի կոմիտէն գումար կը խնդրէ Եգիպտոսի Հ.Յ.Դ. կազմակերպութենէն[48]:

1923ին կը սկսին հրատարակուիլ Հ.Յ.Դ. երկու պաշտօնաթերթեր՝ «Նոր օր»ը Աթէնքի մէջ[49] եւ «Ալիք»ը Թեսաղոնիկէն[50], որու հիմնադիրը Կ.Պոլսոյ «Ճակատամարտ»ի խմբագիրներէն Լեւոն Մոզեանն էր[51]: Աթէնքի «Նոր օր»ի հիմնադիրներն էին Գաբրիէ Լազեանը, Աստոն Կազելը, Արամ Շիրինեանը եւ Պօղոս Սվաճեանը: 1924ի Յունաստանի 1էն ետք շաբաթաթերթը կը դառնայ երկօրեայ եւ անխափանօրէն կը հրատարակուի 20 տարի, մինչեւ 1944ի Սեպտեմբերի գերմանացիներու նահանջն ու համայնավարներու ապստամբութիւնը: «Նոր օր»ը կարեւոր դեր ունեցած է յունահայ հասարակական-քաղաքական կեանքէն ներս: Թերթը բարձր պահած է յունահայ գաղութի վարկը յոյն ժողովուրդի եւ պետութեան կեանքէն ներս[52]:

Աթէնքի մէջ Յակոբ Սիմոնիսի խմբագրութեամբ կը սկսի հրատարակուիլ նաեւ Հ.Յ.Դ. Պատանեկան Միութեան «Լուսադբիր» պաշտօնաթերթը[53]:

Ինչպէս կը տեսնենք, Հ.Յ.Դ. Յունաստանի կառուցը 1920-ականներու առաջին կիսուն, արդէն նկատելիօրէն կը կերպարանափոխուի՝ դառնալով ան-



Օսմանեան բանտերէն ազատ արձակուած հայ գերիներու մասին «Նոր Օր» օրաթերթի անդրադարձը (7 Նոյեմբեր 1923)

լի ընդգրկուն: 1923ին, երբ Յունաստան կը գտնուի ռազմական կառավարութեան ներքոյ, հայ գաղթականութեան կ'առաջարկուի ընդունիլ Յունաստանի քաղաքացիութիւնը: Սակայն, յատկապէս Փոքր Ասիայէն եկածները, տարակուսանքով կը մտտեան յունական կառավարութեան առաջարկին: Իրենց մօտ հաստատ էր համոզումը, թէ պահպանելով թրքական քաղաքացիութիւնը, օր մը կարելի պիտի ըլլայ դիւրութեամբ վերադառնալ եւ վերատիրանան իրենց տուներուն ու կարուածներուն. այսպէս հրաժարելով ընդունիլ Յունաստանի կառավարութեան առաջարկը:

1923ի Ապրիլ 20-ին Հ.Յ.Դ. Արտասահմանի Պատասխանատու Մարմնին գրուած Հ.Յ.Դ. Յունաստանի Մեկուսի կոմիտէի նամակին մէջ կ'ընտրուի, որ Յունաստանի մէջ վիճակը կը բարդանայ եւ հայ գաղթականութեան քաղաքացիութեան հարցերը կարգաւորելու խնդիր կայ[54]:

Յունաստանի քաղաքացի դառնալը մէկ կողմէ ձեռնտու էր յունահայութեան, քանի որ որոշ իրաւունքներ ստանալու առիթ պիտի տար, միւս կողմէ սակայն անկախութիւն կար որ ՀՀ պատուիրակութիւնը եւ Ազգային պատուիրակութիւնը որոշ յաջողութիւններ հաւանական էր արձանագրելիս արեւմտահայերու իրաւունքներուն առումով[55]:

Յունական քաղաքացիութեան զանգուածային ընդունումը կը նշանակէր որ պիտի հրաժարէին

պահանջատիրութենէն, ինչ որ ունէ մէկը չէր փափքեր:

Այս մտահոգութենէն առաջնորդուելով, շ.Յ.Գ. Յունաստանի Մեկուսի կոմիտէն դեմ կը գտնուէր զանգուածային քաղաքացիութիւն (հպատակութիւն) ընդունելէ, միաժամանակ սակայն առանձին դէպքերուն որեւէ արգելք չի հանդիսանալով անհատական քաղաքացիութեան պարագաներուն: Այս տեսակետը ներկայացուած էր նաեւ պետական շրջանակներուն, թիրիմացութիւններէ խուսափելու համար[56]:

Յունական կառավարութիւնը կը փափաքէր որ հայ եւ յոյն ստուար թիւի բնակչութեամբ ապահովել Արեւմտեան Թրակիոյ եւ Մակեդոնիոյ անվտանգութեան հարցերը: Սակայն երբ հայերը կը հրաժարին յունական քաղաքացիութիւն ընդունելէ, յունական կառավարութիւնը կը որոշէ նորեկ գաղթականութիւնը դուրս հանել երկրէն: Ցաւով պէտք է արձանագրել, որ Յունաստանի մէջ գործող հայկական ազգային կուսակցութիւնները եւ յատկապէս Հայ Յեղափախական Դաշնակցութիւնը, հակառակ գործադրուած ջանքերուն, չկարողացան կանխել յունահայերու մէկ մասի տեղափոխումը[57]:

Յունաստանի կառավարութիւնը պաշտօնապէս կը դիմէ Ազգերու լիկային եւ կը պահանջէ համապատասխան տեղ որոշել հայ գաղթականութիւնը Յունաստանէն դուրս բերելու եւ տեղաւորելու համար: Որպէս բնակավայր Ազգերու լիկայի յատուկ յանձնաժողովը կ'առաջարկէ Խորհրդային Հայաստանը, Կովկասը, Ֆրանսան, Թուրքիան, Հարաւային Ամերիկան[58]: Յունահայ գաղթականներու մեծ մասին համար նախընտրելի կը համարուի Հայրենիք տեղափոխումը, յատկապէս որ որոշ սփիւռքահայ հասարակական-քաղաքական շրջանակներ յանձն կ'առնեն դէպի Հայաստան յունահայ գաղթականներու ճանապարհածախսը[59]:

Թերեւս այս դէպքերէն յետոյ էր որ սկսաւ յունահայութեան մեծ արտագաղթը Յունաստանէն՝ յատկապէս դէպի Խորհրդային Հայաստան եւ Արժանթին:

1923ի Յունիսին տեղի ունեցած շ.Յ.Գ. Յունաստանի Ա. Շրջանային ժողովը կ'որոշէ գաղութիւն համար ինդիւսեր չունենալու նպատակով՝ ջերմ յարաբերութիւններ ունենալ յոյն ժողովուրդին հետ, խուսափելով Յունաստանի ներքաղաքական կեանքին մէջ կողմ դառնալէ: Միաժամանակ ինդիւսեր կը դրուի օգնելու հայ գաղթականութեան որպէսզի գործով ապահովուի, նիւթապէս ապահով զգալու համար, նաեւ գաղթականութիւնը համխմբուած պահելու համար, յատկապէս նպաստաւոր շրջաններու մէջ: Կարելոր էր գաղթականութեան մէջ վառ պահել ազգային ոգին ու նկարագիրը, եւ աշխատանքներ տանիլ գաղթականներու երեխաներուն համապատասխան մտաւոր, բարոյական, ֆիզիկական դաստիարակութիւն ապահովելու համար[60]:

Փաստօրէն, շ.Յ.Գ.ն, Յունաստանի մէջ կազմակերպականօրէն ամրապնդուելու ճիգին զուգահեռ, յանձն կ'առնէր նաեւ յունական պետութեան եւ յունահայ գաղութի փոխ յարաբերութիւնները կարգաւորելու պարտաւորութիւնը: Ծիշոյ է, թէ հե-



տագայ տարիներուն ընթացքին, տարբեր հանգամանքներու բերումով, երբեմն այդ յարաբերութիւնները կը սրէին, երբեմն կը ջերմանային, բայց ընդհանուր առմամբ պէտք է ըսել, թէ շ.Յ.Գ.ն նպաստեց յունահայ համայնքի համար յունական պետութեան հետ յարաբերուելու որոշակի համակարգի ձեւաւորման:

Փոքրասիական ողբերգութենէն ետք Յունաստան գաղթած հայերը իրենց ազգային-վարչական կազմակերպութիւնները ստեղծեցին երկու առանձին շրջաններու մէջ՝ Հին (*Հարաւային*) Յունաստանի եւ կղզիներու, եւ Նոր (*Հիւսիսային*) Յունաստանի մէջ՝ Աթէնքի եւ Թեսաղոնիկէի մէջ կեդրոններով: Այս իրողութեան հիմամբ աստիճանաբար կարգաւորուեցաւ ստեղծուած անկանոն վիճակը: Յունահայ քաղաքական շրջանակները եւ յատկապէս շ.Յ.Գ. Յունաստանի կազմակերպութիւնը աշխուժօրէն ներգրաւուեցան ազգային մարմիններու ստեղծման գործին մէջ, սակայն այդ մարմիններու ձեւաւորումը տեղի կ'ունենար հայ առաքելական եկեղեցւոյ շուրջ:

1922ի Դեկտեմբերին Պոլսարեստ գտնուող շ.Յ.Գ. Արտասահմանի Պատասխանատու Մարմնին լուր կը դրկուի, թէ Աթէնքի մէջ թաղական խորհուրդ ստեղծուած է եւ խօսք կ'ըլլայ ազգային համակարգող մարմնի մը ստեղծման անհրաժեշտութեան մասին[61]: Այս ուղղութեամբ Յունաստանի շ.Յ.Գ. ղեկավարները բանակցութիւններ կը վարեն տեղւոյն Ռամկավար եւ Հնչակեան անդամներու հետ[62]:

Հարաւային Յունաստանի ազգային մարմիններուն մէջ շ.Յ.Գ. մեծամասնութիւն կը կազմէ շնորհիւ «**Աթէնքի ընկերներու ճկունութեան եւ Հնչակեաններու հետ ունեցած համաձայնութեան**»[63]:

Ազգային-վարչական կազմակերպութիւններէն ամենակարեւորը Ազգային տնօրէնութիւններն էին: Ատրիանուպոլսոյ (*Էսիրիւէ*) եւ Ռոտոսթոյի (*Թեքիրդաղ*) ազգային տնօրէնութիւնները կը վերակազմաւորուին Թեսաղոնիկէ գտնուող Հիւսիսային Յունաստանի տնօրէնութեան: Թեսաղոնիկէ տեղափոխուած էին Ատրիանուպոլսոյ եւ Ռոտոստոյի Ազգային առաջնորդարանները, Առաջնորդ Երուանդ Եպիսկոպոս Փերտահճեանի հետ եւ ինքնուրոյն թեմ ստեղծած էին՝ Թրա-

կիոյ եւ Մակեդոնիոյ Առաջնորդարան[64]: Երուանդ սրբազանը տարբեր առիթներով յաճախ յարձակման թիրախ կը դառնար: Սադրանքներէն խուսափելու համար ան կը հեռանար Թեսաղոնիկէէն անցնելով Պուլկարիա եւ Ֆիլիպի մէջ կ'ընտրուէր Պուլկարահայոց առաջնորդ՝ փոխարինելով հանգուցեալ Ստեփանոս արքեպիսկոպոս Յովակիմեանին: Հակառակ նման դէպքերու առկայութեան՝ Թեսաղոնիկէի մէջ թեմական կազմակերպութիւնները՝ ժողովները եւ մարմինները կ'ամրապնդուէին[65]:

Եթէ Թեսաղոնիկէի մէջ հնարաւոր եղաւ Ատրիանուպոլսոյ եւ Ռոտոսթոյի միացեալ առաջնորդարաններու փոխադրմամբ Նոր առաջնորդ եւ առաջնորդարան ունենալ, ապա Աթէնքի մէջ ամէն ինչը գերոյէն պէտք էր սկսիլ: Աթէնք հասնող առաջին հայ բարձրաստիճան հոգեւորականը Չմիւռնիայի առաջնորդ Ղեւոնդ եպիսկոպոս Դուրեանն էր:

Դուրեան սրբազանը իր ստեղծած յանձնախումբին միջոցով կը փորձէր իր ձեռքը կեդրոնացնել գաղթականութեան գործը[66]:

Քանի որ այդ խառնիճաղանջ օրերուն հնարաւոր չէր արագ ազգային մարմիններու ընտրութիւն կազմակերպել, Նպատակայարմար համարուեցաւ Չմիւռնիոյ քաղաքային եւ Գաւառական ժողովներու Աթէնք գտնուող անդամներով Ղեւոնդ եպիսկոպոս Դուրեանի Նախագահութեամբ եւ Սիիրան Ազնաւուրեանի ատենապետութեամբ ազգային մարմին ստեղծել: Որոշ ժամանակ ետք Ղեւոնդ եպիսկոպոսը, Ներքին խնդիրներու պատճառով հրաժարեցաւ Թեմի առաջնորդի պառօնէն[67], մեկնելով Նախ՝ Անգլիա, ապա, Ամերիկա[68]:

1923ին Աթէնքի թեմը դեռ կը պատկանէր Պոլսոյ պատրիարքարանին: Աթէնքի ազգային մարմնի խնդրանքով 1923ի սկիզբին Պատրիարքարանը Կարապետ արքեպիսկոպոս Մազլըմեանին իբրեւ պատուիրակ կ'ուղարկէ Աթէնք: 1924ին կը կայանայ Ա. Պատգամաւորական ժողովը, որը Հին Յունաստանի թեմի առաջնորդ կ'ընտրէր արքեպիսկոպոս Մազլըմեանին, որու թեկնածութիւնը կը հաստատուէր Էջմիածինը[69]: Պէտք է նշել, որ Յունաստանի դաշնակցական մարմինները պարբերաբար բողոքներ կը ներկայացնէին Մազլըմեանի մասին, որ յաճախ «խառնակչութիւն կ'ընէր»[70]:

1924ին կ'աւարտի ազգային մարմիններու ձեւաւորումը: Ազգային մարմիններու ստեղծումէն յետոյ կը սկսի յունահայ համայնքի ձեւաւորման կարեւոր ու դժուարին ուղին: Այսպէս հնարաւոր կը դառնայ ընդունող երկրի վստահութիւնը շահիլ, Նոյն պահուն լուծելով համայնքի խնդիրները: Հ.Յ.Դ. Յունաստանի կազմակերպութիւնը կը ջանայ Նպաստել ազգային մարմիններու գործունէութեան՝ գաղթականներու ու քաղաքացիութեան հարցերու կարգաւորման գործին մէջ[71]: Ցաւով պէտք է հաստատել թէ Աթէնքի ու Թեսաղոնիկէի մէջ գաւազան ազգային մարմիններ կ'ընտրուին, իրատեսակ երկուութիւն մը առաջացնելով: Թէ Աթէնքի, թէ Մակեդոնիոյ եւ թէ Թրակիայի մէջ ազգային մարմիններուն մէջ անդամակցողներու գերակշռող դաշնակցականներ են:

Այսպիսով, Հայոց Տեղասպանութենէն եւ Փոքրասիական ողբերգութենէն յետոյ՝ Յունաստա-



Արամ Կայծակ զինուորական զգեստով

նի հայ համայնքի թիւի անհամեմատ ստուարացումը կը ստիպէր ստեղծել ազգային մարմիններ, հայ գաղութի ներքին կեանքը կազմակերպելու եւ յունական կառավարութեան հետ աւելի արդիւնաւետ յարաբերութիւններ պահելու համար: Հ.Յ.Դ. Յունաստանի կազմակերպութիւնը աշխուժօրէն կը ներգրաւուէր այդ գործընթացին մէջ, ազդեցիկ դիրքեր ունենալով ազգային մարմիններուն մէջ, ինչ որ դրականօրէն Նպաստեց ներազգային կեանքի կազմակերպման, ինչպէս նաեւ համայնքի դիրքերու ուժեղացման յունական հասարակութեան մէջ:

Արդէն ձեւաւորուած ազգային մարմիններու գործունէութիւնը, հետագային մշտապէս լեցուն կ'ըլլար ներազգային-քաղաքական երբեմն պայքարի դրսեւորումներով, որ հետզհետէ աւելի կը սրէր: Հիմնական պայքարը կ'ընթանար մէկ կողմէ Հ.Յ.Դ., միւս կողմէ Ռամկավար-Ազատական կուսակցութեան, Սոցիալ-Դեմոկրատական Հնչակեան կուսակցութեան եւ համայնավարներուն միջեւ:

Եղած են եզակի դէպքեր, երբ հանգամանքի բերումով տեղի ունեցած է Դաշնակցութիւն-Հնչակեաններ համագործակցութիւն, այդ սակայն եղած է դրուագային եւ շատ կարճ ժամանակով[72]:

Հ.Յ.Դ. Յունաստանի կազմակերպութիւնը, Նկատի առնելով գաղթական հայութեան հոգեբանական ծանր վիճակը, ինչպէս նաեւ յունական ոստիկանութեան երբեմն ոչ պատշաճ մօտեցումները, եւ հաշուի առնելով 1920-ականները, յանձն առած էր նաեւ յունահայ գաղութի (յատկապէս

Աթենքի շրջանի) ներքին անվտանգութեան ապահովումը: Աթենքի մօտ՝ Տուրղուբի թաղին մէջ հաստատուած կիլիկեցիներուն մէջ էր նաեւ հանրնցի Արամ Կայծակը իր գինակիցներով, Չաքըճը՝ իր մարդոցմով, մի շարք չաուուշներ իրենց ջոկատներով: Այնպիսի կացութիւն մը կար, որ յունական ոստիկանութիւնը չէր միջամտեր Տուրղուբիի ներքին գործերուն:

Ոստիկանները լուրջ ինտիմիտներու առաջ գըտնուած էին, երբ փորձած էին պարտադրանք կիրառել այս շրջանի հայերուն հանդէպ: Սակայն երկու տարուայ ընթացքին ամէն ինչ իր տեղը պիտի մտներ եւ գաղթականները պիտի սկսէին հպատակիլ օրէնքին[73]:

Հ.Յ.Ն. մեծ նպաստ բերաւ Յունաստանի մէջ հայ կրթական գործի կազմակերպման: Այն այնչափ կարեւոր էր հայ սերունդները փրկելու եւ զանոնք հայ պահելու տեսանկիւնէն: 1923ին կը սկսի գործել Աթենքի Ազգային վարժարանը: Կրթական գործի կազմակերպման հիմնական աշխատաքները կ'իրականացին 1924էն յետոյ[74]:

Այսպիսով, 19-րդ դարու վերջաւորութենէն մինչեւ 1920-ական թուականներու կեսերը Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը բաւական լայնածաւալ գործունեութիւն մը իրականացուց Յունաստանի մէջ: Ստեղծուած նպաստաւոր պայմանները հաշուի առնելով՝ կուսակցութիւնը օգտագործեց բազմաթիւ հնարաւորութիւններ ուժեղացնելու համար արեւմտահայ ազգային-ազատագրական պայքարը: Արեւմտեան Հայաստան զէնք-զինամթերք, մարտական եւ կազմակերպական գործիչներ տեղափոխելու առումով՝ Յունաստանի դաշնակցական կազմակերպութեան դերը բաւական կարեւոր էր:

Հ.Յ.Ն. Յունաստանի կազմակերպութիւնը առաւել ուժեղացաւ 1920-ական թուականներու սկիզբին՝ մեծ օգնութիւն ցուցաբերելով Յեղասպանութեան եւ Փոքրասիական ողբերգութեան հետեւանքներով Յունաստան ապաստանած հայ գաղթականութեան:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. Աբրահամեան Աշոտ Գ., Համառոտ ուրուագիծ հայ գաղթավայրերի պատմութեան, հ. Բ, Երեւան, «Հայաստան» հրատարակչութիւն, 1967, 422 էջ:
2. «Ազատ օր» 1997-ի բացառիկ, Աթենք, 1997:
3. Գեօրգեան Կարօ, Ամէնուն տարեգիրքը, Դ տարի, Պէյրութ, 1957:
4. «Երկունք», Փիրեա, 1922, 17 Նոյեմբեր; 1923, 18 Յունուար:
5. Թեօդիկ, «Ամէնուն տարեցոյցը», Կ. Պոլիս, 1924:
6. Կիտուր Ա., Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962), Ա. հատոր, Պէյրութ, «Շիրակ» տպարան, 1962, 616 էջ:
7. Զոքիտու Փեթրոս, Յունահայ գաղութի պատմութիւնից (1918-1927), Երեւան, Հայկական ՍՍԴ ԳԱ հրատարակչութիւն, 1965, 264 էջ:
8. Հայ մամուլը Յունաստանի մէջ, Աթենք, Հրատարակչութիւն «Արմենիքա» պարբերաթերթի, 2007:
9. Հ.Յ.Ն. պատմութեան ԿԱ, փաստաթուղթ Ա-1080-3, Ա-1081-12, Ա-1081-15, Ա-1081-17, Ա-1084-5, Բ-1086-1, Բ-1087-21, Բ-1088-1, Բ-1088-3, Բ-1089-8, Բ-1089-12, Բ-1089-19, Բ-1089-21, Բ-1089-40, Բ-1090-1, Բ-1110-8, Բ-1110-13, թ. 1-2;

- Բ-1110-15, Բ-1110-16, Ե-1098-2, Ե-1098-3, Ե-1099-5, Ե-1099-6, Ե-1099-17, Ե-1099-34, Ե-1099-40, Ե-1100-25:

10. Մակարեան Ասատուր, «Յուշագիրք Թրակիոյ եւ Մակեդոնիոյ հայ գաղութներու», Թեսաղոնիկէ, տպագրութիւն «Հորիզոն» օրաթերթի, 1929, 640 էջ:

11. Միւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար, Ա. հատոր (Բ. տպագրութիւն), Պէյրութ, 1984; Ե. հատոր, Պէյրութ, 2007; Զ. հատոր, Պէյրութ, 2010; Է. հատոր, Պէյրութ, 2010; ԺԲ. հատոր, Պէյրութ, 2016:

12. «Նոր Ակիք», Թեսաղոնիկէ, 1924, 8 Յունուարի:

13. «Նոր Օր», Աթենք, 1924, 19 Ղեկտեմբերի:

14. Ստեփանեան Խ., Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գործունեութիւնը Պուլկարիայում (1894-1924 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիւների», Երեւան, ՀԱԱ հրատ., 2020, թիւ 2 (129), էջ 30-57:

15. Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, Ա. եւ Բ. հատորներու միացեալ հրատարակչութիւն, Պէյրութ, Համագգայինի «Վահէ Սէթեան» հրատարակչութիւն, 2013, 653 էջ:

16. Տէր Խաչատուրեան Ա., Հ. Յ. Դաշնակցութեան 100ամեայ մամուլը (1890-1990), Պէյրութ, Հ.Յ.Ն. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի Հրատարակչութիւն, 1990:

[1] Բանալի բառեր - Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, Հնչակեաններ, Յունաստան, արեւմտահայ ազատագրական պայքար, հայ գաղթականութիւն, Միացեալ Հայաստան:

[2] Պուլկարիոյ մէջ Հ.Յ.Ն. գործունեութեան առաջին 30 տարիներու համառոտ պատմութիւնը տե՛ս Ստեփանեան Խ., Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գործունեութիւնը Պուլկարիայում (1894-1924 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիւների», Երեւան, ՀԱԱ հրատ., 2020, թիւ 2 (129), էջ 30-57:

[3] Հնչակեան կուսակցութիւնը հիմնադրուած է 1887 թ. Ժընեւ հայ ուսանողներու կողմէ:

[4] Դաշնակցական ականաւոր գործիչ, գաղափարախօս եւ պատմաբան Միքայէլ Վարանդեան կը գրէ, որ Ժընեւէն եւ Լոնտոնէն յետոյ կենտրոնատեղին Աթենք տեղափոխելը Նոյնիսկ չօգնեց Հնչակեան կուսակցութեան (տե՛ս Վարանդեան Մ., Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, Ա. եւ Բ. հատորներու միացեալ հրատարակչութիւն, Պէյրութ, Համագգայինի «Վահէ Սէթեան» հրատարակչութիւն, 2013, էջ 72): Ան սկստի ունէր այն հանգամանքը, թէ հայկական կուսակցութիւնը պէտք է խոր արմատներ ձգէր բուն Հայաստանի մէջ եւ ղեկավարուէր Հայաստանէն:

[5] Կիտուր Ա., Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962), Ա. հատոր, Պէյրութ, «Շիրակ» տպարան, 1962, էջ 63:

[6] 1890-ականներու սկիզբին արդէն կազմաւորուած Հնչակեան կուսակցութեան եւ Հ.Յ.Ն. միաւորման կարգ մը բանակցութիւններ տեղի ունեցած են տարբեր վայրերու մէջ:

[7] Հ.Յ.Ն. պատմութեան կեդրոնական արխիւ (այսուհետեւ՝ ԿԱ), թղթածրար Ա-1080, փաստաթուղթ 3, թերթ 1-8:

[8] Հ.Յ.Ն. պատմութեան ԿԱ, թղթածրար Ա-1081, փաստաթուղթ 15, թերթ 1:

[9] Հ.Յ.Ն. պատմութեան ԿԱ, թղթածրար Ա-1081, փաստաթուղթ 17, թերթ 1:

[10] Խօսքը կը վերաբերի 1897 թ. Օգոստոս 14-ին Բաբլէն Սիւնիի գլխաւորութեամբ կատարուած Օտտոմանեան դրամատան «Պանք Օթոման»-ի գրաւման գործողութեան:

[11] Հ.Յ.Ն. պատմութեան ԿԱ, թղթածրար Ա-1081, փաստաթուղթ 12, թերթ 1:

[12] Հ.Յ.Ն. պատմութեան ԿԱ, թղթածրար Ա-1084, փաստաթուղթ 5, թերթ 1-4; թղթածրար Բ-1086, փաստաթուղթ

1, թերթ 1:

[13] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ա. հատոր (Բ. տպագրութիւն), Պէյրուս, 1984, էջ 88:

[14] Նոյն տեղ, էջ 93:

[15] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, փաստաթուղթ Բ-1087-21, թ. 1: Բ-1088-1, թ. 1, Բ-1088-3, թ. 1:

[16] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ա. հատոր (Բ. տպագրութիւն), էջ 91:

[17] Նոյն տեղ, էջ 91:

[18] Նոյն տեղ, 94:

[19] Նոյն տեղ, էջ 91:

[20] Չի շփոթել Սարհատ ծածկանունով անլի յայտնի Գեորգ Չաուշի հետ:

[21] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Բ-1089, փաստաթուղթ 8, թերթ 1-2:

[22] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ե. հատոր, Պէյրուս, 2010, էջ 21, 23:

[23] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Բ-1089, փաստաթուղթ 12, թերթ 1-2; թղթածրար Բ-1089, փաստաթուղթ 19, թերթ 1-4; թղթածրար Բ-1089, փաստաթուղթ 21, թերթ 1-2;

[24] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ե. հատոր, Պէյրուս, 2007, էջ 399:

[25] Նոյն տեղ, էջ 399-402:

[26] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ե. հատոր, էջ 32:

[27] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Զ. հատոր, Պէյրուս, 2010, էջ 168:

[28] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Բ-1089, փաստաթուղթ 40, թերթ 1-7, թղթածրար Բ-1090, փաստաթուղթ 1, թերթ 1-4; թղթածրար Բ-1110, փաստաթուղթ 8, թերթ 1-4:

[29] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ե. հատոր, էջ 236:

[30] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Բ-1110, փաստաթուղթ 13, թերթ 1-2; թղթածրար Բ-1110, փաստաթուղթ 15, թերթ 1-2, թղթածրար Բ-1110, փաստաթուղթ 16, թերթ 1-3;

[31] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ե. հատոր, էջ 236:

[32] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, ԺԲ. հատոր, Պէյրուս, 2016, էջ 93:

[33] Մակարեան Ա., Յուշագիրք Թրակիոյ եւ Մակեդոնիոյ հայ գաղութներու, Թեսաղոնիկէ, տպագրութիւն «**Հորիզոն**» օրաթերթի, 1929, էջ 502:

[34] Մակարեան Ա., Յուշագիրք Թրակիոյ եւ Մակեդոնիոյ հայ գաղութներու, Թեսաղոնիկէ, տպագրութիւն «**Հորիզոն**» օրաթերթի, 1929, էջ 503:

[35] Թէօդիկ, Ամենուն տարեցոյցը, Կ. Պոլիս, 1924, էջ 224:

[36] Նոյն տեղ, էջ 223:

[37] «**Երկունք**», Փիրեա, 1922, 17 Նոյեմբերի:

[38] Զոքիսու Փ., Յունահայ գաղութի պատմութիւնից (1918-1927), Երեւան, 1965, էջ 25-26:

[39] «**Նոր Այիք**», Թեսաղոնիկէ, 1924, 8 Յունուար:

[40] «**Երկունք**», Փիրեա, 1923, 18 Յունուար:

[41] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Ե-1098, փաստաթուղթ 2, թերթ 1:

[42] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Ե-1098, փաստաթուղթ 2, թերթ 2:

[43] Մակարեան Ա., Նշվ. աշխ., էջ 503:

[44] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Ե-1099, փաստաթուղթ 17, թերթ 1:

[45] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Ե-1100, փաստաթուղթ 25, թերթ 1:

[46] Յունաստանի առաջին հայերէն պարբերականը 1890 թ. Աթէնքի մէջ լոյս տեսած «**Ասպարէզ**» թերթն էր: 1892-1894 թթ. Աթէնքի մէջ լոյս տեսաւ Հնչակեաններու «**Հնչակ**» պաշտօնաթերթը:

1922 թուականին կը սկսի հրատարակուիլ Հնչակեաններու «**Երկունք**» (Փիրեա) պաշտօնաթերթը, որը, դժբախ-

տաբար, ընդամենը 7-8 ամիս լոյս կը տեսնէ:

[47] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Ե-1098, փաստաթուղթ 2, թերթ 3:

[48] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Ե-1099, փաստաթուղթ 5, թերթ 1:

[49] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Ե-1099, փաստաթուղթ 17, թերթ 2; Հայ մամուլը Յունաստանի մէջ, Աթէնք, Հրատարակութիւն «**Արմենիքա**» պարբերաթերթի, 2007, էջ 21:

[50] Տէր հաչատուրեան Ա., Հ. Յ. Դաշնակցութեան 100ամեայ մամուլը (1890-1990), Պէյրուս, Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի Հրատարակութիւն, 1990, էջ 22:

[51] Գեորգեան Կ., Ամենուն տարեգիրքը, Դ տարի, Պէյրուս, 1957, էջ 233:

[52] Նոյն տեղ, էջ 234-235:

[53] Մակարեան Ա., Նշվ. աշխ., էջ 196:

[54] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Ե-1099, փաստաթուղթ 6, թերթ 1:

[55] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Ե-1099, փաստաթուղթ 34, թերթ 1:

[56] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Ե-1099, փաստաթուղթ 34, թերթ 2:

[57] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Ե-1101, փաստաթուղթ 24, թերթ 3:

[58] Աբրահամեան Ա. Գ., Համառոտ ուրուագիծ հայ գաղթավայրերի պատմութեան, Կ. Բ, Երեւան, 1967, էջ 110:

[59] «**Նոր Օր**», Աթէնք, 1924, 19 Դեկտեմբեր:

[60] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Ե-1099, փաստաթուղթ 40, թերթ 3-4:

[61] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Ե-1098, փաստաթուղթ 3, թերթ 1:

[62] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Ե-1098, փաստաթուղթ 2, թերթ 1:

[63] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Ե-1101, փաստաթուղթ 24, թերթ 3:

[64] Գեորգեան Կ., Ամենուն տարեգիրքը, Դ տարի, Պէյրուս, 1957, էջ 226:

[65] Նոյն տեղ, էջ 227:

[66] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, փաստաթուղթ Ե-1098, փաստաթուղթ 2, թերթ 2:

[67] Զոքիսու Փ., Նշվ. աշխ., էջ 90:

[68] Գեորգեան Կ., Նշվ. աշխ., էջ 229:

[69] Աբրահամեան Ա. Գ., Նշվ. աշխ., էջ 125:

[70] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Ե-1099, փաստաթուղթ 17, թերթ 3-4:

[71] Հ.Յ.Դ. պատմութեան ԿԱ, թղթածրար Ե-1099, փաստաթուղթ 17, թերթ 3:

[72] 1924 թուականէն յետոյ Յունաստանի մէջ Հ.Յ.Դ. գործունէութեան եւ հայկական ազգային կուսակցութիւններու միջեւ փոխ յարաբերութիւններու պատմութեան մենք բազմակողմանի եւ քննական անդրադարձ կ'ունենանք մեր հետազայի ուսումնասիրութիւններուն մէջ:

[73] Թէօդիկ, Ամենուն տարեցոյցը, Կ. Պոլիս, 1924, էջ 226

[74] 1926 թուականին կը բացուի «**Հոփսիսիմեանց**» մանկապարտէզը: 1927 թուականին Հայ Կապոյտ հաշի նահանգներէն կը հիմնուի «**Չաւարեան**» ակումբ վարժարանը Գոքիսիոյ շրջանէն ներս: 1928-1929 ուսումնական տարուան ընթացքին «**Հոփսիսիմեանց**» մանկապարտէզը եւ «**Չաւարեան**» վարժարանը ունեին 260 աշակերտներ: Վարժարանի տնօրէնը Սօս Վանին էր:

1937 թուականին վարժարանը կը ճանչցուի Յունաստանի կառավարութեան կողմէ եւ վարժարանի շրջանաւարտները կարելիութիւնը կ'ունենան իրենց ուսումը շարունակելու: Յունաստանի պետական միջնակարգ վարժարաններու մէջ: Վարժարանը Երկրորդ աշխարհամարտի տարիներուն (1939-1945 թթ.) կը ստիպուի դադարեցնելու իր գործունէութիւնը (տես «**Ազատ օր**», Աթէնք, 1997, բացառիկ, էջ 27):



ԴԵՎԻ ՆՈՐՈԳՈՒԱԾ ԱԳԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՍԵԻՍԿ ՊԷԼԵՍ

Աւելի քան մէկ դարէ ի վեր, հայ ժողովուրդը տարագիր, վիրաւոր, բայց նպատակի գիտակցութեամբ կոփուած, առաջնորդուած է համայնական համոզումով մը, որ աշխարհի բոլոր հայերը պատասխանատուութիւն կը կրեն իրենց անհատական կամ տեղայնական մտահոգութիւններէն աւելի բարձր առաքելութեան մը ծառայելու: Այս համոզումը, որ ժամանակի ընթացքին մարմնաւորուած ու ամփոփուած է Հայ Դատի լուծման համար տարուող պայքարի հասկացողութեան մէջ, երկար տարիներու ընթացքին գործած է որպէս կազմակերպական այն կառոյցը, որուն շուրջ համախումբ ձեւաւորուած են՝ սփիւռքեան ինքնութիւնն ու քաղաքական գործունէութիւնը, մշակութային կեանքն ու ազգային գիտակցութիւնը: Սակայն այս փուլին, ամբողջ հայաշխարհը կը դիմագրաւէ շարք մը բեկումնային զարգացումներ, որոնք անհրաժեշտ կը դարձնեն լուրջ ինքնաքննութիւնն ու վերաբնութեւնը: Վերջին տարիներու քաղաքական, ռազմական ու հոգեբանական պարտութիւններուն պատճառով, յատկապէս՝ 2020-ի արցախեան պատերազմի արհաւիրքը, շարունակուող աշխարհաքաղաքական նահանջները եւ Հայաստանի ներկայ իշխանութիւններուն որդեգրած գաղափարական

ուղղութիւնը, ծնունդ տուած են անորոշութեան եւ ռազմավարական խտտորումի: Սփիւռքը, որ իր գոյութեան առաջին իսկ օրերէն անձայրածիր մարդկային եւ նիւթական ներդրում ունեցած է հայոց պետականութեան ստեղծման ու կայացման մէջ, այսօր կը կանգնի հիմնարար հարցադրումի մը դիմաց՝ ո՞ր ուղղութեամբ պետք է առաջնորդուի ազգի ապագան: Այս համեստ տողերուն նպատակն է՝ քննել այն պայմանները, որոնք ծնունդ տուած են այս փուլին, բացատրել անոնց հետեւանքները եւ փորձ մը կատարել սահմանելու այն սկզբունքները, որոնց վրայ կարելի է խարսխել Հայ Դատի վերափմաստաւորուած օրակարգային ընթացքը: Այս ճիգը նպատակ չի հետապնդեր զգացականութիւն վերարտադրել կամ անցեալը ներկայացնել իբրեւ իտեալական յղում մը: Ընդհակառակը, կը միտի պարզել այսօրուան դժուարութիւններուն արմատները եւ առաջարկել գաղափարական ու կազմակերպական ընդհանրական հասկացողութիւն մը՝ համազգային նպատակադրումը նորոգելու համար: Հայ Դատի գործունէութիւնը կարելի չէ սահմանափակել դիպուածային ու լոկ հակազդող աշխատանքներով կամ խորհրդանշական արտայայտութիւններով: Ան կը պահանջէ նորոգուած մտաւոր ճշգրտութիւն, աւելի խորքային եւ երկարաշունչ ռազմավարական

ծրագրաւորում, որ կարողանայ ըստ արժանւոյն պատասխանել մեր ժամանակի մարտահրաւերներուն:

Ժամանակակից սփիւռքագիտութիւնը կը շեշտէ, որ համայնքները կը դիմանան, ոչ միայն որովհետեւ կը պահպանեն հաւաքական յիշողութիւնը, այլ՝ յստակ առաքելութեան մը գիտակցութեամբ: Յեղասպանութենէն ետք, սփիւռքահայութիւնը նման առաքելութիւն մը սահմանեց. յիշել, բայց միեւնոյն ժամանակ նպաստել հայկական պետականութեան ապագայ վերականգնումին ու ամրապնդման: Այս նպատակադրումը տասնամեակներու ընթացքին կերտեց սփիւռքեան հաստատութիւններուն ինքնութիւնը. դպրոցներ, եկեղեցիներ, քաղաքական կազմակերպութիւններ (*թէկուզ՝ ոչ բոլորը*), բարեսիրական եւ մշակութային կառոյցներ, ինչպէս նաեւ միջազգային քարոզչական ցանցեր, որոնք կը գործէին հասարակական պարտաւորութեան եւ ազգային պատասխանատուութեան աներկբայ գիտակցութեամբ: Այս համակողմանի համակարգին մէջ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ունեցաւ եւ կը շարունակէ ունենալ առանձնայատուկ դեր: Դաշնակցական գաղափարախօսութիւնը միացուց ու ցարդ կը շարունակէ ամուր պահել ազգային բոլոր իտեալներն ու իդէները՝ պատրաստելով այն ամբողջական մտաւոր եւ կազմակերպական շրջանակը, որով սփիւռքահայերը կը մեկնաբանէին ու պիտի շարունակէն մեկնաբանել իրենց ինքնութիւնն ու պարտականութիւնները:

1991-ին Հայաստանի Հանրապետութեան անկախացումը եւ ապա առաջին արցախեան պատերազմի յաղթանակը աւելի ամրապնդեցին ու Նոր իմաստ հաղորդեցին այդ մեկնաբանութեան: Աւելի քան եօթանասուն տարուան պետականազրկութենէ ետք, հայկական պետականութիւնը գոյութիւն ունեցաւ իբրեւ անկախ քաղաքական միաւոր՝ ունակ ինքնիշխան կառավարման եւ իր բնակչութեան հաւաքական իրաւունքներու եւ կենսապայմաններու պաշտպանութեան: Այս պատմական իրողութիւնը կը վաւերացներ տասնամեակներու սփիւռքեան նուիրումով կատարուած աշխատանքը՝ Հայաստանը դարձնելով երբեմնի ցնորք համարուող երազանքներու իրականացումը: Արցախի յաղթանակը աւելի ամրացուց Սփիւռքի վստահութիւնը, որովհետեւ կը կենսաւորէր այն համոզումը, թէ համերաշխ եւ համակարգուած ազգային ձգտումները կրնան հիմնական դեր ունենալ պատմութեան ընթացքը փոխելու մէջ: Շատերու համար, Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնը աւելի քան կայուն ու փոխլրացուցիչ կը թուէին ըլլալ:


Սակայն վերջին տարիներուն, եւ յատկապէս՝ 2018-էն ետք, այս յարաբերութիւնը յայտնի ճեղքերու ենթարկուեցաւ: «Յեղափոխութեան» սուտ շղարշին տակ իրականացուած իշխանափոխութիւնը ծնունդ տուաւ մեծ ակնկալութիւններու՝ թափանցիկութեան, բարեկարգման եւ կառավարման արդիականացման: Թէեւ այս ձգտումները լայն ժողովրդականութիւն վայելեցին օրին, սակայն իշխանութեան որդեգրած մօտեցումները առաջին իսկ օրերէն ստեղծեցին խորքային գաղափարական ընդհանրացումներու խզում: Նախկին համակարգէրուն շրջանցումի փորձին մէջ, իշխանութիւնը սկսաւ

ծեակերպել հայ ինքնութեան եւ պետականութեան ծեակերպում մը, որ կը հակադրուէր երկար տարիներու ազգային պատմագրութեան ու ժողովրդական հասկացողութեան եւ մտածումին: Այս փոփոխութիւնը կը փորձէր՝ նուազեցնել պատմական շարունակականութեան արժէքը, թերագնահատել Հայաստանը կլանած աշխարհաքաղաքական բարդ իրականութիւնները եւ ներմուծել ազգային պետականութեան Նոր ծեակերպում մը, որ հեռու էր այն պատմական փորձառութիւններէն, որոնք ծեաւորած էին հայ քաղաքական մտածողութիւնը:

Բարեկարգումը՝ իր սկզբունքով, հակասութիւն չունի ազգային հասկացողութիւններու եւ սկզբունքներու շարունակականութեան պահպանման հետ: Բայց բարեկարգում մը, որ կը մերժէ ժառանգուած հիմքերն ու հասկացողութիւնները՝ առանց զանոնք փոխարինելու բովանդակալի եւ կշիռ ունեցող այլընտրանքներով, կ'առաջնորդէ հաստատութեանական եւ գաղափարական անորոշութեան: Քաղաքագիտական տեսութեանց մէջ այս երեւոյթները կը բնորոշուին որպէս «քաղաքական քայքայում» (*political decay*), երբ հաստատութիւնները աւելի արագ կը կորսնցնեն իրենց ուղղութիւնը, մինչ կարելի է ստեղծել օրինականութեան (*legitimacy*) Նոր աղբիւրներ: Հայաստանը 2020-ի պատերազմէն առաջ ու հետագայ տարիներուն ցոյց տուաւ այս երեւոյթին բնորոշ բազմաթիւ ներքին նշաններ. երկարամեայ ռազմավարական ուղղութիւններ յանկարծակի կերպով մերժուեցան՝ առանց յստակ փոխարինումի, հանրային ակնկալութիւնները ծեաւփոխուեցան՝ առանց ծրագրային տեսլականի, իսկ ազգային քաղաքականութիւնը ամբողջութեամբ սկսաւ վերափոխուիլ՝ առանց երկարաժամկետ, համակարգուած ուղղութեան մը: Այս բոլորը առաջնորդեցին աղէտաբեր սխալներու, որոնց զագաթնակէտը եղաւ 2020-ի արհաւիրքը եւ Արցախի քաղաքական ու վարչական գոյութեան ամբողջական կործանումը:

Այս տկարացման հետեւանքները չսահմանափակուեցան սակայն միայն Հայաստանով: Սփիւռքը, որ երկար տարիներ իր ինքնութիւնը կազմաւորած էր հայկական պետականութեան ամրապնդման նպաստելու շուրջ, այժմ կը գտնուի անորոշութեան մէջ՝ փորձելով սահմանել իր դերը, երբ Երեւանէն այլեւս չի բխիր համադրուած եւ յստակ ազգային տեսլական: Այս իրավիճակը բնականաբար պատճառ կը հանդիսանայ շփոթի, տատանումի եւ որոշ համայնքներու մէջ՝ նաեւ նահանջի եւ գործակցութեան դադրեցումի: Ամէնէն խորքային վտանգը նիւթողէն անկումը չէ, այլ՝ նպատակի մաշումն ու կորուստը: Առանց յստակ ծեակերպուած առաքելութեան մը՝ սփիւռքեան հաստատութիւնները ի վիճակի չեն պահպանելու այն բարձր ներգրաւուածութիւնը, որ պահանջուած է ազգային պահանջատիրութեան, մշակութային պահպանման եւ նպատակասլաց քաղաքականացման համար:

Այս պահը, սակայն, նաեւ առիթ մը կը ներկայացնէ: Ան կը պարտադրէ, որ Սփիւռքը առաւել յստակութեամբ ծեակերպէ իր պատասխանատուութիւնները՝ հիմնուելով ոչ թէ նախորդ տասնամեակներէն ժառանգուած ուղղութիւններուն, այլ՝ ներկայ աշխարհաքաղաքական իրականու-



**Ազգ մը, որ գիտակից է իր գերագոյն նպատակին,
կրնայ ելք գտնել ամենաբարդ պայմաններէն:
Իսկ ազգ մը, որ կը կորսնցնէ այդ նպատակը, վտանգի
տակ կը դնէ իր համախումբ կամ քի տոկունութիւնը:**

թիւներուն վրայ: Այս առումով, Դաշնակցութեան գաղափարական ժառանգութիւնը կը պահպանէ իր առանձնայատուկ արդիականութիւնը: Դաշնակցական միտքը ձեւաւորուած էր ճիշդ այն ժամանակներու համար, երբ ազգը կը դիմագրաւէր մասնատում, տեղաշարժ եւ անորոշութիւն: Անոր շեշտադրումները՝ ազգային ինքնիշխանութեան, քաղաքացիական պատասխանատուութեան, ժողովրդավարութեան եւ ընկերային արդարութեան, կը տրամադրեն համակողմանի գաղափարական ու կազմակերպական շրջանակ մը՝ իբրեւ ուղեցոյց մեր ժամանակի մարտահրաւերներուն դիմագրաման: Դաշնակցական գաղափարախօսութիւնը միայն պատմական աւանդ մը չէ, այլ՝ սկզբունքներու ամբողջութիւն մը, որ կրնայ ուղղութիւն տալ թէ՛ քաղաքական մտածումի, թէ՛ հաստատութեանական զարգացման ժամանակակից կարիքներուն:

Նորոգուած ազգային տեսլական մը պէտք է հիմնուի երկու փոխլրացուցիչ սկզբունքներու վրայ՝ իրատեսութիւն եւ իտեալ: Իրատեսութիւնը կը պահանջէ՝ ճշգրիտ գնահատում Հայաստանի անվտանգային միջավայրին, տարածաշրջանային ուժերու հաւասարակշռութեան, հայրենիքի ընկերատնտեսական զարգացման ներուժին, Սփիւռքի իմաստալից դերակատարութեան, ներկայ իշխանութեան աշխարհայեցողութեան լուրջ սահմանափակումներուն ու մանաւանդ անոնց գնայուն ըլլալու հանգամանքին: Ան կը պարտադրէ գիտակցիլ այն սպառնալիքներուն, որոնց դիմաց այսօր կը կանգնի Հայաստանը, այն կառուցուածքային թուլութիւնները, որոնք պէտք է հետեւողական կերպով ուղղուին, ինչպէս նաեւ՝ այն հաստատութիւններու անհրաժեշտութիւնը (*բանակէն անկախ*), որոնք ունակ են պաշտպանելու պետականութեան յարատեւութիւնը: Իտեալը՝ հասկցուած ոչ թէ իբրեւ միամտութիւն, այլ՝ իբրեւ սկզբունքային ձգտում, կը պահանջէ նուիրում մեր ժողովուրդի իրաւունք-

ներուն, Հայաստանի ինքնիշխանութեան ամրապնդում եւ երկարաշունչ ազգային տեսլականի շարունակութիւն, որ կը գերազանցէ առօրեայ քաղաքական շրջափոխերը: Այս երկու սկզբունքները հակադրական չեն: Ճիշդ համադրուած՝ անոնք կը դառնան ռազմավարական ծրագրաւորման եւ ազգային խաղաղ ու զարգացող գոյակցութեան ամուր եւ մնայուն հիմք:

Սփիւռքի համար այս սկզբունքները գործնական դարձնելը կը պահանջէ՝ հաստատութիւններու վերագիւնում, քաղաքական ու դիւանագիտական կարողականութեան խորացում, շարունակական ղեկավարութեան պատրաստութիւն եւ համակարգուած քարոզչական ռազմավարութիւններու մշակում: Ան կը պահանջէ ընկալել Հայաստանը ոչ թէ միայն իբրեւ յուզական խորհրդանիշ, այլ՝ իբրեւ բարդ քաղաքական իրականութիւն, որուն երկարատեւ կենսունակութիւնը կը պայմանաւորուի մասնագիտական կարողութեամբ, ներդրումով եւ կազմակերպուած գործակցութեամբ: Ան նաեւ կը պարտադրէ յստակ եւ հետեւողական ձեւով հաստատել, որ Սփիւռքի դերը այս կամ այն իշխանութեան ծառայել չէ, այլ՝ պաշտպանել հայ ժողովուրդի մշտնջենաւոր եւ կենսական շահերը:

Ազգ մը, որ գիտակից է իր գերագոյն նպատակին, կրնայ ելք գտնել ամենաբարդ պայմաններէն: Իսկ ազգ մը, որ կը կորսնցնէ այդ նպատակը, վտանգի տակ կը դնէ իր համախումբ կամ քի տոկունութիւնը: Հայութեան առաջ կանգնած է պարտականութիւն մը՝ վերագտնել այն գիտակցութիւնը, որ տարիներ շարունակ առաջնորդած էր իր համատեղ ճիգերը եւ այդ գիտակցութիւնը վերածել նորոգուած, համահունչ ու գործնական տեսլականի: Հայ Դատի ապագան կախեալ է այս ընթացքէն, եւ անոր իրականացման պայմանները տակաւին հասանելի են, եթէ անոր մօտենանք հաւասարակշռուած լրջութեամբ եւ աննահանջ համոզումով: *«Հորիզոն»*



Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացի նշանակությունն այդ յանցագործության հետևանքների յաղթահարման գործում

ԱՐՄԷՆ ՄԱՐՈՒՋԵԱՆ
Հայաստան, պ.գ.դ., պրոֆեսոր, ԳԱԱ ՊԻ

Պետությունների կողմից ցեղասպանության յանցագործության ճանաչումը ենթադրում է իշխանության երեք ճիւղերից որեւէ մէկի՝ օրէնսդիր, գործադիր կամ դատական մարմնի կողմից այդ յանցագործության փաստն արձանագրող որոշման, բանաձեւի, յայտարարութեան, օրէնքի կամ դատական ակտի ընդունում:

1915 թ. Մայիսի 24-ին Անտանտի տերութիւնների՝ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի կողմից ընդունուած համատեղ հռչակագիրը փաստօրէն Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացի սկիզբն ազդարարող առաջին պաշտօնական փաստաթուղթն է¹, որը յիշեալ երկրների գործադիր իշխանութիւնների կողմից միաժամանակ ընդունուած որոշում էր: 1918 թ. Նոյեմբեր-Դեկտեմբեր ամիսներին օսմանեան խորհրդարանի քննարկումների արդիւնքում ընդունուած հայերի զանգուածային բնաջնջման համար «իրաւական» հիմք հանդիսացած «Տեղահանութեան մասին» ժամանակաւոր օրէնքը չեղարկելու², հայերի կոտորածներին գնահատական տալուց խուսափող թուրքական Նոր կառավարութեանը վստահութեան քուէ տալու մերժման, պա-

տերազմի ժամանակ երիտթուրքական կառավարութեան կատարած յանցագործութիւնների, այդ թւում հայերի կոտորածների հետաքննութեամբ զբաղուող խորհրդարանական «Հինգերորդ յանձնախմբի» ստեղծման³ որոշումներով եւ 1919 թ. թուրքական ռազմական տրիբունալների կողմից երիտթուրքական կառավարութեան ղեկավարների նկատմամբ կայացուած վճիռներով⁴, ըստ էութեան, թուրքական պետութեան օրէնսդիր ու դատական մարմինները թէւ անուղղակիօրէն, բայց Նոյնպէս ճանաչեցին հայերի ցեղասպանութեան փաստը: Յաւօք, այս կարեւոր փաստերը պատշաճ ձեւով չեն օգտագործուած Թուրքիայի ժխտողականութեան դէմ մղուող տեղեկատուական պատերազմում ստիպելով, որ Նա սկսի արդարանալ, թէ ինչու է վարում Հայոց ցեղասպանութեան ժխտողական քաղաքականութիւն այն դէպքում, երբ թուրքական պետութեան օրէնսդիր ու դատական մարմինները դեռ 1918-1919 թթ. փաստացի ճանաչել են հայ ժողովրդի նկատմամբ իրագործուած այդ յանցագործութեան փաստը:


Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակի 50-րդ տարելիցից՝ 1965 թուականից մեկնարկեց հայ ժողովրդի նկատմամբ իրագործուած յանցագործութիւնը ճանաչելու ու դատապարտելու միջազգային գործընթացի Նոր փուլ, որը դրսեւորուեց

տարբեր պետությունների հիմնականում օրենսդիր մարմինների կամ դրանց պալատների կողմից ընդունված յայտարարությունների եւ բանաձեւերի միջոցով, որոնք, սակայն, պարտադիր չեն այդ երկրների գործադիր իշխանությունների համար: Ակնյայտ է, որ պետության արտաքին քաղաքականությունն իրականացում է գերազանցապես գործադիր իշխանության միջոցով, իսկ Հայոց ցեղասպանությունը խորհրդարանական բանաձեւերով ճանաչած երկրների իշխանության գործադիր մարմինները, որպես կանոն, այդ հարցի վերաբերեալ կամ խուսափում են դիրքորոշում յայտնել կամ նոյնիսկ օրենսդիր որոշմանը հակառակ տեսակետ են արտայայտում: Դժուար է ակնկալել, որ նման երկրները Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման ուղղությամբ կը ձեռնարկեն գործուն քայլեր: Իսկ Հայոց ցեղասպանության փաստը օրենքով ճանաչած երկրներում այդ որոշումը պարտադիր է դառնում նաեւ իշխանության գործադիր մարմնի համար եւ իր արտայայտությունն է գտնում նաեւ այդ երկրի արտաքին քաղաքականության մեջ:

Հայոց ցեղասպանությունը ճանաչած պետություններից դեռեւս միայն չորս երկրների խորհրդարաններն են այդ փաստն ամրագրել օրենքով՝ Ֆրանսիան՝ 2001 թ.⁵, Ուրուգվայը՝ 2004 թ.⁶, եւ Արգենտինան՝ 2004 թ. եւ 2007⁷ թ., Չիլին՝ 2024 թ.⁸: Շվեյցարիայի, Սլովակիայի, Յունաստանի ու Կիպրոսի խորհրդարաններն էլ բանաձեւերով ճանաչել ու դատապարտել են Հայոց ցեղասպանությունը, իսկ այնուհետեւ ընդունել օրենքներ, որոնցով իրենց երկրներում քրեականացրել են ցեղասպանությունների, այդ թւում՝ Հայոց ցեղասպանության ժխտումը⁹:

Բելգիայում եւ Շվեդիայում նոյնպես մարդկության դեմ կատարված յանցագործությունների եւ ցեղասպանությունների, այդ թւում՝ Հայոց ցեղասպանության, ժխտման համար 45 հազար եվրոյի տուգանքից մինչեւ մեկ տարուայ ազատազրկման պատասխանատուություն է սահմանված: Ֆրանսիայի խորհրդարանը երեք անգամ 2006 թ., 2012 թ. եւ 2016 թ. ընդունեց ցեղասպանությունների, այդ թւում՝ Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքներ, սակայն երկրի Սահմանադրական խորհուրդը դրանք հակասահմանադրական ճանաչեց¹⁰: Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացման օրենքների ընդունումը գործնականում դժուարեցնում է տուեալ երկրների տարածքում հայ ժողովրդի նկատմամբ իրագործված յանցագործության կասկածի տակ դնելը, քանզի ժխտողների համար քրեական պատասխանատուություն է նախատեսվում:

Միջկառավարական ու ոչ կառավարական միջազգային կազմակերպությունների ընդունած որոշումների հետ մեկտեղ տարբեր պետությունների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւերը հանդիսանում են հայ ժողովրդի նկատմամբ իրագործված այդ յանցագործության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացի հիմքը: Այս առումով չափազանց կարեւոր է, թե տարբեր պետությունների



օրենսդիր մարմինների ընդունած փաստաթղթերը Հայոց ցեղասպանության ճանաչումից ու դատապարտումից զատ ինչպիսի բովանդակություն են պարունակում: Տարբեր երկրների խորհրդարանների կողմից ընդունված փաստաթղթերում պատմական փաստերի ստույգ ներկայացումը, կատարված իրագործությունների ճշգրիտ գնահատականներն ու որակումները, ինչ խօսք, բարձրացնում են դրանց կշիռն ու նշանակությունը: Հակառակ պարագայում դրանք նմանում են հերթական ձեւական փաստաթղթերի, որոնք թեեւ քանակական առումով աւելացնում են Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրների թիւը, սակայն որակական տեսակետից չեն նպաստում այդ յանցագործության պատշաճ դատապարտմանը եւ առաւել եւս՝ հայ ժողովրդի խախտված իրաւունքների վերականգնմանը:

Խորհրդարանների ընդունած յայտարարություններում ու բանաձեւերում երբեմն կարելի է հանդիպել հայ ժողովրդի նկատմամբ իրագործված յանցագործության տարբեր որակումների, պատմական փաստերի ոչ ճշգրիտ գնահատականների, նկատում են նաեւ վիճելի ձեւակերպումներ եւ հակասական դատողություններ: Այդ հանգամանքից ելնելով, անհրաժեշտություն է առաջանում բովանդակային վերլուծության ենթարկել Հայոց ցեղասպանության ճանաչման խորհրդարանական փաստաթղթերը՝ վեր հանելով դրանց առաւելություններն ու թերությունները:

Քանի որ խօսքն այնպիսի ծանր միջազգային քրեական յանցագործության մասին է, ինչպիսին ցեղասպանությունն է, ապա չափազանց կարեւոր է, որ ճանաչման փաստաթղթերում յստակեցնուած



լինեն այդ յանցագործության յանցակազմի տարրերը՝ օբյեկտը, օբյեկտի կողմը, սուբյեկտը եւ սուբյեկտի կողմը: Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող իւրաքանչիւր փաստաթղթի արժէքն ու նշանակութիւնը պարզ է դառնում հետեւեալ հարցերին տրուած պատասխանների առկայութիւնից կամ բացակայութիւնից՝ ո՛վ է յանցագործութեան գործը, ի՞նչ բնոյթի յանցագործութիւն է կատարուել եւ ի՞նչ հետեւանքներ է այն ունեցել տուժող կողմի վրայ, ո՛ւմ կողմից է իրականացուել յանցագործութիւնը եւ ի՞նչ շարժառիթներով ու նպատակներով է առաջնորդուել յանցագործութիւն կատարողը:

Խորհրդարանական փաստաթղթերը գնահատելիս նաեւ ուշադրութեան պէտք է դարձնել, թէ արդե՞օք անդրադարձ է կատարուում Հայոց ցեղասպանութեան այնպիսի փաստական հանգամանքներին, ինչպիսիք են՝ յանցագործութեան կատարման վայրը, ժամանակը եւ գոհերի թիւը: Այս տեսակէտից նախելառաջ կարելոր է այն փաստի ամրագրումը, որ ցեղասպանութիւնն իրագործուել է հայ ժողովրդի հայրենիքում՝ Արեւմտեան Հայաստանում, ինչի հետեւանքով հայերը զրկուել են իրենց բնօրրանի մեծագոյն մասից: Հայոց ցեղասպանութեան իրագործման ժամանակահատուածի յստակեցումը կարելոր է այնքանով, որ այդ յանցագործութեան իրագործման ժամանակը չսահմանափակուի միայն խորհրդանշական 1915 թուականով: Ինչ խօսք, 1915 թ. հայերի բնաջնջման քաղաքականութիւնը հասաւ իր գագաթնակէտին, սակայն դա բնաւ չի նշանակում, որ այդ թուականին է յանցագործութիւնը սկսուել կամ ավարտուել: Յանցագործութեան կատարման ժամանակը սահմանափակելով 1915 թ.-ով յանիրաւի նուազեցում են յանցագործութեան ծաւալները, իսկ Հայոց ցեղասպանութիւնը դիտարկուում է լոկ Առաջին աշ-

խարհամարտի իրադարձութիւնների հոլովոյթում: Այդպիսով, թուրքական իշխանութիւնների պատասխանատուութեան հարցը առնուազն տարալուծուում է, եթէ ոչ՝ արդարացում պատերազմական հանգամանքներով: Հայոց ցեղասպանութեան իրագործման ժամկէտը 1915 թուականով կամ Առաջին աշխարհամարտի տարիներով չսահմանափակելով ամրագրում է այն իրողութիւնը, որ XIX դարի վերջին տեղի ունեցած համիդեան կոտորածները եղել են այդ յանցագործութեան սկզբնաւորումը եւ 1918-1923 թթ. այն շարունակուել է նաեւ երիտթուրքերին փոխարինած քեմալական վարչակարգի կողմից:

Հայոց ցեղասպանութեան ճանաչման փաստաթղթերում գոհերի թիւին անդրադառնալու պարագայում չափազանց կարելոր է, որ նշուի համընդհանուր ընդունելութիւն ստացած 1.5 միլիոն թիւը: Այս հանգամանքը կարելոր է այնքանով, որ գոհերի այլ թիւ նշելով եւ այդ հարցում խառնաշփոթ առաջացնելով, պարարտ հող չստեղծուի պատմութեան կեղծարարների ու Հայոց ցեղասպանութեան ժխտողների համար:

Յանցագործութեան փաստական հանգամանքների յստակեցումից բացի, խորհրդարանական փաստաթղթերը պէտք է գնահատուեն նաեւ Հայոց ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման հարցադրումների պատասխանների տեսանկիւնից: Ցեղասպանութեան զոհ դարձած հայ ժողովրդի ժառանգներին իւրաքանչիւր ընդունուած բանաձեւում հետաքրքրում են հետեւեալ հարցադրումների պատասխանները՝ արդե՞օք Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող պետութիւնը բաւարարում է միայն ճանաչումով, թե՛ նաեւ դատապարտում է այդ յանցագործութիւնը եւ թուրքական իշխանութիւնների ժխտողական քաղաքականու-

թիւնը, արդեօ՞ք կոչ է արւում Թուրքիային՝ որպէս Օսմանեան կայսրութեան ինքնութիւնը շարունակող պետութեան, ճանաչել այդ յանցագործութիւնը եւ առերեսուել սեփական պատմութեան սեւ Էջերին եւ արդեօ՞ք ընդունում է հայ ժողովրդի խախտուած իրաւունքների վերականգնման, այսինքն՝ Հայոց ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման անհրաժեշտութիւնը:

Հայոց ցեղասպանութեան փաստական հանգամանքների յստակեցման տեսակետից կարելոր է խորհրդարանական բանաձեւերում յանցագործութիւնն իրագործած սուբյեկտների յիշատակումը: Փաստաթղթերից շատերում նշւում է, որ յանցագործութիւնն իրագործուել է Օսմանեան կայսրութեան կամ օսմանեան կառավարութեան կողմից (*Լիբանան, Գանատա, Բելգիա, Սլովակիա, Չիլի, Բոլիվիա*): Որոշ պետութիւնների խորհրդարանների բանաձեւերում էլ որպէս յանցագործութեան սուբյեկտ մատնանշւում են ոչ թէ թուրքական պետութեանը, այլ երիտթուրքական վարչակարգը կամ «**Միութիւն եւ առաջադիմութիւն**» կուսակցութիւնը (*Գերմանիա, Վենեզուէլա*):

Թէեւ հայերի զանգուածային բնաջնջման քաղաքականութեան «**ցեղասպանութիւն**» որակումով այդ յանցագործութեան կանխամտածուած բնոյթն արդէն իսկ ենթադրւում է, այդուհանդերձ, որոշ երկրների օրէնսդիր մարմինների ընդունած փաստաթղթերում լրացուցիչ ձեւով ընդգծւում է հայերի դէմ կատարուած յանցագործութեան նախապէս ծրագրւած եւ ազգայնամոլ գաղափարախօսութեան՝ պանթուրքիզմի հիման վրայ կատարուած լինելու հանգամանքը (*Արգենտինա, Շվեյցարիա, Շվեդիա, Բոլիվիա*):

խորհրդարանների փաստաթղթերում յանցագործութեան կատարման վայրին (արեալին) անդրադառնալիս գործածւում են տարբեր աշխարհագրական եզրոյթներ: Հիմնականում նշւում է, որ Հայոց ցեղասպանութիւնն իրագործուել է Օսմանեան կայսրութիւնում (*Շվեյցարիա, Շվեդիա, Լիտվա, Իտալիա, Վենեզուէլա, Աստրիա, Լիքստենբուրգ*): Որոշ երկրների խորհրդարանների բանաձեւերում որպէս հայերի ցեղասպանութեան իրագործման տարածք նշւում է «**Անատոլիան**» (*Գանատա, Գերմանիա, Բոլիվիա, Դանիա*): Նման ձեւակերպումների կողքին հանդիպում են այլ պետութիւնների խորհրդարանների ընդունած փաստաթղթեր, որոնցում հայոց ցեղասպանութեան իրագործման տարածք է նշւում «**Արեւմտեան Հայաստանը**» կամ «**Հայաստանը**» (*Հայաստան, Ռուսաստան, Սլովակիա, Չիլի*):

Որպէս յանցագործութեան կատարման ժամկետ խորհրդարանական բանաձեւերում հիմնականում նշւում է Հայոց ցեղասպանութեան խորհրդանշական տարեթիւը՝ 1915 թ.: Որոշ երկրների խորհրդարանների ընդունած փաստաթղթերում էլ յանցագործութեան կատարման ժամկետի մասին յիշատակումն առհասարակ բացակայում է եւ միայն Ապրիլի 24-ն է նշւում որպէս Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր (*Իտալիա, Վենեսուէլա, Յունաստան*): Կան պետութիւններ, որոնց օրէնսդիր մարմինների ընդունած փաս-

տաթղթերում Հայոց ցեղասպանութեան իրագործման ժամկետը սահմանափակւում է Առաջին աշխարհամարտի տարիներով (*Շվեյցարիա, Լեհաստան, Աստրիա*): Միայն Լիբանանի, Արգենտինայի, Չիլիի եւ Սլովակիայի խորհրդարանների ընդունած փաստաթղթերում է նշուած 1915-1923 թթ., իսկ Ռուսաստանի Պետդումայի 1915 թ. Ապրիլի 14-ի բանաձեւում 1915-1922 թթ.¹¹:

Փաստաթղթերում անդրադարձ է կատարուել նաեւ ցեղասպանութեան զոհ դարձած հայ ժողովրդի վրայ այդ յանցագործութեան ունեցած հետեւանքներին: Գրեթէ բոլոր բանաձեւերում ցեղասպանութեան իրագործումով զոհուած հայերի թիւը նշւում է մէկ ու կէս միլիոն: Մի քանի երկրների խորհրդարանական փաստաթղթերում ընդգծւում է, որ ցեղասպանութեան իրագործմամբ հայերը զրկուեցին իրենց նախնիների հողերից, հայրենիքից, ինչպէս նաեւ ունեցուծքից (*Կիպրոս, Արգենտինա, Գանատա*): Յատկանշական է, որ որոշ երկրների խորհրդարաններ իրենց ընդունած բանաձեւերում ոչ միայն ընդունել են ցեղասպանութեան իրագործմամբ հայ ժողովրդի խախտուած իրաւունքների վերականգնման անհրաժեշտութիւնը, այլեւ սատարել են հայ ժողովրդին այդ իրաւունքների վրականգնման պայքարում (*Կիպրոս, Արգենտինա, Վենեզուէլա, Չիլի, Բոլիվիա*):

Եւրամիութեան անդամ որոշ պետութիւնների խորհրդարանների ընդունած բանաձեւերում Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանութեան փաստի ճանաչման անհրաժեշտութիւնը դիտարկւում է Եւրամիութեանը Թուրքիայի անդամակցելու հարցի համատեքստում (*Իտալիա, Շվեդիա, Նիդերլանդներ*): Որոշ երկրների խորհրդարաններ էլ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչումը դիտարկւում է հայ-թուրքական յարաբերութիւնների հաստատման ու զարգացման համատեքստում (*Բելգիա, Շվեյցարիա, Գերմանիա, Նիդերլանդներ*): Դրանից ելնելով, եւրոպական մի շարք երկրների խորհրդարաններն իրենց բանաձեւերն աւարտում են Հայոց ցեղասպանութիւնը ճանաչելու Թուրքիային ուղղուած կոչերով (*Բելգիա, Շվեդիա, Իտալիա, Նիդերլանդներ, Լիտվա, Աստրիա, Լիքստենբուրգ*): Որոշ երկրների խորհրդարանների ընդունած փաստաթղթերում դատապարտւում է Թուրքիայի ժխտողական քաղաքականութիւնը եւ պատմական փաստերի նենգափոխման գործելաճոճը, ընդգծելով, որ դա կարող է յանգեցնել նման յանցագործութիւնների կրկնութեանը (*Արգենտինա, Գանատա, Շվեյցարիա, Գերմանիա, Սլովակիա, Բոլիվիա, Դանիա*):

Պետութիւնների օրէնսդիր մարմինների Հայոց ցեղասպանութեան ճանաչման փաստաթղթերը պայմանականօրէն կարելի է բաժանել պաշտօնական եւ ոչ պաշտօնական ճանաչումների:

Հայոց ցեղասպանութիւնը խորհրդարանական մակարդակով ոչ պաշտօնապէս ճանաչած պետութիւններ են այն երկրները, որոնց օրէնսդիր մարմիններում հայ ժողովրդի նկատմամբ իրագործուած յանցագործութեան ճանաչման գործընթացը ընթացակարգային կամ բովանդակային տեսակետից աւարտին չեն հասցուել: Ընթացակարգային տեսակետից Հայոց ցեղասպանութեան



ճանաչումն աւարտին չհասցրած պետութիւնները երկպալատ օրէնսդիր մարմնով երկրներն են, որոնց խորհրդարանների պալատներից միայն մէկն է համապատասխան փաստաթուղթ ընդունել: Այս առումով Հայոց ցեղասպանութեան ճանաչումն աւարտին չեն հասցրել Հարաւային եւ Հիւսիսային Ամերիկայի երկպալատ օրէնսդիր մարմնով պետութիւններից Բրազիլիան, Պարագվայը եւ Մեքսիկան, իսկ եւրոպական երկրներից՝ Չեխիան: Բովանդակային տեսակէտից Հայոց ցեղասպանութեան ճանաչումն աւարտին չհասցրած պետութիւններից է Բուլղարիան, որի խորհրդարանը թէեւ ընդունել է համապատասխան բանաձեւ, սակայն հայերի զանգուածային բնաջնջման քաղաքականութիւնը «ցեղասպանութիւն» չի որակել¹²:

Խորհրդարանական մակարդակով Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման գործընթացի ուսումնասիրութեան արդիւնքում կարող ենք արձանագրել, որ հայ ժողովրդի նկատմամբ իրագործուած յանցագործութիւնը պաշտօնապէս ճանաչուել է 28 (Ուրուգվայ, Կիպրոս, Արգենտինա, Հայաստան, Ռուսաստան, Գանատա, Յունաստան, Լիբանան, Բելգիա, Ֆրանսիա, Շվեդիա, Վատիկան, Իտալիա, Շվեյցարիա, Սլովակիա, Նիդերլանդներ, Լեհաստան, Գերմանիա, Վենեզուելա, Լիտվա, Չիլի, Բոլիվիա, Աստորիա, Լիքսենբուրգ, Դանիա, Ա.Մ.Ն., Սիրիա, Լատվիա), իսկ ոչ պաշտօնապէս՝ 5 (Բրազիլիա, Պարագվայ, Չեխիա, Բուլղարիա, Մեքսիկա) պետութիւնների կողմից:

Այսպիսով, Հայոց ցեղասպանութեան խորհրդարանական ճանաչման աշխարհագրութիւնը հիմնականում սահմանափակուած է Եւրոպայի, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկայի պետութիւններով: Ասիայում Հայոց ցեղասպանութիւնը ճանաչուել է միայն Լիբանանի եւ Սիրիայի կողմից: Խորհրդարանական մակարդակով Հայոց ցեղասպանութեան

ճանաչման աշխարհագրութիւնը որոշակի ազդեցութիւն է ունենում նաեւ տարբեր պետութիւնների խորհրդարանների ընդունած բանաձեւերի բովանդակութեան վրայ:

Եւրոպական երկրները, աշխարհագրորէն աւելի մօտ գտնուելով Թուրքիային, սերտօրէն համագործակցում են վերջինիս հետ ամբարտաւանական ու ռազմաքաղաքական ոլորտներում, ուստի Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող այդ պետութիւնների խորհրդարանների բանաձեւերում նկատելի են անորոշ ձեւակերպումներն ու փաստերի զգուշաւոր ներկայացումը:

Ի տարբերութիւն եւրոպական երկրների՝ Հարաւային Ամերիկայի պետութիւնները սերտ յարաբերութիւններ չունեն Թուրքիայի հետ, կաշկանդուած չեն այդ երկրի հետ համագործակցութիւնը վտանգելու հարցում, ուստի այդ երկրների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւերում յանցագործութեան փաստական հանգամանքները ներկայացուած են աւելի յստակ, իսկ որակումներն ու ձեւակերպումներն անաչառ են եւ օբյեկտիւ:

Այս լոյսի ներքոյ միանգամայն բնական պէտք է համարել, որ Հայոց ցեղասպանութեան ճանաչման ու դատապարտման յայտարարութիւն կամ բանաձեւ ընդունելիս ցանկացած պետութիւն, այդ թումբ՝ Հայաստանին բարեկամ երկրները, նման քաղաքական որոշումներ կայացնելիս նախեառաջ առաջնորդուած են իրենց ազգային-պետական շահերով եւ յետոյ միայն ձգտում ընդառաջել հայկական համայնքի եւ հայ ժողովրդի ձգտումներին:

Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացում կարելոր է ուրոյն նշանակութիւն ունեն նաեւ միջազգային կազմակերպութիւնների կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրագործուած այդ յանցագործութեան շուրջ ծաւա-

լուծ քննարկումները եւ կայացրած որոշումները: Անշուշտ, առաջին հերթին կարեւորութիւն են ներկայացնում միջազգային միջկառավարական կազմակերպութիւններում, մասնաւորապէս Ազգերի լիգայում Հայաստանի մանդատի, անդամակցութեան ու Հայկական հարցի շուրջ ծաւալուած քննարկումներն ու դրանց արդիւնքում ընդունուած բանաձեւերը¹³, Մ.Ա.Կ.-ի Մարդու իրաւունքների յանձնաժողովի հտրականութեան կանխարգելման եւ փոքրամասնութիւնների պաշտպանութեան եւթայանձնաժողովում ընդունուած երկու զեկոյցներում Հայոց ցեղասպանութեան մասին յիշատակում պարունակող պարբերութիւնների արձանագրումը¹⁴, Եւրախորհրդարանի կողմից «**Հայկական հարցի քաղաքական լուծման մասին**» բանաձեւի¹⁵ ընդունումը:

Հարկ է նշել, որ ի տարբերութիւն միջազգային միջկառավարական կազմակերպութիւնների, Հայոց ցեղասպանութիւնը ճանաչած ու դատապարտած միջազգային ոչ կառավարական կազմակերպութիւններն իրենց որոշումներում աւելի անկաշկանդ են եւ նրանց գնահատականները պայմանաւորուած չեն այս կամ այն երկրների շահերով ու միջպետական յարաբերութիւններով: Ու թէեւ ոչ կառավարական կառոյցների կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչման ու դատապարտման բանաձեւերը իրաւական տեսակետից հայեցողական են, այդուհանդերձ, դրանք կարեւոր նշանակութիւն ունեն հայանպաստ միջազգային հասարակական կարծիքի ձեւաւորման առումով եւ նոյնպէս նպաստում են Հայոց ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման գործընթացին:


Միջազգային ոչ կառավարական կառոյցներից Հայոց ցեղասպանութիւնը ճանաչել ու դատապարտել են այնպիսի կազմակերպութիւններ, ինչպիսիք են՝ հաղադրութեան կողմնակիցների համաշխարհային կոնգրեսը (1965 թ.), *Եկեղեցիների Համաշխարհային հորհուրդը*¹⁶ (1983, 1989 թ.), Ժողովուրդների մշտական տրիբունալը¹⁷ (1984 թ.), Տեղասպանագետների միջազգային ասոցիացիան¹⁸ (1997, 2005, 2007 թ.), Երիտասարդների քրիստոնէական ասոցիացիան (2002 թ.), Նոբելեան մրցանակակիրների կազմակերպութիւնը (2007 թ.) եւ այլն:

Ամփոփելով տարբեր երկրների խորհրդարանների եւ միջազգային կազմակերպութիւնների կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչման ու դատապարտման որոշումների վերլուծութիւնը, կարող ենք արձանագրել, որ թէեւ դրանք չեն յանգեցնում Թուրքիայի կողմից այդ յանցագործութեան ճանաչման վերահաստատմանը, այդուհանդերձ, այդ կերպ ոչ միայն բարոյական եւ քաղաքական ճնշում է գործադրում թուրքական իշխանութիւնների վրայ՝ սահմանափակելով նրանց ժխտողական քաղաքականութեան հնարաւորութիւնները, այլեւ իրաւաքաղաքական հիմքեր են նախապատրաստում Հայոց ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման ուղղութեամբ քայլեր ձեռնարկելու համար: Թերեւս այս գիտակցութիւնից ելնելով է, որ թուրքական իշխանութիւնները մեծ ջանքեր են գործադրում ամէն մի նոր երկրի կողմից խորհրդարանական մակարդակով Հայոց ցեղասպանութեան ճանաչումը կանխելու համար:

1. St'u Международные отношения в эпоху империализма, Документы из архивов Царского и Временного правительства. 1914–1917, 14 января – 23 мая 1915, подготов. Ф. О. Нотович и др., серия III, т. 7, ч. 2, 1935, с. 252.
2. St'u Տատրեան Վ., Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, Ուտորթաուն, 1995, էջ 19:
3. St'u Kévorkian R., «La Turquie face à ses responsabilités. Le process des criminels Jeunes-Turcs (1918-1920)», «Revue d'histoire de la Shoah», janveir-août, 2003, pp. 425-435.
4. St'u Հայերի ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Ա. Ն. Փափագեանի, Եր., ՀՍՍՀ ՊԱ հրատ., 1988, էջ 126:
5. St'u Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. сост., отв. редактор, автор предисловия и комментария д.и.н., профессор Ю. Г. Барсегов, изд. «Гардарика», т. 2, ч. 1, М., 2003, с. 818.
6. St'u The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, Documents & Declarations compiled and with an introduction by H. Sassounian, Glendale, 2015, p. 73.
7. St'u Argentina Law, http://www.armenian-genocide.org/Affirmation-374/current-t_category.7/affirmation_detail.html
8. St'u Chile Law https://www.armenian-genocide.org/Affirmation.959/current_ca-tegory.7/affirmation_detail.html
9. St'u Մարութեան Ա., Հայոց ցեղասպանութեան հիմնահարցը համաշխարհային քաղաքականութեան ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ յարաբերութիւնների համատեքստում, Եր., «Տիր» հրատ., 2015, էջ 189:
10. St'u Մարութեան Ա., Պատմութիւն եւ իրաւունք, Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրէականացնելու դեմ ուղղուած Պիեռ Նորայի փաստարկները, «Վեմ» համահայկական հանդէս, 2013, 2(42), էջ 10-31:
11. St'u Заявление Государственной Думы Федерального Собрания Российской Федерации «Об осуждении Геноцида армянского народа в 1915-1922 годах» от 14 апреля 1995 года, Собрание законодательств РФ, М., 1995, N 17, с. 1497.
12. St'u The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 40.
13. St'u Барсегов Ю., Армянский вопрос в Лиге наций, «Вестник Армянского института международного права и политологии в Москве», N 2, М., 2004, с. 155-206, տե՛ս նաև Махмурия Г. Г., Лига наций, Армянский вопрос и Республика Армения, Ер., НАН РА ИИ, 1999, с. 133.
14. St'u Մարութեան Ա., Ջանքեր՝ Մ.Ա.Կ.-ի 30-րդ պարբերութեան վերահաստատման ուղղութեամբ, «Հայկագեան հայագիտական հանդէս», հատոր ԼԲ, Պէյրութ, 2012, էջ 432:
15. St'u European Parliament Resolution on a political solution to the Armenian question, Doc. A2-33/87, http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag-/pcc_meeting/resolutions/1987_07_20.pdf
16. St'u Գասպար Ա., Հայ ազատագրական պայքարն ու ահաբեկչութիւնը, Լոս Անճելըս, «Նավասարդ», 1989, էջ 144:
17. St'u Միջազգային հանրութիւնը դատապարտում է Հայոց ցեղասպանութիւնը, կազմող եւ ներածականի հեղինակ Լ. Ա. Բարսեղեան, Եր., 1999, էջ 5-7:
18. St'u Յովհաննիսեան Ն., Արմենոցիդը ճանաչուած ցեղասպանութիւն է, Եր., «Չանգակ - 97», 2010, էջ 223:

Հ.Յ.Դ. Հայ Դատի Յանձնախումբի կազմութեան առաջին տարիները եւ հիմնական աշխատանքներ

Հ.Յ.Դ. Հայ Դատի Յանձնախումբի կազմաւորման աշխատանքը, գէթ այդ ձեւով որ մեզի ծանօթ է ներկայիս կրնայ սկսած ըլլալ 60ական թուականներուն, սակայն Հայ Դատի պահանջատիրութեան աշխատանքի անհրաժեշտութիւնը մեր ժողովուրդի գիտակցութեան մէջ կանուխէն զարգացած է: Ընտանիքներուն մէջ պատմական փաստերու ներկայացումով, վարժարաններուն մէջ հայոց պատմութեան դասերով, հայերէն լեզուի պահպանման ու զարգացման անհրաժեշտութեան գիտակցութեամբ, հայոց եկեղեցոյ ազգային դերակատարութեամբ եւ մանաւանդ Հ.Յ.Դ. կառոյցի կազմակերպական ու հեռանկարային ծրագրումներով:



Հայ Դատի աշխատանքին ու պահանջատիրութեան քաղաքական բնոյթ տալու պահանջը ձեւաւորուած է Հայոց Տեղասպանութեան 50ամեակի՝ 1965 թուականի Նշումին առիթով, երբ աշխարհով մէկ տրուեցաւ հայ

ազգի պահանջատիրութեան շեշտադրումի ազդանշանը: Յունաստանի Հ.Յ.Դ. Հայ Դատի Յանձնախումբի կազմաւորումը այս ծիրէն ներս զարգացաւ, երախտաւորներու մեծ փառանգ մը ձեւաւորելով: Հիմնադիր անդամներու շարքին էին ընկերներ **Գեղամ Եղոնեան եւ Թագուր Յովակիմեան**, որոնց հետ զրոյց մը ունեցանք իրենց գործունեութեան կարեւոր հանգրուաններուն շուրջ: Իրենց խօսքերուն ընդմէջէն ընդգծելի կը դառնան գաղթական դարձած հայութեան գոյատեման եւ ինքնահաստատման առաջին տարիները, ապա քաղաքական հաստատում եւ պահանջատիրական պայքարի հասունացման հանգրուանային փուլը:

- Ընկեր Գեղամ, ինչպէ՞ս կը նկարագրէք առաջին տարիներու գործունեութիւնը եւ հիմնական հանգրուանները:

Օսմանեան տարածքին մէջ հայ ժողովուրդի կրած արհաւիրքէն՝ շարդերէն ու տեղահանութիւններէն ետք, հայերը սփռուեցան ամբողջ աշխարհով մէկ: Պարտաւոր եմ ըսելու, որ այն երկիրը, որ կրնար մեզ չընդունի, Յունաստանն էր, որովհետեւ նոյն ժամանակաշրջանին յոյները կրած էին Չմիւռնիոյ աղետը եւ Յունաստանը ողողուած էր յոյն գաղթականներով: Այդուհանդերձ, մեզ ընդունեցին եւ այսպիսով կրցանք նոր հայրենիք մը գտնել: Այս պատճառով ալ հայերը մեծ երախտագիտութիւն ու յարգանք ունին յոյներուն եւ Յունաստանի հանդէպ, ուր մեզ հիւրընկալեցին առանց որեւէ խտրականութեան: Մենք յոյն գաղթականներուն հետ միասին ապրեցանք, նոյն դժուարութիւնները դիմագրաւելով, ապա տարիներու ընթացքին կրցանք տեղաւորուիլ, հիմնեցինք կազմակերպութիւններ եւ հաստատութիւններ, բայց մեզ միշտ կը տանջէր այն իրողութիւնը, որ ամբողջ ժողովուրդ մը վտարուած էր իր հողերէն: Այսպէս սկսաւ մեծ արշաւ մը եւ Սփիւռքի բոլոր գաղութները սկսան կազմակերպուիլ: Աշխարհով մէկ տարածուած հալածեալ հայերը անմիջապէս եւ մեծ դժուարութիւններով սկսան

ստեղծել հայկական թաղամասերը, ուր կեդրոնացաւ բնակչութեան մեծամասնութիւնը: Այս թաղամասերուն մէջ հիմնուեցան դպրոցներ եւ եկեղեցիներ, որպէսզի կարենանք ըլլալ հայկական միջավայրի մէջ, երեխաները կարողանան պահել հայ մշակոյթը, մինչ իրենց ծնողներուն հետ միասին կը պայքարէին դժուար պայմաններու մէջ գոյատեւելու համար: Մեր յաջորդ մտածումն էր ստեղծել խմբակներ, որոնք պիտի համադրէին երեխաներուն կրթութիւնը եւ կազմակերպութիւններուն վարչական գործերը՝ հայկական ինքնութիւնը պահպանելու համար: Ասիկա առաջին փուլն էր: Հետագային մեծ կարեւորութիւն տրուեցաւ դպրոցներուն, ուր երեխաները կը սորվէին հայերէն լեզուն, միաժամանակ կը պատրաստուէին յունարէն լեզուի եւ պատմութեան մէջ: Չուզահեռ նպատակ էր արտադպրոցական գործունեութիւնը՝ մարզական եւ մշակութային միութիւններով, եւ անշուշտ մեր բարեսիրական միութեան գործունեութիւնը, որ մեծ ընկերային ծառայութիւններ կը մատուցէր: Իբրեւ ժողովուրդ՝ ստեղծագործ ենք եւ աշխատասէր: Այսպէս շարունակեցինք մեր համայնքին կազմակերպումը: Յաջորդ քայլը պահանջատիրութիւնն էր: Պէտք էր ստեղծել մարմին մը, որ պիտի ներկայացնէր պատմական իրականութիւնը եւ արդարութիւն պիտի պահանջէր հայ ժողովուրդին համար՝ լոյսին



Հայ Դատի Յանձնախումբի այս բոլոր ճիգերուն մէջ լուրջ մասնակցութիւն ունեցան մեր բոլոր հայրենակիցները, իւրաքանչիւրը իր կարողութիւններով եւ ծանօթութիւններով, համախմբելով մեր ընդհանուր կարողականութիւնը՝ հասնելու համար մեր նպատակներուն ու ջանքերուն, որոնք մինչեւ այսօր կը շարունակենք:

բերելով Թուրքիոյ կողմէ մեր կրած բոլոր վայրագութիւններն ու մեր հայրենական հողերու եւ մշակոյթի կործանումը: Այսպէս սկիզբ առաւ Հ.Յ.Դ. Հայ Դատի Յանձնախումբը (*Αρμενική Εθνική Επιτροπή Ελλάδος*), Յունաստանի մէջ ծնած հայերու սերունդին կողմէ: Բաւական տարիներ անցան, եւ մարդիկ սկսան արձագանգել մեր ջանքերուն ու ճանչնալ հայ ժողովուրդի պատմութիւնը:

Հասաւ այն ժամանակաշրջանը, երբ ամբողջ հայ սփիւռքը համադրուեցաւ այս հարցերուն շուրջ: Մինչ առաջին տարիներուն Ցեղասպանութեան հարցը կը սահմանափակուէր տարեկան հոգեհանգիստով մը, հետագային այն վերածուեցաւ քաղաքական ձեռնարկներու, քննարկումներու, հրատարակութիւններու եւ մնայուն պահանջատիրական օրակարգի մը:

Մեզմէ շատեր մեծցան այնպիսի շրջաններու մէջ, ուր կ'ապրէին մեկուսացած հայ ընտանիքներ: Այդուհանդերձ, ճիգ թափուեցաւ, որպէսզի Յունաստանի բոլոր հայերը համադրուին Հայ Դատի Յանձնախումբին միջոցով եւ նոր թափ տան Ցե-

ղասպանութեան ճանաչման պայքարին: 1965-ին, Ցեղասպանութեան 50ամեակին, տեղի ունեցաւ առաջին քաղաքական ձեռնարկը Ապրիլի 24ին, համաշխարհային մակարդակով, սփիւռքի բոլոր գաղութներուն մէջ: Առաջին տարիները շատ դժուար էին, չէինք գիտեր թէ ինչպէ՛ս սկսիլ, ի՛նչ ընել: Վերջապէս սկսանք յուշագիրով մը ուղղուած Յունաստանի Արտաքին Գործոց նախարարին, մինչեւ որ տարիներու ընթացքին հասանք անմիջական կապեր ունենալ Յունաստանի քաղաքական դաշտի բոլոր ներկայացուցիչներուն հետ՝ հաւասար պայմաններով:

Հայկական կազմակերպութիւններու գործունեութեան հիմնական տարրը ազգային զգացումի խթանումն էր, որպէսզի երիտասարդ հայերը մնան գործօն եւ կազմակերպուած համայնքի կառոյցներուն մէջ:

Հայ Դատի Յանձնախումբի այս բոլոր ճիգերուն մէջ լուրջ մասնակցութիւն ունեցան մեր բոլոր հայրենակիցները, իւրաքանչիւրը իր կարողութիւններով եւ ծանօթութիւններով, համախմբելով մեր ընդհանուր կարողականութիւնը՝ հասնելու համար մեր նպատակներուն ու ջանքերուն, որոնք մինչեւ այսօր կը շարունակենք:

- Ընկեր Թագուր, որո՞նք էին հիմնական հանգրուանները Հայ Դատի Յանձնախումբի հիմնադրութենէն ետք՝ նոր ձեւաւորուած գործունեութեան:

Կրնանք ըսել, որ հայ ժողովուրդի իրաւունքները ապահովելու զանգուածային պահանջատիրութեան նշանաբանը տրուեցաւ միաժամանակ Մոսկուայէն, Երեւանէն եւ Սփիւռքէն: Կազմակերպուեցան ցոյցեր՝ «**Մեր հողերը, մեր հողերը**» կարգախօսով: Այս բոլորը ոտքի հանեցին ամբողջ աշխարհը եւ առաջին անգամ ըլլալով համաշխարհային հետաքրքրութիւնը սեւեռուեցաւ Հայկական Հարցին շուրջ: Հայոց Ցեղասպանութեան 50-ամեակին, որ առանցքային թուական էր, տեղի ունեցաւ հայութեան զանգուածային զարթօնքը: Հայրենասէր հայրենակիցներու խումբեր հաւաքուեցան հանրահաւաքներու՝ Խորհրդային Միութեան օրով, որպէսզի ամբողջ աշխարհը ճանչնայ հայ ժողովուրդի պահանջները: Այդ տարիներուն որոշուեցաւ Երեւանի մէջ կանգնեցնել Ցեղասպանութեան յուշահամալիրը՝ Ծիծեռնակաբերդը, որ հանդիպման, յիշատակի եւ ուխտի վայր դարձաւ ամբողջ հայութեան համար:

Յունաստանի մէջ 80-ական թուականները վճռորոշ եղան Հայ Դատի հետագայ զարգացումներուն համար: Բացի քաղաքական ոլորտի հսկայական փոփոխութիւններէն, ուժական պայքարէն եւ քաղաքական հասունացման մթնոլորտէն, փոփոխութիւններ տեղի ունեցան նաեւ արհեստագիտութեան մէջ: Հայ Դատի Յանձնախումբի առաջին տարիներուն կը կազմակերպէինք ցոյցեր եւ քաղաքական ձեռնարկներ: Մեր խնդիրն էր, թէ ինչպէ՛ս պիտի տեղեկացնէինք լրագրողներուն եւ

թերթերու խմբագիրներուն: Կը յիշեմ, թէ ինչպէս կը քննարկէիք տարբեր ձեւեր՝ յայտարարութիւններէ, մամլոյ հաղորդագրութիւններէ եւ մամլոյ ասուլիսներէ մինչեւ հայկական աւանդական ուստետներով հաւաքոյթներ, որպէսզի անոնք իրենց մօտիկ զգան մեր մշակոյթին եւ սովորութիւններուն: Մեր առաջին գրասենեակները Միթրոփոլէոս հրապարակին վրայ էին: Հոն կը հաւաքուէիք դէպի Սինտադմա քայլարշաւի համար, ուղղուելով դէպի Անծանօթ Չինուորի յուշարձանը, պսակի զետեղման համար: Ամիջապէս ետք կը հաւաքուէիք մեր գրասենեակը, ուր կը խմբագրէիք մամլոյ հաղորդագրութիւնները եւ յետոյ կը շրջէիք ամբողջ Աթէնքը՝ ոտքով կամ մոթոսիքլէթներով, զանոնք բաժնելու համար: Արհեստագիտութիւնը բնաւ չէր օգնէր այն ժամանակ, յետոյ եկաւ Թելեքսը (Telex), իսկ յետոյ Ֆաքսը (Fax), եւ ինչ-որ չափով վիճակը դիրացաւ:

80ական թուականներու ընթացքին առանցքային դեր խաղաց եւրոպական խորհրդարանի որոշումը՝ 1987ին Տեղասպանութիւնը ճանչնալու մասին: Կը յիշեմ այն ժամանակ 24 յոյն եւրոքրետիստներ կային եւ սկսանք մէկ առ մէկ այցելել անոնց, տեղեկացնելու եւ խնդրելու համար իրենց աջակցութիւնը, որպէսզի բանաձեւը անցնի խորհրդարանէն: Փարիզի մէջ հիմնուած էր նաեւ եւրոպայի Հայ Դատի Յանձնախումբը, որ կը համադրէր ճիգերը եւրոպական երկիրներուն մէջ: Անհամբերութեամբ կը սպասէիք արդիւնքին, եւ իրողութիւն է, որ մեր առաջարկներէն ու սրբագրութիւններէն շատերը ընդունուեցան:

Եւրոպական Միութեան բանաձեւէն ետք քաջալերուեցանք եւ սկսանք ջանքեր կատարել, որպէսզի նմանատիպ բանաձեւ որդեգրուի Հելսինկի խորհրդարանին կողմէ: Ինչպէս ալ պատահեցաւ, 1996-ին, մեծ գոհունակութիւն եւ հպարտութիւն պատճառելով բոլորիս:

Հետագային կը յիշեմ նաեւ զանազան այլ նախաձեռնութիւններ: Կոստանդնուպոլսոյ քաղաքապետ Տալանի այցելութիւնն էր Աթէնք: Այն ժամանակ գործակցեցանք որոշ կազմակերպութիւններու հետ՝ Փոքր Ասիական, պոնտական, քրտական, կիպրական, ժողովուրդներու Իրաւունքներու Հաստատութեան նախաձեռնութեամբ, որուն նախագահն էր Միխայիս Խարալամպիտիսը, մեծ ձեռնարկ մը կազմակերպեցինք Աթէնքի Զաղաքապետարանին առջեւ: Եւ իրապէս մեծ արձագանգ ունեցաւ:

Յետոյ Աթէնք եկաւ Թուրքիոյ նախագահ Թուրկուր Էօզալը, եւ դարձեալ բոլորս մէկտեղուեցանք, այս անգամ Զոլըքթըրնի հրապարակին վրայ եւ անկէ քայլերով ուղղուեցանք դէպի թրքական դեսպանատուն: Շատ մեծ բազմութիւն էր եւ գործակցութիւն՝ Կիպրոսի, Իմփրոսի, Փոքրասիական բազմաթիւ կազմակերպութիւններու հետ:

Ինչ կը վերաբերի Յունական խորհրդարանի ճանաչման՝ 1996-ին, պէտք է ըստեմ, որ համակարգուած ձեւով աշխատեցանք, բազմաթիւ ներկայացումներով եւ հանդիպումներով խորհրդարանին մէջ, կու-



Մեր հին օրագիրն էր հաւաքուէիս համար: Կը յիշեմ, թէ ինչպէս կը քննարկէիք տարբեր ձեւեր՝ յայտարարութիւններէ, մամլոյ հաղորդագրութիւններէ եւ մամլոյ ասուլիսներէ մինչեւ հայկական աւանդական ուստետներով հաւաքոյթներ, որպէսզի անոնք իրենց մօտիկ զգան մեր մշակոյթին եւ սովորութիւններուն:

Η ΚΑΘΗΜΕΡΙΝΗ ΠΑΡΑΣΚΕΥΗ 11 ΔΕΚΕΜΒΡΙΟΥ 19

Α

ΑΕΥΕΡΙΑ

ΟΙ ΑΡΜΕΝΙΟΙ

ΕΧΟΥΝ ΔΗΛΩΣΕΙΣ ΝΑ ΑΠΟΔΩΣΟΥΝ ΚΑΡΤΟΙΣ ΟΙ ΠΡΟΪΔΕΙΤΕΣ ΤΩΝ ΑΡΜΕΝΙΩΝ ΓΙΑ ΤΗΝ ΑΝΑΓΝΩΡΙΣΗ ΚΑΙ ΚΑΤΑΘΙΣΗ ΤΗΣ ΓΕΝΟΚΤΟΝΙΑΣ ΤΟΥ ΑΡΜΕΝΙΚΟΥ ΛΑΟΥ, ΕΙΠΟΝ ΧΡΕΙΣ ΟΤΙ ΑΝΕΠΙΣΤΕΥΤΟ ΤΥΠΟΥ ΟΙ ΕΠΙΧΡΗΣΤΕΣ ΤΗΣ ΕΛΛΗΝΙΚΗΣ ΕΘΝΙΚΗΣ ΕΠΙΤΡΟΠΗΣ ΕΥΛΑΒΕΣ. ΣΤΗ ΦΩΤΟΓΡΑΦΙΑ, ΣΤΙΓΜΑΙΟΤΟ ΑΠΟ ΤΗ ΣΥΝΕΤΕΡΙΑ.

ΜΕΤΑ ΤΗΝ ΚΙΝΗΤΟΠΟΙΗΣΗ ΜΗΧΑΝΙΣΜΩΝ ΤΩΝ ΔΙΕΘΝΩΝ ΟΡΓΑΝΙΣΜΩΝ

Τò Αρμενικό Ζήτημα άρχισε νά μπαίνει σέ καλό δρόμο

ΕΚΔΗΛΩΣΕΙΣ ΓΙΑ ΤΗΝ 71^η ΕΠΕΤΕΙΟ ΤΗΣ ΓΕΝΟΚΤΟΝΙΑΣ ΤΩΝ ΑΡΜΕΝΙΩΝ

Η αναγνώριση και καταθίση της Γενοκτονίας του Αρμενικού Λαού από την Τουρκία, καθώς και η επιπλέον των τουρκολογικών αρμενικών «βραβών στην αμετανόητο λαό, είναι πάντα τα κριτήρια αιτήματα των Αρμενίων.

Όπως τονίσαμε σε πρόσφατη συνέντευξη Τύπου της Ελληνικής Εθνικής Επιτροπής Εκδόσεων, που πραγματοποιήθηκε μετά από πρόσκληση των εκπαιδευτικών για την 71η επέτειο της Γενοκτονίας των Αρμενίων από την Τουρκία, οι επίμονες προσπάθειες των τελευταίων είναι για διασφάλιση της διεθνούς κοινής γνώσης και η κινητοποίηση των μηχανισμών των διεθνών οργανισμών, έχουν ήδη αρχίσει να αποδίδουν καρπούς.

Ενοχλημένος δε από αυτές τις προσπάθειες, ο υπουργός Εξωτερικών της Τουρκίας İsmail Tashan, στις 14 Νοεμβρίου του 1981 στο Στρασβούργο, κατά τη διάρκεια των εργασιών των 21 κρατών-μελών του Συμβουλίου της Ευρώπης, δήλωσε πως οι συζητήσεις που διεξάγονται σχετικά με την Γενοκτονία των Αρμενίων αποσκοπούν, αλλιώς και παραποίηση της Ιστορίας. Προσέθεσε, λοιπόν, να πείσει τους παραστάτες, ότι δεν είναι για να οι αρχές των Αρμενίων το 1915 και ότι αυτές είναι προβάσιμα στοιχεία αλλά είναι προβάσιμα στοιχεία για αυτούς, εκπολιτιστικά στο σπίτι τους και των Αρμενίων.

Το Ευρωπαϊκό Κοινοβούλιο συζητεί τις ημέρες αυτές υπόσχεση σχετικά με το Αρμενικό Ζήτημα και αναμένεται να εγκριθεί σφραγισμένο, που προτείνει την άμεση διακοπή μεταξύ των δύο πλευρών για την αναζήτηση λύσης του Αρμενικού ζητήματος.

Πέπεισι η Βουλή των Αιρετών των ΗΠΑ φέρει σπουδαία πρόταση καθιέρωσης Ημερών Μνήμης της Αρμενικής Γενοκτονίας. Η πρόταση μετά από πενήντα χρόνια της Τουρκίας αποδοθεί.

ΤΟΥ ΔΗΜ. ΚΑΡΑΤΖΗ

σε από το Κογκρέσο με ελάττωση διαφορά πέντων.

Πρόσφατα το θέμα της Γενοκτονίας τέθηκε και στο Ευρωπαϊκό Υπουργικό Συμβούλιο των χωρών - μελών της ΕΟΚ, από οποίο πήρε θετική απάντηση ο αρμενικός υπουργός. Εξαιρετική η Ελλάδα κ. Θ. Παπανίκου. Εξαιρετική ήταν και οι παρεμβάσεις των Ελλήνων Ευρωβουλευτών κ.κ. Τζούνη, Ευσταθίου, Μιχαίου, Πλακοθήκη και Φιλίππ, στην πολιτική επιτροπή του Ευρωπαϊκού Κοινοβουλίου, όπου συζητήθηκε εισηγήθηκε σχετικά με πρόταση σφραγισμένο, που έχει υποβάλει ο απ. Γάλλος ευρωβουλευτής και που αφορά την καταθίση της Γε-

αλλά και των ελληνικά, που έχει έλαει στο σκοτάδι του ίδιου θανάτου.

Βεβαίως, τονίσαμε επίσης, ο αρμενικός λαός με κανένα τρόπο δεν μπορεί να δεχθεί την επιταγή της ματολογία της Αθήνας. Όπως οι επόμενα τόσα χρόνια από το 1915, η Ελλάδα είναι πάντα πλάι με τους Αρμενίους, επιτεταγμένα από παράλληλα κατά καιρούς από φιλοαρμενικούς κύκλους και ακόμα στήριξη και πρόσφατα από σχετικά συλλήψεις του Ευρωπαϊκού Κοινοβουλίου, χωρίς να δρούν στη τακτικότητα.

Θά πρέπει να σημειωθεί, ότι σήμερα ο λαός των Αρμενίων ζει 65 εκατ. Αρμενίων, ενώ στη χώρα μας 10-12 γιλιάρδες.

Τέλος, η Αρμενική Εθνική Επιτροπή, σχετικά με τις ημέρες επανασημασμένων των Αρμενίων που επέλεξαν το βόριο της δικής δοξαίας, απογοητευμένες απέναντι στην αδράκεια, και την αδράκεια που έχει αντιμετώπιση η Ελλάδα τα εθνικά πρόβλημά του αρτι μενός λαού, παρά το γεγονός ο αρμενικός λαός, παρά το γεγονός ότι δεν μοιάζει τις ημέρες θανάτου, που επέλεξαν οι αρμενίοι και τις επετημονές την οργή τους και αποδίδουν, εφόσον δημιουργού με συλλεγαστές της σημερινής διεθνούς πολιτικής πραγματικότητας τη ρύθμιση της «εθνικής συστοργής» του λαού.

սակցութիւններուն եւ ներկայացուցիչներուն հետ: Ապրիլ 24ն էր եւ բողոքի ցոյց կազմակերպած էինք դէպի թրքական դեսպանատուն: Կը յիշեմ, թէ ինչպէս կը քալէիք Վասիլիսի Սոֆիաս պողոտայով եւ կանգ առիք խորհրդարանին առջեւ: Ծանաչման համապատասխան պահանջագիրը յանձնելու համար: խորհրդարանի նախագահ պրն. Ափոսթըլուս Զաքարամանյանը խնդրեց Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչներուն հետ խօսիլ: Այսպիսով որոշուեցաւ երեք հոգինոց յանձնախումբ մը եւ գացինք իր գրասենեակը: Հոն մեզի յայտարարեց. «Վաղը խորհրդարանին մէջ պիտի անցընեմ Տեղասպանութեան ճանաչման բանաձեւը»: Կրնա՞ք երեւակայել մեր ուրախութիւնը: Դուրս ելանք թռչելով, որպէսզի շարունակուի ցոյցը: Յաջորդ օրը ներկայ գտնուեցանք խորհրդարան, ուր կ'արձարծուէր Հայոց Տեղասպանութեան ճանաչման օրհնագիծը: Սօս 10 հոգի էինք, խորհրդարանի բարձր պատշգամբէն եւ հետեւեցանք այդ պատմական նիստին: Բոլոր կուսակցութիւնները համաձայն էին: Միայն մէկ սրբագրութիւն որդեգրուեցաւ. հոն ուր կ'ըսուէր «Տեղասպանութիւն թուրքերու կողմէ», սրբագրուեցաւ «Տեղասպանութիւն Թուր-



Յաջողեցանք յիշեցնել հարց մը, որ բոլորը կը կարծեին թէ մոռցուած է: Միաժամանակ, մեր երիտասարդութեան համար ասիկա առիթ եղաւ սկսելու զօրանալ, ամուր կանգնիլ եւ հպարտութեամբ ըսել՝ թէ «ես Հայ եմ»: Ունէին նպատակ մը, ազգային տեսլական մը, որ կ'առաջնորդէր ամբողջ սերունդ մը:

քիոյ կողմէ»: Որ անշուշտ շատ ակտիվ ճիշդ էր: Շատ վառ կը յիշեմ նաեւ Հայաստանի երկրաշարժի ողբերգութիւնը: Խորհրդային Միութեան վարչակարգի փլուզումէն ետք, պէտք էր դիմագրաւելիք մեծ աղետ մը: 1988ի Դեկտեմբերին տեղի ունեցաւ մեծ երկրաշարժը եւ մեր առջեւ բացուեցաւ այլ ճակատագրական պահ մը, որ ցնցիչ էր հայութեան համար: Յունական ռատիոկայանի մը մէջ մէկ ժամուայ համար հայկական լուրերու հաղորդումներու բաժին մը կը վարէինք, Հ.Յ.Դ. Հայ Դատի Յանձնախումբին կողմէ եւ մեր անդամները (*յատուկ կը յիշեմ Դաւիթն ու Վերոնիկը*) յաճախ յայտագիրներ կը պատրաստէին: Մեծ եղաւ հայ եւ յոյն ժողովուրդին արձագանգը, երբ կը լսէին մեծ թիւով զոհերու, քանդուած քաղաքներու, բնակարաններու եւ անօթեան մնացած մարդոց համար՝ խիստ ձմեռնային պայմաններու մէջ: Մեր ամբողջ համայնքը եւ մեր բոլոր կազմակերպութիւնները սատարեցին աղետալներուն օգնութեան ճիգերուն: Յետոյ Ղարաբաղն էր: Պէտք է խոստովանիք, որ մինչեւ պատերազմի սկիզբը շատ գիտելիքներ չունէինք հոն տիրող կացութեան մասին: Պատերազմ

տեղի կ'ունենար Ատրաբեյճանի հետ եւ մենք հոս ցոյցեր կ'ընէինք: Յոյցի մը ընթացքին զիս կանչեցին հարցազրոյց տալու յունական պետական հեռուստատեսութեան (EPT): Այդ օրը սահմանափակուեցայ Ղարաբաղի շուրջ հիմնական հարցերով, բայց հետագային բոլորս շատ մօտէն հետեւեցանք զարգացումներուն: Ղարաբաղի անկախութեան համար պայքարը կը խօսէր մեր բոլորի սրտերուն մէջ: Ամբողջ հայ ժողովուրդը ոտքի ելած էր ամբողջ աշխարհի մէջ: Մենք ցոյցեր կ'ընէինք Խորհրդային Միութեան դեսպանատան առջեւ՝ պահանջելով Ղարաբաղի ազատագրումը: Մեզ կ'ընդունէին եւ հարցն ու պահանջները կը քննարկէինք իրենց հետ՝ յանձնելով յուշագիրներ եւ նամակներ, մինչ անոնք մեզի կը բացատրէին Կորպաչոյի «**վերսթրոյքան**»: Այս մթնոլորտին մէջ, եւ ԽՍՀՄ ժողովուրդներուն դեմ եղած անարդարութիւններու վերացման շրջագիծէն ներս, պէտք էր սրբագրէին այդ սխալները: Ղարաբաղի հայերուն պահանջը արդար էր, որովհետեւ խօսքը զուտ հայկական հողի մասին էր, որ Սթալինը կամայականօրէն յանձնած էր ազերիներուն:

Հայ Դատի Յանձնախումբերը ձեւաւորուեցան բազմաթիւ երկիրներու մէջ եւ կը համադրուէին Եւրոպայի (*Նախ քան իսկ յետոյ Պրիստէյ*), Ամերիկայի (*Ուաշինկթըն*), Միջին Արեւելքի (*Պէրուս*) եւ Հայաստանի (*Երեւան*) կեդրոնական գրասենեակներուն կողմէ: Պէտք է ըսել, որ զանգուածային զօրաշարժը ակտիվ մեծ թափ տուաւ գործունէութիւններուն: Երիտասարդները կը հաւաքուէին, յատկապէս ցոյցերուն ժամանակ, կորովով եւ ակունով: Առաջին տարիներուն մեր պահանջատիրութիւնը մեծ արձագանգ ուներ նաեւ Լրատուական Միջոցներուն մօտ՝ լրագրողներու մեծ ներկայութեամբ մեր բոլոր ձեռնարկներուն: Սակայն հետագային հետաքրքրութիւնը նուազեցաւ, բայց մենք ալ սկսանք օգտագործել նոր ձեւեր եւ արիեստագիտութիւններ՝ մեր տեսակետները հաղորդելու համար: Մեզի միշտ տպաւորած է, թէ ինչպէ՛ս Ղարաբաղի հարցը բաւարար չափով չէր լուսաբանուեր: Կը յիշեմ, Ղարաբաղի Նախագահը եկած էր եւ մամլոյ ասուլիս մը կազմակերպած էինք՝ լրագրողներու շատ սահմանափակ մասնակցութեամբ: Մինչ պատերազմը կը մոլեգնէր եւ հեռուստատեսութիւնը շարունակ լուրեր ու պատկերներ կը ցուցադրէր, այդուհանդերձ մամլոյ ասուլիսին բաւարար թիւ ներկայ չէր եղած, որովհետեւ վերապահումներ ունէին Ղարաբաղի՝ իբրեւ *de facto* անկախ պետութիւն ճանաչման հարցին շուրջ, շփոթելով Կիպրական գրաման հարցին հետ: Շատ կարելի է ըսել, որ այս ամբողջ զօրաշարժը յաջողեցաւ մեծ թափ տալ Հայկական Հարցին: Յաջողեցանք յիշեցնել հարց մը, որ բոլորը կը կարծէին թէ մոռցուած է: Միաժամանակ, նաեւ մեր երիտասարդութեան համար ասիկա առիթ եղաւ սկսելու զօրանալ, ինքնավստահութիւն զգալ, ամուր կանգնիլ եւ հպարտութեամբ ըսել՝ թէ «ես Հայ եմ»: Ունէին նպատակ մը, ազգային տեսլական մը, որ կ'առաջնորդէր ամբողջ սերունդ մը:

ԳԱՔՐԻԷԼ ԼԱՂԵԱՆ

Չինուորականն ու ազատամարտիկը, մտաւորականն ու քաղաքական միտքը, հայոց բանակի կազմաւորման, Հայ Դատի հետապնդման եւ պատմագիտութեան իսկական ռահվիրան

Հեղինակ՝ Անի Աբիկեան

Սոյն յօդուածին մէջ կը ներկայացուի հիմնականօրէն Գաբրիել Լազեանի բազմազան եւ բազմակողմանի գործունէութիւնը՝ իր կեանքի գանազան փուլերուն: Լազեանի մասին կենսագրական տեղեկութիւններու հիմնական աղբիւր հանդիսացած է 1922-էն 1923 թուականներուն իր գրի առած ինքնակենսագրութիւնը, այն ժամանակ, երբ ինքն ու կիկը՝ Նաթալիա/Նաթալի Լազեանը, նոր հասած էին Յունաստան: Կարելոր աղբիւրներ են նաեւ թերթերու եւ հանդէսներու մէջ լոյս տեսած յօդուածները, ուր բազմաթիւ վկայութիւններ կը գտնենք Լազեանի մասին: Գոյութիւն ունի նաեւ Նաթալի Լազեանի տեսերիզային հարցազրոյցը, ուր դարձեալ կը գտնենք արժէքաւոր վկայութիւններ ամուսինին կեանքին եւ գործունէութեան մասին: Իբրեւ սկզբնաղբիւր պէտք է աւելցնել նաեւ Նախքան Տեղասպանութիւնը Երզնկայէն հասած Նամակներ, որոնք գրուած են Լազեան ընտանիքի անդամներու կողմէ՝ Խտալիա գտնուող մէկ հարազատին: Վերջապէս, այս յօդուածին համար գործածուած է նաեւ լուսանկարներու եւ վաւերաթուղթերու հարուստ հաւաքածոյ մը:

Գաբրիել Լազեան իբրեւ հասարակական-կուսակցական գործիչ, զինուորական, հրապարակագիր, բեղուն եւ աշխուժ կեանք մը ունեցած է: Յունաստան հաստատուելէ ետք, ան կարելոր պաշտօններ ստանձնած է իր կուսակցութեան՝ Հայ Տեղափոխական Դաշնակցութեան մէջ: Այս ձեւով ալ Լազեան կը հանդիսանայ յունահայ համայնքի առաջին պատասխանատու ղեմքերէն եւ կարելոր ներդրում ունեցած է համայնքային հաստատութիւններու կազմակերպումին մէջ: Անոր անունը կ'առնչուի նաեւ հայկական մամուլին, նկատի ունենալով որ երկար տարիներ խմբագիրի պաշտօններ վարած է հայկական թերթերու մէջ՝ Յունաստան եւ Եգիպտոս:

Յատկանշական է նաեւ Գաբրիել Լազեանի զինուորականի ասպարէզը: Ան հերթաբար ծառայած է օսմանեան բանակին, Հայաստանի հանրապետութեան բանակին, շատ կարճ ժամանակով մը ինչպէս յուշերուն մէջ կը գրէ Կարմիր բանակին, ինչպէս նաեւ յունական բանակին: Իբրեւ հաւատարիմ քաղաքացի եւ սպայ օսմանեան բանակին ծառայած Լազեանը, պիտի տեսնենք որ Տեղասպանութեան ժամանակ իր ընտանիքին բնաջնջումէն ետք այլ ուղի մը պիտի որդեգրէր, նախ պիտի միանար Նորանկախ Հայաստանի բանակին եւ մինչեւ 1922 պիտի շարունակէր զինուորական իր գործունէութիւնը:



Գաբրիել Լազեան օսմանեան բանակի սպայի տարազով

Երզնկա

Գաբրիել Լազեանի ընտանիքը Երզնկայէն է: Նախապէս ազգանուննին եղած է Կիւրճեան: Գաբրիել Լազեան ծնած է 10 Սեպտեմբեր 1893-ին, Երզնկայի Սիրմենենց թաղին մէջ՝ բարեկեցիկ եւ բազմանդամ ընտանիքի մը մէջ: Հայրը՝ Գուրգէնը (*հոր անունը Գէորգ*), աւարտած էր Միացեալ ընկերութեան պատկանող Ընկերական վարժարանը: 21 տարեկանին կ'ամուսնանայ՝ Չարուհի Ծիգմեճեանի հետ եւ կ'ունենան ութը զաւակ. չորս մանչ եւ չորս աղջիկ: Առաջին երկու որդիները՝ Գաբրիելը եւ Միքայէլը, երկուորեակներ էին: Անոնց կը յաջորդէն Ռաֆայէլը, Գէորգը, Հռիփսիմէն, Գայեանէն, Սաթենիկը եւ Ջնարիկը: Չարուհիի հայրն էր Մարտիրոս Ծիգմեճեան: 1895-96 թուականներուն, Սուլթան Համիտի իշխանութիւններուն գործադրած հակահայ բռնութիւններուն ժամանակ, Գուրգէն Լազեան կը բանտարկուի Երզնկայի մէջ, կը դատուի եւ կը դատապարտուի երկարատեւ բանտարկութեան: Աւելի ուշ, սուլթանական ներում կը ստանայ եւ կը վերադառնայ Երզնկա: 1908-ի Օսմանեան կայսրութեան մէջ սահմանադրական կարգերու վե-

րահաստատումեն ետք, Գուրգեն Լազեան վարած է Երզնկա գաւառին (*սանճաք*) Երզնկա գաւառակին (*քազա*) մէջ գտնուող ՃԷՆճԻԿԷ/ՃԻՆճԻԿԷ (*Cincike*) ենթագաւառակի (*Նահիէ*) կառավարիչի (միւտիր) պաշտօնը: 1913-ին եղած է Տրապիզոնի Հայոց Առաջնորդարանի դիւանապետը:

Գաբրիէլ Լազեան մինչեւ իր երիտասարդութեան առաջին տարիները ապրած է Երզնկայի մէջ: Իր նախնական կրթութիւնը կը ստանայ քաղաքին «**Քրիստիներեան**» վարժարանի մանկապարտեզը, ապա կը շարունակէ յաճախել նախ Երզնկայի «**Եզնիկեան**», «**Ս. Փրկիչ**», «**Կեդրոնական**», դարձեալ «**Եզնիկեան**» վարժարանները: 1910-ին շրջանաւարտ է «**Եզնիկեան**» վարժարանէն: Երզնկայի այս վերջին վարժարանի շրջանաւարտներէն եղած է նաեւ Սողոմոն Թեղիբեանը: «**Եզնիկեան**»-ի մէջ իր ուսուցիչներէն եղած են Միրիճան Օզանեանը եւ Գուրգեն Փափազեանը (*հետագային բժիշկ*): Դպրոցականի այս վերջին տարին կ'անդամակցի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան: Հայկական վարժարանը ավարտելէ ետք պետական քննութիւն կը յանձնէ եւ կ'ընդունուի Երզնկայի «**Իտալիէ**» գիւղատեղիական կողմնորոշումով վարժարանը, իսկ 1913-ին ալ կ'անցնի Պոլիս, նախ կ'ընդունուի Չինկիլքէօյի գիւղատեղիական բարձրագոյն վարժարանը, ապա 1914-ին կը սկսի յաճախել Պոլսոյ «**Հարպիէ**» գիւղատեղիական բարձրագոյն վարժարանը:

Գաբրիէլ Լազեան գիւղատեղիական

Երբ ծայր կ'առնէ Առաջին համաշխարհային պատերազմը, Լազեանի ծառայած օսմանեան զօրախումբին մէջ վիճակ կը ձգուի, որպէսզի ճշդուի իւրաքանչիւրին առաքման վայրը: Լազեան եւ իր ընկերը՝ Մկրտիչ Մկրեանը, այս ձեւով կը սկսին ծառայել նախ Պանտըրմայի, ապա Իզմիրի շրջանին մէջ՝ Գիլիզման (*Ներկայիս Güzelbahçe*) եւ Մենեմէն: Մինչեւ 1915-ի ամառը անոնք կը ծառայեն այս վայրերուն մէջ, ապա իրենց զօրագուտը հրաման կը ստանայ մեկնելու Սուէզի ռազմաճակատ, ուր Օսմանեան բանակները կը պատերազմէին Եգիպտոսի մէջ տեղակայուած դաշնակից ուժերուն դէմ: Այս պահուն է, որ իրենց հրամանատարը Լազեանին եւ Մկրեանին կը տեղեկացնէ, որ իրենք պիտի մնան Չմիւռնիա քաղաքին մէջ եւ իբրեւ սպայ յանձնառութիւն պիտի ունենան նորակոչիկ գիւղատեղի մարզելու եւ զանոնք ռազմաճակատի համար պատրաստելու: Այս ձեւով Լազեան երեք տարի շարունակ՝ մինչեւ պատերազմին ավարտը, պիտի մնար Չմիւռնիոյ մէջ: Կը ծառայէր 5-րդ գունդին մէջ, տեղակայուած էին «**Բուլթա**» երկաթուղիի կայարանին պատկանող մթերանոցի շէնքերուն մէջ: Սպաները կ'ապրէին անոր շրջակայքը գտնուող վարձու տուններու մէջ, իսկ զօրագունդի հրամանատարն էր գերմանացի գնդապետ Բայֆիրը:

Գերմանիան այդ ժամանակ դաշնակիցն էր Օսմանեան կայսրութեան եւ միասնաբար կը ճակատէին դաշնակից բանակներուն դէմ: Լազեանի եւ




Գաբրիէլ Լազեան Հայաստանի Հանրապետութեան բանակին մէջ սպայի պաշտօնով

Մկրեանի գիւղատեղիական այս նոր առաքելութիւնը ճակատագրական նշանակութիւն կ'ունենայ երկուքին համար, նկատի ունենալով որ ասոնք այն ժամանակներն էին, երբ օսմանեան իշխանութիւնները կը ձեռքաւարէին իրենց բանակին մէջ ծառայող հայ գիւղատեղիները եւ կը բնաջնջէին: Լազեան եւ ընկերը առաջին իսկ պահէն գոհ կը ձգեն գերմանացի գնդապետը, որ զիրենք իր պաշտպանութեան տակ կ'առնէ եւ ամիթ կը ստեղծէ որ անոնք Չմիւռնիոյ մէջ ապրին ձեռքաւարութենէ եւ տեղահանութենէ ազատ կեանք մը:

1916-ին է, որ Լազեան Երզնկայէն չափազանց ցնցիչ տեղեկութիւններ կը ստանայ իր ընտանիքին մասին: Անոնք ամբողջութեամբ տեղահանուած էին, ւաւելի ուշ պիտի իմանար, որ Յեղասպանութեան սկիզբը հայրը կացինահարուած էր սպանուած էր Եփրատ գետի ափին՝ Չորբերան գիւղին քով: Աւելի ուշ կը սպանուին նաեւ եօթը եղբայրներն ու քոյրերը: Մէկ խօսքով գրեթէ ամբողջ գերդաստանը՝ մօտաւորապէս 70 հոգի, կը բնաջնջուի: Մեծապէս ցնցուած այս լուրերէն, Գաբրիէլի առաջին ցանկութիւնը կ'ըլլայ փախուստ տալ օսմանեան բանակէն եւ անցնիլ Եւրոպա: Իսկապէս ալ գործնական քայլեր կ'առնէ, կ'երթայ Չմիւռնիոյ շրջանի ծովագերեայ վայր մը՝ հոնկէ նաւակով մը փախելու համար: Բայց ինչպէս յուշերուն մէջ կը գրէ՝ «**Կարելի չէր**»:

Չմիւռնիա գտնուած այս տարիներուն է նաեւ,



Հայաստանի Հանրապետության անունով ֆրանսերեն պաշտոնական վաերաթուղթ, որ կը հաստատե, թե Գաբրիել Լազեան ճարտարագիտական տեղակալի (lieutenant de génie) պաշտոնով ծառայած է Հայաստանի բանակին եւ երկրէն հեռացած է պոլշեիկներու գրաման պատճառով: 7 Մարտ 1922, Փարիզ, ստորագրողն է՝ Զորավար Korganoff (Ղորղանեան):

որ կ'իմանայ թե մօրեղբոր՝ Գառնիկ Ծիզմեճեանի կինը՝ Ազգանուշը, վերապրած է իր երկու զաւակներուն հետ եւ կը գտնուին Ակն, այնուհետեւ ալ Սեբաստիա/Սվազ: Ամէն ճիգ կը թափէ զանոնք բերելու Զմիւռնիա, ուր ինչպէս իր յուշերուն մէջ կը գրէ՝ կ'ապրէր նաեւ մայրը՝ Զարուհին: Հոս կ'արժէ արձանագրել, որ Լազեանի մասին գրուած այլ աղբիւրներու մէջ նշուած է, որ Զարուհին ալ կը սպաննուի Երզնկայի մէջ: Իր ինքնակենսագրութեան մէջ Լազեան կը գրէ նաեւ, որ Զմիւռնիոյ մէջ պատերազմի այս տարիներուն «**շատ մը հայ եւ յոյն զինուորներու օգտակար եղայ**»:

1917-ին, երբ Գաբրիել տակաւին Զմիւռնիա կը գտնուէր՝ կը ծանօթանայ եւ կը նշանուի Նաթալիա/Նաթալի Իքոնոմիտուին հետ: Նաթալիին մայրը Այտընէն էր, իսկ հայրը՝ Պիթլիսէն: Բացի Նաթալիէն անոնք ունէին երկու դուստր եւ երկու որդի: Հայրը քսան տարի շարունակ վարած էր Այտընի երկաթուղիի կայարանի տնօրէնի պաշտօնը: Բայց Պալքանեան պատերազմին ընթացքին (1912-1913), օսմանեան գունդեր ճակատ փոխադրող կառաւարը գիծէն դուրս եկած էր եւ պատճառ եղած քանի մը հարիւր վիրաւորներու եւ զոհերու:

Նաթալիի հայրը այդ ժամանակ կ'ամբաստանուէր իբրեւ այս արկածին մեղսակից եւ պաշտօնէն կը վտարուէր:



Զորավար Թորգոմ (առջեւէն քալող եւ բարեւի կեցած անձը) եւ Զմիւռնիայէն Աթէնք տեղափոխուած Հայկական լեգէոնը (յունական բանակի հինգերորդ հայկական գումարտակ), Նոյեմբեր 1922: Ռազմական այս գումարտակը Յունաստան հասնելէ ետք պիտի լուծարուէր:

Առաջին համաշխարհային պատերազմի աւարտէն քանի մը ամիս առաջ Լազեանի օսմանեան զօրագունդը կը տեղափոխուի Կելիպոլու/Կալիփոլի: Ապա կը հռչակուի Զինադադարը, Լազեան կը փոխադրուի Պոլիս, բայց հոն երկար չի մնար եւ անմիջապէս կ'անցնի Զմիւռնիա, ուր կ'ապրէր Նաթալին եւ իր ընտանքը: Զմիւռնիան արդէն գրաւուած էր դաշնակից բանակներու կողմէ: Լազեանի նախաձեռնութեամբ եւ օսմանեան բանակին մէջ ծառայած այլ հայ սպաներու գործակցութեամբ կը հիմնէ Սպայից միութիւնը: Լազեան անգործ էր: Նաթալիի հօր դրամական օգնութեամբ, կը սկսի չամիչի, թուզի եւ նարինջի վաճառակալութիւն ընել Իզմիրէն Պոլիս: Բայց յաջողութիւն չունենար: Ապա կը սկսի աշխատիլ հիւսուածեղէնի գործարանի մը մէջ:

Գաբրիել եւ Նաթալի կ'ամուսնանան 1919-ին, Զմիւռնիոյ մէջ: 1919-ի ամառը Լազեան Պոլսոյ Սպայից Միութեան անդամ Գալուստ Էյնաթեանէն կ'իմանայ, թե Կովկասի մէջ Հայաստանի Նորաստեղծ պետութիւնը կարիքը ուներ փորձառու սպաներու: Այդ ժամանակ շատ էին նախապէս օսմանեան բանակին ծառայած հայ սպաները, որոնք կը փափաքէին Հայաստանի հանրապետութիւն մեկնիլ եւ հոն շարունակել իրենց ծառայութիւնը: Գաբրիել ինքն ալ կը միանայ այս խումբերուն եւ կը մեկնի Հայաստան, իր հետ տանելով նաեւ Զմիւռնիայէն երկու այլ սպաներ՝ Յակոբ եւ Գեորգ Գեորգեան եղբայրները: Դժուար ընտրութիւն մըն էր Լազեանի համար, քանի որ միայն քանի մը ամիս եղած էր ամուսնութեան: Նաթալիի հայրն ալ նոր մահացած էր, Նաթալիի եղբայրները փոքր էին եւ միայն քոյրն էր, որ կ'աշխատէր իրենց քեռիին դեղարանին մէջ: Գաբրիել կը մեկնէր Հայաստան առանձին ձգելով այս ընտանիքը Զմիւռնիոյ մէջ:

Լազեան եւ ընկերները Հայաստան կը հասնին

1919-ի Սեպտեմբերին: Ան կը նշանակուի ճարտարագիտական տեղակալ (*գինուորական բնոյթի շինարարական աշխատանքներու մասնագետ*), Նոյն տարուան ձմեռը կը դրկուի Իգդիր (*Սուրմալու*)՝ դաշտային ամրութիւններ կառուցելու համար, գարնան ալ Լազեանն ու իր խումբը կը փորձեն Արաքս գետի վրայ շարժական կամուրջ մը հաստատել: Յուլիս 1920-ին, քանի մը այլ ճարտարագետ սպաներու հետ, կը դրկուի Շահթախտ (*Նախիջեան*), որ այդ ժամանակ կը գտնուէր Հայաստանի Հանրապետութեան գերիշխանութեան տակ եւ հոն տեղակայուած էր զօրավար Շելքովնիկեանի զօրագունդը: Շահթախտի մէջ կը գործէր երկաթուղիի կայարանը, որ կը գտնուէր Արաքս գետի ափին: Լազեանի եւ ընկերներուն յանձնառութիւն տրուած էր Շահթախտի մէջ գտնուող փոքր նաւը Երեւան փոխադրել: Անկա կը գտնուէր կայարանին մօտակայ փոսի մը մէջ՝ կողքի վրայ պառկած վիճակով: Անունն էր «Միստրիցա Նուշա», որ նաւուն վրայ գրուած էր ռուսատառ եւ կը նշանակէր «**Գթութեան քոյր Նուշա**»: Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը, երբ ցարական բանակները գրաւած էին Վանը, այս նաւը բերուած էր մինչեւ այս կողմերը, հոսկէ ալ Վանայ լիճ փոխադրելու համար: Բայց տեղի ունեցած էր ռուսական յեղափոխութիւնը, ցարական բանակները սկսած էին նահանջել եւ նաւը մնացած էր այս վայրին մէջ: Լազեանի խումբը կը յաջողի այս նաւը տեղադրել վակոններու վրայ եւ ճամբայ հանել դէպի Երեւան: Լազեան այս մասին իր յուշերուն մէջ կը ներկայացնէ այն գերիրապաշտ պատկերը, երբ իր խումբին անդամները նստած էին նաւուն մէջ, նաւը բեռնուած էր վակոններու վրայ եւ երկաթուղագիծի վրայ կը քշուէր Արարատեան դաշտին մէջ, իսկ Արեւմուտքէն ալ կ'երեւէր Արարատ լեռը: Երեւան հասնելէ ետք նաւը կը Նորոգուի եւ կը վերամկրտուի «**Գեղանուշ**» անունով:

Այս դրուագը եւ անոր շարունակութիւնը հետագային Կոստան Չարեանը ներշնչած է եւ անոր հիման վրայ ալ հեղինակած է իր վեպը՝ «**Նաւը լեռան վրայ**»:

Հոկտեմբեր 1920-ին Չմիւռնիայէն Երեւան կը հասնի նաեւ Նաթալին: Ան ընկերակցած էր դարձեալ Չմիւռնիայէն տեղափոխուող Արշակ Արզուեանի եւ իր ընտանիքին: Թէեւ երջանկութիւն էր ամուսնեացեալ զոյգին վերամիաւորումը, բայց Հայաստանի Հանրապետութեան մէջ ծայր առած էր հայ-թրքական պատերազմը, որուն անմիջապէս պիտի յաջորդէր երկրին մէջ խորհրդային կարգերու հաստատումը: Լազեան, միւս սպաներուն օրինակով, սկզբնական շրջանին կը շարունակէ ծառայել խորհրդային Հայաստանի Կարմիր բանակին: Այդ օրերուն ան կը յաջողի Նաթալիին համար Չմիւռնիա վերադառնալու վիզա ստանալ: Թուրքիան արտօնութիւն տուած էր խորհրդային Հայաստանին, որ Ալեքսանդրապոլէն (*Կիւմրի*) միայն մէկ գնացք ուղղուի դէպի Պաթումի նաւահանգիստը: Այս գնացքին մէջ կը նստի Նաթալին,



Ոտքի, ամենէն բարձրահասակը՝ Գաբրիէլ Լազեան: Նստած՝ Միհրան Փափագեան:

բայց երբ կը հասնին վրացական սահմանագիծ, վրացի սահմանապահները կ'արգիլեն Նաթալիին եւ խումբ մը զմիւռնիացի եւ այլ հայ սպաներու ճամբորդութիւնը: Ստիպուած ամիս մը կը մնան Սանահին: Ապա քալելով կ'ուղղուին Թիֆլիս. ճամբորդութիւնը տեղի կ'ունենայ ձիւնածածկ ճամբաներու վրայ եւ կը տեսէ վեց օր: Հոս եւս վրացի ոստիկանութիւնը զիրենք կը ձերբակալէ եւ կը բանտարկէ: Նաթալին իբրեւ յունահպատակ ազատ կ'արձակուի, իր միջամտութեամբ կ'ազատին նաեւ զմիւռնիացի հայ սպաները: Ապա, Թիֆլիսէն գնացք կը նստին եւ կը հեռանան Կրաստանէն, ճիշդ այն ժամանակներուն երբ Կարմիր բանակը հոն ալ մուտք գործած էր:

Նոյն ժամանակներուն Երեւանի մէջ խորհրդային իշխանութիւնները կը ձերբակալեն Հայաստանի հանրապետութեան ծառայած բոլոր բարձրատիճան գինուորականները, նոյնիսկ եթէ անոնք սկսած էին ծառայել Կարմիր բանակին: Անոնց թիւը հազարի կը հասնէր: Չմեռուայ ցուրտին, ձերբակալեալ գինուորականները քալելով կը տարուին խորհրդային Ագրպէյճանի Աղստաֆա քաղաքը, հոնկէ ալ գնացքով կը դրկուին Պաքու, ապա Ռոստով: Ամբողջ ճամբորդութիւնը մէկ ամիս կը տեսէ: Ռոստովի մէջ Լազեան եւ քանի մը այլ հայ սպաներ – բոլորն ալ Օսմանեան կայսրութենէն - կը փախին եւ իբրեւ փախստական կը սկսին ծառայել Ռոստովի մէկ հիւանդանոցին մէջ, որուն գլխաւոր բժիշկը հայ մըն էր: Անոնց պար-

տականությունն էր հիանալանոցին ամենօրեայ վառելափայտը հայթայթել: Փողոցներուն մէջ այս շրջագայութիւններուն ընթացքին է, որ անոնք կ'իմանան թէ հայ սպաներու խումբը Ռոստովէն ետք աքսորուած է Ռիզէն քաղաքը (*Մոսկուայի հարարը*): Աւելի ուշ կ'իմանան, թէ խորհրդային Հայաստանի մէջ կայունութիւնը վերահաստատուած է եւ բռնութիւնները յարաբերաբար դադարած են: Արդէն իսկ երեք ամիսէ ի վեր Ռոստով էին, երբ կ'իմանան որ աքսորական սպաներէն խումբ մը գնացքով կը վերադառնայ խորհրդային Հայաստան: Լազեանն ու Մկրեանն ալ կը միանան անոնց, նախ կ'իջնեն Թիֆլիս, իսկ հոնկէ ալ՝ խտորջուրցի (*էրզրումի շրջանին մէջ գիւղաքաղաք*) ընկերներու օգնութեամբ, կը հասնին Երեւան:

Լազեան եւ Մկրեան երկար չեն մնար հոս: Անոնք վճռած էին հեռանալ խորհրդային Միութենէն: Դարձեալ խտորջուրցի ընկերներու օգնութեամբ, անոնք կը մեկնին Պաթում, հոնկէ ալ նաւով կը հասնին Պոլիս, ապա Չմիւռնիա, ուր կը գտնուէր նաեւ Նաթալին: 1921 թուականն էր, յունական բանակը գրաւած էր Չմիւռնիան եւ կը յառաջանար դէպի Անատոլիոյ խորերը: Գաբրիէլ ապրուստը ճարելու համար Չմիւռնիոյ մէջ բանուորութիւն կ'ընէր: Բայց երբ Չմիւռնիա կը հասնի Չօրավար Թորգոմը եւ Գաբրիէլը կը զինուորագրէ իբրեւ փորձառու զինուորական իր ղեկավարած Հայկական լեգէոնին (*պաշտօնական անունով՝ յունական բանակի հինգերորդ հայկական գումարտակ*), նախ իբրեւ զինուորական գրաքննութեան բաժնի պաշտօնեայ, ապա իբրեւ սպայի աստիճանով զինուորական:

Օգոստոս 1922-ին, յունական բանակը սկսած էր արագընթաց նահանջել բոլոր ճակատներուն վրայ եւ թրքական զօրքերը կը պատրաստուէին մտնել Չմիւռնիա: Այս պայմաններուն մէջ, Օգոստոս 22-ին, Գաբրիէլ եւ Նաթալի ճամբորդելու արտօնագիր ձեռք կը բերեն եւ կը հասնին Փիրեայի Նաւահանգիստը, Յունաստան:

Գաբրիէլ Լազեանի լրագրական, հրատարակչական եւ կուսակցական գործունեութիւնը

Աթէնք (1922-1939)

1924-ին կը ծնի իրենց միակ դուստրը՝ Այտան: Նաթալին սկզբնական շրջանին հայերէն բնաւ չէր գիտեր: Գաբրիէլին հետ հաղորդակցութիւնը կը կատարուէր ֆրանսերէնով: Սակայն ամէն ճիգ կը թափէ լեզուն սորվելու, իր շրջապատին մէջ լսած հայերէն անձանօթ բառերը գրի կ'առնէր եւ անոնց իմաստը ամուսինին կը հարցնէր: Վերջաւորութեան ան կը սկսի լաւապէս տիրապետել հայերէնին:

Աթէնքի մէջ Լազեան պիտի կերտէր իր կեանքի երկրորդ հանգրուանը, որ ամբողջութեամբ նուիրուած պիտի ըլլար հանրային-հրապարակագրական-կուսակցական ասպարեզին: 1922-էն 1939-ը ան գործած եւ ապրած է Աթէնքի մէջ, իսկ 1939-էն






Դաշնակցական ընկերներ Գոքինիոյ մէջ: Գետին նստած ճիշդ կեդրոնը՝ Գաբրիէլ Լազեան:

1959-ը՝ Գահիրէի մէջ:

Աթէնքի մէջ իրենց առաջին հասցէն կ'ըլլայ «Է-րիպիտոն» փողոցը, ուր սենեակ մը կը վարձեն պանդոկի մը մէջ: Աթէնքի հայկական կեանքը հայ գաղթականներու գանգուածային ժամանումէն ետք նոր սկիզբ մը առած էր, ամէն ինչ անկազմակերպ էր: Լազեանն ու դաշնակցական իր ընկերները անմիջապէս կը ձեռնարկեն կուսակցական կառոյցներ ստեղծելու Աթէնքի եւ շրջակայքին մէջ: Այս իմաստով կը յիշատակուի 7 Դեկտեմբեր 1922-ին գումարուած կուսակցական հիմնադիր ժողով մը, որ տեղի կ'ունենայ Աթէնքի Զումունտուրու հրապարակին վրայ գտնուող սրճարանի մը մէջ, ներկայութեամբ Անտոն Կազէլի, Գարեգին Մարգարեանի, Արամ Շիրինեանի եւ Պատուելի



Համահայկական Ողիմպիական խաղեր, Աթէնքի Ֆիքս թաղամասին մէջ: Նստած, ձախէն առաջինը՝ Գրիգոր Բարադամեան, Առաջնորդ Կարապետ արք. Մազլումեան, Պատրիկ Սարգիսեան (Հ.Մ.Շ.Մ.ի ատենապետ), Գերապայծառ Յովսէփ Խանցեան, Հայր Յովհաննէս վրդ. Կամսարական (հայ կաթողիկէ), Գեորգ Կառվարենց, Գաբրիէլ Լազեան, Լազեանի ճիշդ ետեւը կանգնած աղջիկը՝ Այտա Լազեան:



Գաբրիել Լազեանի հրատարակած պատմական վերլուծական գիրքերը Հայ դատի վերաբերյալ

Յարութիւն Աճեմեանի: 1923-ին կուսակցութիւնը կը հիմնէ լատին իր պաշտօնաթերթը՝ «Նոր Օրը», որուն խմբագրական կազմի առաջին անդամները կ'ըլլան Գաբրիել Լազեան, Աստուհ Կազէլ, Արամ Շիրինեան եւ Պողոս Սվաճեան: Սկզբնական շրջանին անկախ շարաթաթերթ էր: Թերթին առաջին հասցէն էր Աթենքի Բերիքլուս փողոցը: Հոն գտնուող Փարասքեաս Լէնինսի տպարանին մէջ կը վարձեն անկիւն մը, որ փաստօրէն կը դառնայ թերթին առաջին խմբագրատունը եւ գրաշարատունը: Նաթալին կրաւորական դերակատար մը չէր Գաբրիելի հրատարակագրական գործունեութեան մէջ: Ան էր, որ կը դիմէ յոյն սպայ բարեկամներու միջնորդութեան, որպէսզի ամուսինը յունական հպատակութիւն ձեռք բերէ: Այս մէկը հազուադէպ բան մըն էր Յունաստան հաստատուած հայ գաղթականներուն համար: Անոնց բացարձակ մեծամասնութիւնը իրենց յունական հպատակութիւնը պիտի ստա-




«Նոր Օր»-ի առաջին թիւը 25 Մարտ 1923-ին



Նաթալի Լազեան-Իրնուսիտու եւ Գաբրիել Լազեան Աթենքի Սիւստադմա հրատարակչին վրայ

Նային միայն 1960-ականներուն, մինչ Գաբրիել զայն կը ստանայ 1930-ականներու սկիզբը: Յունական քաղաքացի ըլլալէ ետք, Գաբրիել կը դառնայ «Նոր Օր»-ի պաշտօնական արտօնատերը: Թերթին խմբագրապետն էր Աստուհ Կազէլ, իսկ գրաշարապետը՝ Ահարոն Ստեփանեանը: Հիմնադիր այս անդամները կը յաջողին Պոլսոյ մէջ Նախապէս հրատարակուած դաշնակցական «Ճակատամարտ» թերթի խմբագրատունէն եր-




Խմբակարգ Հ.Յ.Դ. 9-րդ Շրջանային ժողովի, որ գումարուած է Գողինիոյ մէջ 10 Յուլիս 1932-ին: Նստած, ձախէն աջ՝ անծանօթ, Միհրան Փափազեան, Հրանդ Դարպասեան, անծանօթ, Շաւարշ Միսաքեան, Սօս Վանի, Կարօ Գերրգեան, Սկրտիչ Փափազեան, Գերրգ Կառվարենց: Ոտքի, մէջտեղի շարք, ձախէն աջ՝ Միլաս Թովմեան, Անտոն Կազէլ, Կարօ ՏԵՕՐՄԷՃԵԱՆ, Մանուէլ Սավոյեան, Մեղրակ Գոհարունի, Տոքթ. Եղիա Արշակունի, անծանօթ, անծանօթ, Յովհաննէս Չաքրրեան, անծանօթ, Գաբրիէլ Լազեան, Յարութիւն Սուրառեան: Ամենէն ետեւի շարք, ոտքի, ձախէն աջ՝ Միհրան Ամիրեան, անծանօթ, Նազարէթ Հովարտեան, Մանուկ Մանուկեան:

կու տուի հայերէն տպագրական տառեր Աթէնք բերել: «Նոր Օր»-ի առաջին թիւը (երկու էջ) լոյս կը տեսնէ, Կիրակի, 25 Մարտ 1923-ին՝ Յունաստանի Անկախութեան տարեդարձի օրը:

Նաթալին Էր թերթին վարչական գործերը կատարողը: Ան Էր, որ ստանձնած էր թերթին արտօնագիրը պետական մարմիններէն ձեռք ձգելու ծանր աշխատանքը: Այն ժամանակ երբ «Նոր Օր»-ի խմբագրներուն մէջ յունաստանցիներ չկային, Նաթալին Էր, որ յունական թերթերու յունարէնով լոյս տեսած տեղական կարեւոր լուրերը ֆրանսերէնի կը թարգմանէր, հետագային ալ անոնք հայերէնով լոյս կը տեսնէին հայկական թերթին մէջ: Նաթալի Նոյն ժամանակ ալ լծուած էր հայ գաղթականները օգնելու աշխատանքին: Աթէնքի իր պանդոկի փոքր սենեակին մէջ դիմումներ կը դրկէր Պոլսոյ հայկական թերթերուն, կու տար անունները իրենց հարազատները փնտռող հայերուն եւ սոյն ազդերը լոյս կը տեսնէին պոլսական հայկական թերթերուն մէջ:

«Նոր Օրը» արագ յաջողութիւն կը գտնէ Յունաստանի հայկական համայնքին մէջ: Կարճ ժամանակի ընթացքին շաբաթաթերթը կը վերածուի երկօրեայի, իսկ 1 Յունուար 1924-էն սկսեալ՝ օրաթերթի: Անոր հրատարակութիւնը առանց դադարի կը շարունակուի մինչեւ Երկրորդ համաշխարհային պատերազմի բռնկումը: «Նոր Օր»-ի գրասենեակը կարեւոր ժամադրաւայր մը կը դառնայ Աթէնքի կեդրոնին մէջ: Յատկապէս երեկոները, հոն կու

գային մտաւորականներ, գաղափարակից ընկերներ եւ միասին կը քննէին հրատապ խնդիրներ: Արամ Շիրինեան եւ Պօղոս Սվաճեան երկար չէն մնար Յունաստան եւ կը գաղթեն արտասահման: Այնուհետեւ թերթին պատասխանատուութիւնը ամբողջապէս կ'անցնի Գաբրիէլ Լազեանի եւ Անտոն Կազելի: Միայն 1940-ին է, որ Յունաստանի մէջ մենատիրական վարչակարգ հաստատած Իոաննիս Մեթաքսասի իշխանութեան օրերուն որոշում կ'անուի բոլոր ոչ-յունական թերթերը փակել: Այս ձեւով «Նոր Օր»-ն ալ 17 տարի անընդհատ հրատարակուելէ ետք, կը ստիպուի դադարեցնել տպագրութիւնը: Բ. Համաշխարհային պատերազմի աւարտէն ետք, անկապ կը վերաբացուի «Ազատ Օր» անունով, սկիզբը երկօրեայ, ապա իբրեւ օրաթերթ: Այս թերթը պաշտօնական սեփականութիւնը կը դառնայ Հ.Յ.Դաշնակցութեան եւ մինչեւ օրս ալ կը շարունակէ հրատարակուիլ իբրեւ յունահայ համայնքի միակ օրաթերթը: Գաբրիէլ Լազեան եւ «Նոր Օր»-ի շուրջ հաւաքուած խումբը կարեւոր դեր կ'ունենան աշխարհով մէկ սփռուած վերապրող հայերու հարազատներ գտնելու ճիգին մէջ: Թերթի էջերուն մէջ ամէն օր կը հրապարակուէին Տեղասպանութենէն վերապրողներու անուանացանկեր, Նոյնպէս կը տպուէին թուրք-յունական պատերազմի օրերուն Թուրքիոյ մէջ բանտարկուած, ապա ազատ արձակուած եւ իրենց հարազատները փնտռող հայերու անունները: «Նոր Օր»-ի տպարանէն լոյս կը տեսնեն



Գաբրիել Լազեան «Յուսաբեր» տպարանին մէջ, Գահիրէ, 1950-ականներ

Նաեւ թագմաթիւ հայերէն գիրքեր՝ բանաստեղծական հատորներ, վէպեր, յուշեր, թարգմանական գրականութիւն, եւայլն:

Գաբրիել Լազեան աշխուժ գործունէութիւն կ'ունենայ նաեւ յունահայ համայնքի կուսակցական կազմակերպական կեանքին մէջ: Իր մասնակցութիւնը բերած է Հ.Յ.Դ. պատանեկան եւ երիտասարդական միութիւններու հիմնադրութեան, ինչպէս նաեւ Հ.Ս.Ը.Մ.-ի մարզական-սկստական գործունէութեան: Ան միաժամանակ եղած է յունահայ համայնքի Ազգային Կեդրոնական վարչութեան անդամ:

Եգիպտոս, Գահիրէ (1939-1959)

1939-ի սկիզբները Գաբրիել Լազեան եւ ընտանիքը կը ձգեն Յունաստանը եւ կը տեղափոխուին Գահիրէ, Եգիպտոս: Լազեան ընտրուած էր Հ.Յ.Դ. գերագոյն մարմինին՝ Բիւրոյի անդամ: Գահիրէի մէջ ան կը միանայ «Յուսաբեր» օրաթերթի խմբագրութեան եւ կը ստանձնէ թերթին վարչական պատասխանատուութիւնը:

Նաթալի Լազեան-Իքոնոմիտու 1995-ին իր հետ կատարուած հարցազրոյցի մը ընթացքին կը յայտնէ թէ 1948-ին ինքն ալ միացած է Հ.Յ.Դ.աշխարհային կոնգրէսին:

Եգիպտոսի մէջ է, որ Գաբրիել Լազեան կը գրէ եւ կը հրատարակէ բազմաթիւ գիրքեր.

«Հայաստան եւ Հայ Դատը ըստ դաշնագրերու» (Գահիրէ, 1942, 264 էջ), «Յեղափոխական դէմքեր» (Գահիրէ, 1945, 414 էջ), «Հայաստան եւ Հայ Դատը» (Գահիրէ, 1946, 392 էջ), «Դէմքեր հայ ազատագրական շարժումէն» (Գահիրէ, 1949, 397 էջ), «Հայաստան եւ Հայ Դատը» (Գահիրէ, 1957, 442 էջ), «Հայաստան եւ Հայ Դատը՝ հայ-ռուս յարաբերութիւններու լոյսին տակ» (1957), «Հայուհին եւ հայ յեղափոխութիւնը» (Գահիրէ, 1959, 23 էջ) Գաբրիել Լազեան իր մասնակցութիւնը կը բերէ Հ. Յ. Դաշնակցութեան վեց ընդհանուր ժողովներու: 1938-էն սկսեալ եւ մինչեւ իր մահը, ան մաս կազմած է Հ.Յ.Դ. Բիւրոյին:

